



İRƏVONİ DOVLƏTƏ UNİVERSİTET

HAKOB AVÇYAN
VARDAN VOSKANYAN

TOLIŞƏ ZIVONİ DƏRSƏ KİTOB

YEREVAN STATE UNIVERSITY

HAKOB AVCHYAN
VARDAN VOSKANYAN

MANUAL OF TALYSHI

İRƏVON
İDU NƏŞRİYOT
2022

YEREVAN
YSU PUBLISHING HOUSE
2022

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ԱՎԶՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ԹԱԼԻՇԵՐԵՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 811.223.1(075.8)

ԳՄԴ 81.521g73

Ա 798

Գրախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Մովսիսյան, Յասեր Քարամզադե

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Արտյոմ Տոնոյան

Հակոբ Ավչյան, Վարդան Ոսկանյան

Ա 798 Թալիշերենի դասագիրք: Ավչյան Հ., Ոսկանյան Վ.: -Եր.: ԵՊՀ հրատ., 2022, 214 էջ:

Դասագիրքը նախատեսված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններում և գիտական կենտրոններում թալիշերենի ուսումնասիրությամբ զբաղվող արևելագետների, իրանագետների, ադրբեջանագետների, լեզվաբանների և թալիշերենով ու իրանական լեզուներով հետաքրքրված մասնագետների լայն շրջանակների համար: Քսանյոթ դասից և թալիշերեն-հայերեն, հայերեն-թալիշերեն համառոտ բառարաններից բաղկացած դասագրքում համապարփակ ներկայացված են թալիշերենի ձևաբանությունն ու շարահյուսությունը, բառապաշարային հիմնական ֆոնդը, դարձվածաբանական միավորները և անհրաժեշտ ուսումնական այլ նյութեր:

ՀՏԴ 811.223.1(075.8)

ԳՄԴ 81.521g73

ISBN 978-5-8084-2568-2

© ԵՊՀ հրատ., 2022

© Ավչյան Հ., Ոսկանյան Վ., 2022

ՆԱԽԱԲԱՆ

Թալիշերենը (tolışə zivon) իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին պատկանող հնդեվրոպական լեզու է և նորագարիական (հարավ-թաթական) բարբառների, գիլաներենի, մազանդարաներենի, զազայերենի և գուրանիի հետ մտնում է մերձկասպյան իրանական լեզուների ենթախմբի մեջ:

Այն ավանդաբար բաժանվում է երեք բարբառային խմբի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Այստեղ բաժանման հիմքում ընկած են թալիշական տարբեր բարբառների և խոսվածքների աշխարհագրական տարածվածությունը, սակայն այսպիսի բաժանումը նաև արտահայտում է ինչպես այդ բարբառների միջև առկա տարածքային, այնպես էլ լեզվաբանական՝ հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական տարբերությունները:

Թալիշական տարբեր բարբառների ու խոսվածքների առկայության և դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին առաջին անգամ բարձրաձայնում է պրոֆեսոր Բորիս Միլլերը դեռևս 1925թ. իր զեկույցում, որտեղ նա մասնավորապես նշում է. «Ինձ տեղեկություններ հայտնողները մարդիկ էին, որոնք անձամբ էին իրենց գործերով հասել մինչև առափնյա Էնզելի, և դրա հետ մեկտեղ նրանք այնքան լավ էին տիրապետում թալիշերենին, որ անգամ կարողացել էին որսալ բարբառային տարբերությունները [...]: Նրանց խոսքերով՝ Քերգերիից հարավ՝ Ասալիմում և Թալիշդուլաբում, թալիշերենը զգալիորեն տարբերվում է այն թալիշերենից, որը գերիշխում է հյուսիսում՝ ներառյալ խորհրդային Թալիշում: Սակայն ամեն դեպքում Լենքորանի բարբառին ծանոթ մարդը կարող է թալիշերենով հանգիստ բացատրվել ամբողջ առափնյա շրջանում՝ մինչև Էնզելի» [Миллер 1925: 8]: Այսպիսով, Բ. Միլլերը, փաստորեն, դնում է թալիշերենի բարբառային բաժանման հիմքը՝ առանձնացնելով երկու բարբառախումբ՝ հյուսիսային և հարավային՝ հետագայում ևս անդրադառնալով դրանց միջև առկա որոշ բառապաշարային տարբերությունների [տե՛ս Миллер 1930: 53]: Թալիշերենի բարբառային նման բաժանումը ռուսալեզու գրականության մեջ մնում է տիրապետող ընդհուպ 1991թ., երբ Լիա Պիրեյկոն ևս, իր աշխատանքում հղում կատարելով

Բ. Միլլերին, խոսում է թալիշական երկու՝ հյուսիսային և հարավային բարբառախմբերի մասին [տե՛ս Пирейко 1991: 91]:

Ներկայումս ընդունված և առավել ստույգ հյուսիսային-կենտրոնական-հարավային բարբառային բաժանման հիմքը դնում է ֆրանսիացի արևելագետ Մարսել Բազենը 1980թ. լույս տեսած “Le Tâlech” արժեքավոր աշխատության մեջ. անդրադառնալով թալիշերենում հնչյունական, քերականական և բառապաշարային որոշ տարբերությունների՝ նա նշում է. «Բայց հյուսիսային ու հարավային ձևերի միջև սահմանագիծը չի անցնում նույն կերպ տարբեր դեպքերում. այսպիսով, առկա է լեզվի աստիճանական փոփոխություն՝ նոր հատկանիշների ի հայտ գալով՝ ծայրահարավային ձևից աստիճանական անցմամբ մինչև Խորհրդային տարածքի ծայրհյուսիսային ձև» [Bazin 1980: 70]: Այստեղ թեև հեղինակը բառացիորեն չի նշում կենտրոնական բարբառախմբի մասին, այնուամենայնիվ հստակորեն մատնանշում է հարավային և հյուսիսային բարբառախմբերի միջև առկա միջանկյալ բարբառների ու խոսվածքների առկայությունը: Իսկ արդեն 1996թ. իրանցի ականավոր լեզվաբան և գրականագետ Էհսան Յարշաթերը Ասալեմի թալիշական բարբառին նվիրված իր ծավալուն հոդվածում այն անվանում է «թալիշական բարբառների մեջ թե՛ աշխարհագրական, թե՛ լեզվաբանական տեսակետներից կենտրոնական դիրք գրավող» բարբառ [Yarshater 1996: 83]:

Բազենի ուսումնասիրությունից մեկ տարի անց՝ 1981թ., Դոնալդ Ստիլոն “Iranian Studies” հանդեսում հրապարակում է ուշագրավ ու կարևոր մի հոդված՝ նվիրված թաթական լեզվախմբին և դրա բարբառային բաժանմանը, որտեղ հեղինակը աշխարհագրական ու լեզվաբանական հատկանիշների հիման վրա «թաթական տիպի» լեզուները բաժանում է տասը խմբի՝ թալիշական բարբառները ընդգրկելով երկրորդ խմբի մեջ, ապա ավելի հստակեցնելով իր բաժանումը՝ առանձնացնում է չորս խումբ՝ հյուսիսային թաթական լեզուներ, կենտրոնական թաթական լեզուներ, հարավային թաթական լեզուներ և անցումային թաթական լեզուներ՝ հյուսիսային թալիշերենը դասելով վերոնշյալ լեզվախմբերից առաջին, իսկ կենտրոնական և հարավային թալիշական բարբառները՝ երկրորդ խմբի լեզուների շարքին [Stilo 1981: 139-141]:

Անդրադառնալով թալիշերենի բարբառներին՝ դրանք երեք խմբի (հյուսիսային, կենտրոնական և հարավային) են բաժանում նաև Գառնիկ

Ասատրյանը և Հաբիբ Բորջյանը՝ նշելով, որ հյուսիսային-հարավային բաժանումը պայմանավորված է զուտ վարչական բաժանմամբ և չի արտահայտում լեզվական իրողությունը, այնինչ այդ երկու խմբերի միջև առկա է կենտրոնական թալիշական բարբառների ու խոսվածքների մի ամբողջ շղթա [Asatrian, Borjjan 2005: 53]:

Հարկ է նշել, որ հյուսիսային թալիշերենը իր հերթին բաժանվում է մի քանի խմբի, որոնց միջև գոյություն ունեն չնչին տարբերություններ հնչյունաբանության, ձևաբանության և բառապաշարի ոլորտներում: Այսպես, Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշերենը բաժանվում է 4 հիմնական խմբի՝ Լենքորանի, Լերիքի, Ասթարայի և Մասալլիի [Пирейко 1976: 351; Пирейко 1991: 91]:

Թալիշների բնակության տարածքը՝ Թալիշ երկրամասը կամ Թալիշստանը, տեղակայված է Կասպից ծովից հարավ-արևմուտք և հարավ-արևելքից դեպի հյուսիս է ձգվում մոտ 150 կիլոմետր [Asatrian, Borjjan 2005: 43]: Թալիշների բնակության այս արեալը ի վերջո որոշակի պատմական զարգացումների արդյունքում բաժանվում է երկու պետությունների՝ Ադրբեջանական Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև, ինչի հետևանքով էլ թալիշ ժողովրդի երկու հատվածներ հայտնվում են սահմանի տարբեր կողմերում: Թալիշների թվաքանակի, հետևաբար նաև թալիշերենի տարածման վերաբերյալ ստույգ տվյալներ ստանալը բավական բարդ խնդիր է թե՛ Ադրբեջանական Հանրապետությունում, թե՛ Իրանի Իսլամական Հանրապետությունում ճշգրիտ մարդահամարների բացակայության պատճառով: Այսպես, ըստ 1891թ. Ռուսական կայսրությունում անցկացված մարդահամարի տվյալների, Բաքվի նահանգում, որը զբաղեցնում էր ժամանակակից Ադրբեջանական Հանրապետության արևելյան մասը, թալիշների թիվը կազմում էր 88 449 մարդ [Кавказский календарь 1893: V-228-229]: Բ. Միլլերը, 1925թ. սեպտեմբերին իր գեկույցում անդրադառնալով Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող թալիշներին, նշում է, որ նրանք բնակվում են հիմնականում Լենքորանի վարչաշրջանում, որտեղ հյուսիսում թյուրքական և թալիշական բնակավայրերի միջև սահմանը գլխավորապես անցնում է Վիլաժայ (Վիլյաշայ) գետով, իսկ թալիշների տարածվածության արևմտյան սահ-

մանը հիմնականում համընկնում է Թալիշական լեռնաշղթային [Миллер 1925: 3-4]: Ընդ որում՝ հեղինակը կասկածի տակ է դնում այդ տարիներին թալիշների թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները՝ 66 000 – 67 000, նշելով, որ, ըստ իր հավաքած նյութերի, թալիշների թիվը առնվազն 80 000 է [Миллер 1925: 4-5]: Ադրբեջանի տարածքում խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1926թ. մարդահամարից սկսած, թալիշների թիվը (77 039), ըստ այդ տվյալների, հետզհետե նվազում է՝ ընդհանրապես վերանալով 1979թ. մարդահամարում [Asatrian, Borjjan 2005: 45]: Թալիշների թվաքանակի վերաբերյալ տվյալների աղճատումը շարունակվում է նաև անկախ Ադրբեջանական Հանրապետությունում. ըստ 2009թ. մարդահամարի տվյալների թալիշները կազմում են Ադրբեջանական Հանրապետության բնակչության 1.26%-ը՝ 112 000 [Марджанян 2011: 31]: Այս թիվը, բնականաբար, խիստ նվազեցված է, ինչի մասին վկայում են նաև արևմտյան ուսումնասիրողների իրականացրած հետազոտությունները: Այսպես, ըստ 2005թ. գիտական հետազոտության՝ Ադրբեջանական Հանրապետությունում թալիշների բնակչության արեալը հյուսիսում սկսվում է Վիլյաշ գետից՝ ձգվելով դեպի իրանական սահմանը՝ հարավում, իսկ արևելքում այդ սահմանն սկսվում է Կասպից ծովից՝ հասնելով մինչև իրանական սահման արևմուտքում: Այս տարածաշրջանում են գտնվում հինգ շրջաններ՝ Ասթարայի, Լենքորանի, Լերիքի, Մասալիի և Յարդիմիի, որտեղ կա մոտ 350 թալիշական բնակավայր [Clifton, Tiessen, Deckinga, Lucht 2005: 3]: Հետազոտության մեջ մանրամասն ներկայացվում են նաև տվյալներ այդ շրջանների և դրանցում թալիշախոս բնակչության թվի վերաբերյալ [տե՛ս Clifton... 2005: 10-13]: Այդ տվյալների անգամ ամենամոտավոր հաշվարկները ցույց են տալիս, որ այժմ Ադրբեջանական Հանրապետությունում գտնվող միայն թալիշաբնակ շրջանում՝ Թալիշստանում, այս ժողովրդի թվաքանակը նվազագույնը պետք է կազմի 400 000 և ավելի:

Իրանում թալիշները համախումբ բնակվում են հիմնականում երկու նահանգներում՝ Գիլանում (Ասթարա, Թալիշ, Ռեզվանշահր, Մասալ, Ֆուման շահրեսթաններում) և Արդաբիլում (հիմնականում Նամինում, ինչպես նաև Խալխալ և Բիլեսավար շահրեսթաններում):

Թալիշերենի ուսումնասիրությունը, սկսվելով 19-րդ դարի առաջին կեսերին, հատկապես լայն թափ է ստանում 20-րդ դարի կեսերից, երբ Խորհրդային Միությունում լույս են տեսնում այս լեզվին նվիրված մի շարք արժեքավոր հետազոտություններ:

1834թ. լույս է տեսնում Ճանապարհորդ և գիտնական Էդուարդ Էյխվալդի “Reise auf Dem Caspischen Meere und in den Caucasus” աշխատությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է նաև թալիշերենի թվականները, ինչպես նաև 34 թալիշերեն բառ՝ պարսկերենի ու գիլաներենի համեմատությամբ [Eichwald 1834: 435-437]: Այնուամենայնիվ, թալիշերենի ուսումնասիրության սկիզբը պետք է կապել լեհ բանաստեղծ, սլավոնագետ և իրանագետ Ալեքսանդր Խոձկոյի անվան հետ, որը 1842թ. Լոնդոնում լույս է ընծայում իր “Specimens of the popular poetry of Persia” աշխատությունը, որտեղ հեղինակը նախ համառոտ անդրադառնում է թալիշների ծագմանը և կենսակերպին, ապա ներկայացնում է իր հավաքած թալիշական 15 երգ՝ տալով դրանց թարգմանությունները [Chodzko 1842: 506-510] և հանգամանորեն քննարկելով բառապաշարը [Chodzko 1842: 556-567]: Ա. Խոձկոն նաև անդրադառնում է թալիշերենի հնչյունական համակարգին՝ այն անվանելով «պարսկական լեզուների իտալերեն» [Chodzko 1842: 507] և նշելով, որ «բոլոր ձայնավորները պետք է արտասանել ինչպես իտալերենում, իսկ բաղաձայնները՝ ինչպես անգլերենում» [Chodzko 1842: 556]:

Ա. Խոձկոյի նյութերի հիման վրա մոտ տասը տարի անց՝ 1853թ., հրատարակվում է Կազանի համալսարանի պրոֆեսոր Ի. Բերեզինի՝ երեք մասից բաղկացած “Recherches sur les dialects persans” աշխատությունը, որտեղ հեղինակն անդրադառնում է թալիշերենի քերականությանը [Berésine 1853, I: 24-] և զետեղում մոտ 220 բառից բաղկացած ֆրանսերեն-թալիշերեն բառարան՝ մյուս մասերում ներառելով նաև Խոձկոյի հավաքած երգերը [Berésine 1853, II: 38-46] և 200 բառից բաղկացած պարսկերեն-թալիշերեն-գիլաներեն-մազանդարաներեն բառարան [Berésine 1853, III: 2-7]: Այս աշխատանքը ուղիղ մեկ հարյուրամյակ հետո սուր քննադատության է ենթարկվում Բորիս Միլլերի կողմից. ըստ նրա՝ Ի. Բերեզինի աշխատանքում ոչ միայն վատ է ներկայացված թալիշերենի քերականությունը, հատկապես

բայական համակարգը, այլն բառերը գրեթե ամբողջությամբ աղավաղված են և չեն համապատասխանում այս լեզվի հնչյունական համակարգի կանոններին [Миллер 1953: 14-15]: Գրեթե նույն ժամանակահատվածում՝ 1855թ., լույս է տեսնում ռուս լեզվաբան Պ. Ռիսսի՝ երեսուն էջից բաղկացած թալիշերենի քերականությունը՝ հիմնված հեղինակի՝ Լենքորանում և Ասթարայում իրականացրած դաշտային աշխատանքների ընթացքում հավաքած լեզվական նյութի վրա: Այս ուսումնասիրության մեջ Պ. Ռիսսը քերականությունից բացի, ներկայացնում է նաև մոտ 250 թալիշական բառ՝ գոյականներ և ածականներ, 70 բայ, 40 նախադասություն, բանահյուսական այլ նյութեր [Умняшкин 2011: 137]:

Թալիշերենի ուսումնասիրությամբ էր զբաղվում նաև հայտնի իրանագետ, Սանկտ-Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի անդամ Բ. Դորնը: Կասպից ծովի հարավային ափերին ճամփորդելիս նա 1860-1861թթ. լինում է Լենքորանում և հավաքում է նաև թալիշերենի լեզվական նյութ, ապա Թբիլիսիում ուսումնասիրում թալիշերեն Իբրահիմ Բեկի օգնությամբ [Миллер 1953: 17]: Բ. Դորնի՝ թալիշերենին նվիրված ուսումնասիրությունները այդպես էլ չեն հրապարակվում, թեև, համաձայն որոշ աղբյուրների, դրանք պահվում են Ռուսաստանի ազգային գրադարանում [Asatrian, Borjjan 2005: 58]:

Փարիզում 1904թ. լույս է տեսնում մասնագիտությամբ ինժեներ Ժաք դը Մորգանի “Mission scientifique en Perse” ուսումնասիրության հինգերորդ հատորը, որը հիմնված էր հեղինակի գլխավորությամբ ֆրանսիական հնագիտական խմբի՝ 1889-1891թթ. Իրանում, այդ թվում՝ Թալիշում, հավաքած նյութերի վրա: Երկու մասից բաղկացած այս աշխատանքի առաջին մասը հիմնականում նվիրված է քրդական բարբառներին ու խոսվածքներին: Երկրորդ մասը նվիրված է իրանական այլ լեզուների և բարբառների: Թալիշերենին հեղինակը հատկացրել է մոտ 27 էջ [Morgan 1904: 261-268], որտեղ նա ներկայացնում է Լենքորանի և Քերզանոուլի թալիշական բարբառների 769 միավորից բաղկացած բառացանկ, 20 կարճ նախադասություններ՝ ֆրանսերեն թարգմանությամբ, ինչպես նաև 4 բայի խոնարհման հարացույց, արաբատառ թալիշերեն տեքստ [Миллер 1953: 23]:

Այդ տարիներին Ստրասբուրգում հրատարակվում է նաև “Grundriss der Iranischen Philologie” (1895-1901) մեծարժեք աշխատությունը, որտեղ գերմանացի հայտնի հնդիրանագետ Վիլհելմ Գայգերը «Մերձկասպյան փոքր բարբառներ» խորագրի ներքո անդրադառնում է մագանդարաներենին, գիլաներենին, թաթերենին, թալիշերենին՝ քննության առնելով դրանց հնչյունաբանությունը և ձևաբանությունը [Geiger 1898-1901: 344-380]: Վ. Գայգերի աշխատանքի մեթոդները, ինչպես նաև “Grundriss”-ում թալիշերենի հնչյունաբանությանը ու ձևաբանությանը նվիրված ուսումնասիրությունը Բ. Միլլերը սուր քննադատության է ենթարկում՝ աշխատանքում ներկայացված տվյալները որակելով անբավարար և «որևէ գիտական արժեք չներկայացնող» [մանրամասն տե՛ս Миллер 1953: 19-22]:

Թալիշերենի ուսումնասիրությունը նոր ակտիվ փուլ է թևակոխում հատկապես Խորհրդային Միության տարիներին՝ 20-րդ դարի առաջին քառորդից: Այս փուլը առաջին հերթին կապվում է հենց ռուս իրանագետ պրոֆեսոր Բորիս Միլլերի անվան հետ: Դեռևս ուսանողական տարիներին՝ 1902թ. , Բ. Միլլերը այցելում է Թալիշ և ամռան ամիսներին թալիշերենի վերաբերյալ հարուստ նյութ է հավաքում Թեյմուր բեկ Բայրամ Ալիբեկովի օգնությամբ [Миллер 1930: III]: Երկրորդ անգամ Բ. Միլլերը արդեն Թալիշում լինում է 1925թ.՝ շրջելով երկրամասի մեծ մասում: Հաջորդ տարի՝ 1926թ., Բաքվում լույս է տեսնում հեղինակի՝ 1925թ. սեպտեմբերի 14-ին կարդացած զեկույցը իր Թալիշ այցելության մասին՝ “Предварительный отчет о поездке в Талыш летом 1925г.”, որտեղ Բ. Միլլերը հանգամանորեն ներկայացնում է Թալիշում կատարած իր աշխատանքները, ինչպես նաև անդրադառնում թալիշերենի ուսումնասիրությանը նվիրված նախորդ աշխատանքներին [Миллер 1926]: 1930թ. Մոսկվայում հրատարակվում է Բ. Միլլերի “Талышские тексты” արժեքավոր աշխատությունը՝ գրված հեղինակի 1902 և 1925 թվականներին Թալիշ կատարած այցելությունների ընթացքում հավաքած նյութերի հիման վրա: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց հիմնական բաժիններից, որտեղ ներկայացված են կարճ պատմվածքներ, երգեր, հեքիաթներ, ասացվածքներ, բանահյուսական այլ նյութեր: Ուսումնասիրության վերջում զետեղված է թալիշերեն-ռուսերեն-ֆրանսերեն բառարան [Миллер 1930: 206-261]՝ բաղկացած ավելի քան 2000 բառից: «Թալիշական տեքստերի»

հրատարակումից մոտ քառորդ դար անց՝ 1953թ., Բ. Միլլերը երկար տարիների տքնաջան աշխատանքից հետո Մոսկվայում հրատարակում է իր մեծարժեք ու կարևոր ուսումնասիրությունը՝ “Талышский язык” գիրքը, որը նույնիսկ ավելի քան կես դար անց էլ համարվում է հյուսիսային թալիշերենին նվիրված ամենահիմնարար աշխատությունը։ Այս ուսումնասիրության մեջ պրոֆեսոր Բ. Միլլերը հանգամանորեն ներկայացնում է Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող հյուսիսային թալիշական բարբառների հնչյունաբանությունը և ձևաբանությունը՝ համաժամանակյա և տարածամանակյա կտրվածքներով, անդրադառնում բառապաշարին, ինչպես նաև իրանական լեզվաճյուղում թալիշերենի տեղին։ Բացի այդ՝ գիրքն ունի 4 հավելված, որոնք ընդգրկում են թալիշերեն թարգմանություններ կոմունիստական կուսակցության մանիֆեստից, Ի. Ստալինի զեկույցներից մեկից, հոդվածներ “Seyna sor” («Երրորդ տարի») գրքույկից և թալիշերենի ու ազարի լեզվի մասին հոդված, որտեղ բերվում են նաև Ա. Քասրավիի կողմից ներկայացված 14 քառյակ (դուբեյթի) ազարի լեզվով՝ գրված Շեյխ Սաֆի-ադ-Դին Արդաբիլիի կողմից մայրենի բարբառով։

Թալիշերենի ուսումնասիրությամբ է զբաղվել նաև ռուս իրանագետ Վալենտինա Սոկոլովան, որը հիմնականում հետազոտում էր գրային ավանդույթ չունեցող իրանական լեզուները։ Այցելելով Լենքորան՝ նա գրի է առնում մի շարք թալիշական տեքստեր։ Հետագայում՝ Բորիս Միլլերի հետ գրեթե միաժամանակ՝ 1953թ., Վ. Սոկոլովան լույս է ընծայում իր՝ երկու հատորից բաղկացած “Очерки по фонетике иранских языков” ուշագրավ մենագրությունը, որի առաջին հատորում բելուջերենի, քրդերենի և թաթերենի կողքին հանգամանորեն ներկայացվում է նաև թալիշերենի հնչյունական համակարգը [Соколова 1953]։

Թալիշագիտության զարգացման և թալիշերենի ուսումնասիրման մեջ մեծ է Բ. Միլլերի ուսանողուհու՝ իրանագետ Լիա Պիրեյկոյի ավանդը։ 1966թ. լույս է տեսնում նրա “Талышский язык” գիրքը, ապա տասը տարի անց՝ 1976թ., հրատարակվում է թալիշերենի լավագույն բառարաններից մեկը՝ “Талышско-русский словарь”, որը ներառում է նաև համառոտ ռուսերեն-թալիշերեն բառարան [Пирейко 1976: 269-320], ինչպես նաև լեզվի քերականությանը նվիրված համառոտ ակնարկ [Пирейко 1976: 321-352]։ Ավելի հանգամանորեն և մանրամասն Լ. Պիրեյկոն թալիշերենի

քերականությանը անդրադառնում է նաև 1991թ., երբ լույս է տեսնում “Основы иранского языкознания” մեծարժեք գրքաշարի հերթական հատորը՝ “Новоиранские языки: северо-западная группа, I” [Пирейко 1991: 91-175]:

Թալիշերենի քերականությանը նվիրված համառոտ անդրադարձ կա նաև “Языки мира” գրքաշարի 1999թ. լույս տեսած “Иранские языки, II: северо-западные иранские языки” հատորում: Հոդվածի հեղինակը Ս. Վինոգրադովան է [Виноградова 1999: 89-105]:

Վերջին շրջանում եվրոպական գիտական կենտրոններում հրատարակված ուսումնասիրություններից արժանահիշատակ է գերմանացի լեզվաբան Վոլֆգանգ Շուլցեի “Northern Talysh” հետազոտությունը՝ հրատարակված 2000թ. Մյունխենում: Այն հիմնված է հեղինակի կողմից 1986թ. Բաքվում գրի առնված “Palangi ahvolot” («Պատմվածք ընձառյուծի մասին») պատմվածքի վրա [Schulze 2000: 5]:

Թալիշերենի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Ադրբեջանական ԽՍՀ-ում ծնված, ազգությամբ թալիշ մի քանի գիտնականներ: Այսպես, 1971թ. Նովրուզալի Մամեդովը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Шувинский говор талышского языка» թեմայով: Վերջին շրջանում են հրատարակվել Ա. Ռաջարովի “Талыши и талышский язык” և Ա. Սադիգովի “Грамматика талышского языка” ուսումնասիրությունները, իսկ Ֆախրադդին Աբուզոդան լույս է ընծայել երեք բառարան՝ “English-Talyshi dictionary. A-Z” [Aboszoda 2012]՝ բաղկացած 250.000 բառից և բառակապակցությունից, “Русско-талышский словарь” [Абосзода 2012], որ մոտ 60.000 բառային միավոր է ընդգրկում, և 55.000 բառ պարունակող “Tərki-toləši luyat”-ը («Ադրբեջաներեն-թալիշերեն բառարան») [Aboszoda 2015]:

Վերոնշյալ ուսումնասիրությունները գրեթե ամբողջությամբ նվիրված են թալիշերենի հյուսիսային խմբի՝ Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառներին, որոնց համեմատ Իրանի տարածքում խոսվող թալիշական բարբառներն ու խոսվածքները շատ ավելի քիչ են ուսումնասիրված: Համեմատաբար լավ են ուսումնասիրված կենտրոնական բարբառախմբի Ասալեմի բարբառը, որի հետազոտությամբ զբաղվել է ակնանավոր լեզվաբան Էհսան Յարշաթերը [Yarshater 1996: 83-113], և հարավային թալիշերենի Մասուլեի ու Մասալի բարբառ-

ները՝ ուսումնասիրված համապատասխանաբար Ժիլբեր Լազարի [Lazard 1979: 251-268; Lazard 1979: 33-66] և Տացուո Նավատայի [Nawata 1982: 93-117] կողմից:

Իրանի տարածքի թալիշական բարբառներին նվիրված վերջին շրջանի ուսումնասիրությունների մեջ կարևոր է Դանիել Փոլի՝ 2011թ. Մանչեսթրի համալսարանում պաշտպանած թեկնածուական ատենախոսությունը, որը թալիշերենի հյուսիսային, կենտրոնական և հարավային բարբառախմբերի համեմատական հետազոտություն է և ծավալուն նյութ է պարունակում Անբարանի, Ասալեմի և Մասալ-Շանդերմանի բարբառների վերաբերյալ: Բացի այս աշխատանքից՝ թալիշերենի Անբարանի բարբառի ուսումնասիրությանը նվիրված միակ աշխատանքը Ռոբաբե Ամիրիան-Բուդալալուի՝ 2005թ. Թեհրանում լույս տեսած “Guyeš-e tāleši-e Anbarān-e Ardabil” («Թալիշերենի Արդեբիլի Անբարանի բարբառը») ուսումնասիրությունն է: Իրանի տարածքում խոսվող թալիշական բարբառների և խոսվածքներին նվիրված են մի քանի այլ ուսումնասիրություններ ևս [տե՛ս Asatrian, Borjian 2005: 60-61; Paul 2011: 20]:

Բացի այս հիմնական ուսումնասիրություններից՝ թալիշերենի նկարագրությանը և այս լեզվի տարբեր խնդիրներին իրենց հոդվածներում և աշխատանքներում անդրադարձել են այլ հետազոտողներ ևս, այդ թվում՝ Վ. Հեննինգը [Henning 1954: 157-177], Պիեր Լըկոքը [Lecoq 1989: 313-326], Իոսիֆ Օրանսկին [Оранский 1979, Оранский 1988], Դոնալդ Ստիլոն [Stilo 1981], Գերնոտ Վինդֆուրը [Windfuhr 1987: 385-405], Գառնիկ Ասատրյանը [Asatrian, Borjian 2005: 43-72], Լյուդվիգ Պաուլը [Paul L. 1998: 163-177] և այլք: Բացի այդ՝ թալիշերենի բառային ֆոնդի բավականին մեծ թվով բառային միավորների ստուգաբանությանը իրանական տարբեր լեզուների ստուգաբանական բառարաններում և աշխատանքներում անդրադարձել են այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Վասիլի Աբանը, Վերա Ռաստորգուևան, Ջոյ Էդելմանը, Ռուսլան Ցաբոլովը և այլք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեպետ իրանագիտական հետազոտությունների շրջանակում թալիշերենը ակադեմիական մի շարք հետազոտությունների առարկա է, այդուհանդերձ ցարդ գոյություն չունի այս լեզվի և հատկապես դրա հյուսիսային բարբառի վրա հիմնված գրական լեզվի որևէ դասագիրք: Թալիշերենի դեպքում նշված գրական ստանդարտը սկսել է ձևավորվել խորհրդային տարիներին, հատկապես 1920-1940թթ., երբ առաջին անգամ հրատարակեցին թալիշերենի բացառապես դպրոցական դասագրքեր և ստեղծվեցին բնօրինակ ու թարգմանական գործեր: Հետխորհրդային ժամանակահատվածում՝ 1990-ականների սկզբներին, հետևելով Տարածաշրջանային լեզուների եվրոպական խարտիայի պահանջներին, Ադրբեջանում լույս տեսան թալիշերենի մի քանի դպրոցական դասագրքեր, որոնք կազմված էին՝ հաշվի չառնելով այս լեզվի գիտական ուսումնասիրության ընթացքում ձեռքբերված արդյունքները, և միտված էին բացառապես խնդրի ձևական կողմը ապահովելուն: Այսու, «Թալիշերենի դասագիրքը» փաստացի առաջին փորձն է բուհական մակարդակում՝ ունենալու այս լեզուն ներկայացնող հնարավորինս համապարփակ, բայց միևնույն ժամանակ սեղմ և ավելորդություններից զերծ, գործնական նպատակներ հետապնդող դասագիրք:

Դասագիրքը բաղկացած է 27 դասից, երկու հավելվածից և թալիշերեն-հայերեն, հայերեն-թալիշերեն համառոտ բառարաններից: Յուրաքանչյուր դաս բաղկացած է քերականությունից, տեքստից, տվյալ դասին վերաբերող բառացանկից և վարժություններից, որոնք միտված են կոնկրետ քերականական նյութը ամրապնդելու և մատչելի դարձնելու նպատակին:

Թալիշերենի հնչյունաբանությանը առանձին անդրադարձ չի կատարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայալեզու թալիշերեն սովորողի համար այն որևէ բարդություն կամ յուրահասկություն չի պարունակում, բացառությամբ կարճ ա [ա]-ի), որը թեև բացակայում է գրական հայերենում, սակայն առատորեն վկայված է հայերենի տարբեր բարբառներում:

Թալիշերենի լենքորանյան խոսվածքում վկայված ս-ի [ու] արտասանական ավելի շրթնային և կարճ տարբերակը՝ ü [nï] հնչյունը, դասագրքում կիրառված գրային համակարգում ընդհանրապես չի ներառվել, քանի որ այն չունի հնչույթային արժեք և բնորոշ է թեև գրական լեզվի հիմքում ընկած, սակայն այսուհանդերձ տեղային հիմնական խոսվածքին:

Դասագրքում օգտագործվել է 1990-ականներից ադրբեջանաբնակ թալիշների մայրենի լեզվի դասավանդման համար գործածվող լատինատառ այբուբենը, որ բաղկացած է 29 տառից: Դրանից, հաշվի առնելով հյուսիսային թալիշերենի առանձնահատկությունը, դուրս է թողնվել q [q] թյուրքական լեզուների համար բնորոշ կոշտ բաղաձայնը, որը հնչույթային որևէ արժեք չունի թալիշերենում և կիրառվում է՝ բացառապես տուրք տալով ադրբեջաներեն գրական լեզվի ավանդույթին: Այն ամենուր փոխարինվել է թալիշերենին հարագատ g [q] չեզոք բաղաձայնով, ինչը առավել գիտական է և արտացոլում է հենց թալիշերենի արտասանական յուրահատկությունը:

Թալիշերենի այբուբենը

Aa [a]	Kk [p]
Bb [p]	Ll [l]
Cc [ɟ]	Mm [m]
Çç [ɟʃ]	Nn [n]
Dd [d]	Oo [o]
Ee [e]	Pp [pʰ]
Əə [ʷ]	Rr [r, ɾ]
Ff [f]	Ss [s]
Gg [q]	Şş [ʒ]
Hh [h]	Tt [tʰ]
Xx [x]	Uu [u]
Iı [ɪ]	Vv [v]
İi [i]	Yy [j]
Jj [dʰ]	Zz [z]

ԴԱՍ 1

Քերականություն

1.1. Գոյական

Հիմնական քերականական կարգերից թալիշերենի գոյականին հատուկ են թվի և հոլովի քերականական կարգերը, ինչպես նաև որոշյալության և անորոշության առումը: Քերականական սեռը թալիշերենում բացակայում է, թեև ինչպես ժամանակակից հայերենում և պարսկերենում, այնպես էլ թալիշերենում, բնական սեռը արտահայտվում է զանազան բառերի միջոցով (օճօ «պարոն», xanım «տիկին», ni «արու, որձ», moə, del «էգ» և այլն):

Թալիշերենում բայի բոլոր եղանակների ներկա ժամանակաձևերով նախադասություններում ենթակայի շարահյուսական պաշտոնով հանդես եկող գոյականները միշտ դրվում են ուղղական հոլովով, այսինքն՝ բառի ուղիղ ձևով (օրինակները տե՛ս Դաս 1, §1.2, §1.3):

1.2. Բայ-հանգույց (3-րդ դ., եգ. թ.)

Նախադասության մեջ բայ-հանգույցը հանդես է գալիս որպես բաղադրյալ ստորոգյալի բայական մաս՝ հանգույց՝ ապահովելով կապը նախադասության ենթակայի ու ստորոգյալի միջև: Բայ-հանգույցի եզակի թվի երրորդ դեմքի համար բաղաձայնով վերջացող բառերին կցվում է -e ձևը: Օրինակ՝

Kə yole.

Տունը մեծ է:

Rabil həkime.

Ռաբիլը բժիշկ է:

Həvo game.

Եղանակը տաք է:

Ձայնավորով վերջացող բառերի դեպքում բայ-հանգույցի և բառի միջև ավելանում է y կիսաձայնը: Օրինակ՝

Bə gədəye.

Դուռը փոքր է:

Məryəm tələbəye.

Մարիամը ուսանող է:

Divo sipiye.

Պատը սպիտակ է:

Բայ-հանգույցի եզակի թվի երրորդ դեմքի ժխտման համար կիրառվում է ու անջատ գրվող ձևը, որը նույնն է թե՛ բաղաձայնով, թե՛ ձայնավորով վերջացող բառերի համար: Օրինակ՝

Boğ yol ni.

Այգին մեծ չէ:

Əli miəllim ni.

Ալին ուսուցիչ չէ:

Ov sardın ni.

Ջուրը սառը չէ:

1.3. Ցուցական դերանուններ

Ցուցական դերանունները կիրառվում են ցույց տալու համար որևէ անձ կամ առարկա, որի մասին խոսվում է: Թալիշերենի ցուցական դերանուններն են *im* *սա*, *այս* և *ə* *դա*, *այդ*, *այն*: Այս դերանունները կարող են կիրառվել ն՝ գոյականաբար, ն՝ ածականաբար:

Im ցուցական դերանունը, փոխարինելով անձ կամ իր ցույց տվող գոյականներին, մատնանշում է խոսողին մոտ գտնվող անձ կամ առարկա և համապատասխանում է հայերենի *սա* ցուցական դերանունին: Օրինակ՝

Im bande.

Մա սար է:

Im zoəye.

Մա տղա է:

Im kəye.

Մա տուն է:

Ածականական կիրառության դեպքում *im* ցուցական դերանունը հանդես է գալիս որպես որոշիչ՝ նախադաս դիրք գրավելով որոշյալի նկատմամբ և հայերեն թարգմանվում է *այս*: Օրինակ՝

Im band barze.

Այս սարը բարձր է:

Im zoə ağılmande.

Այս տղան խելացի է:

Im kə yole.

Այս տունը մեծ է:

Ə ցուցական դերանունը կիրառվում է միայն ածականաբար, ցույց է տալիս խոսողից հեռու գտնվող անձ կամ իր՝ համապատասխանելով հայերենի *այդ*, *այն* դերանուններին: Օրինակ՝

Ə kinə reçine.

Այն (այդ) աղջիկը գեղեցիկ է:

Ə jen civone.

Այն (այդ) կինը երիտասարդ է:

Ə merd həkime.

Այն (այդ) տղամարդը բժիշկ է:

Այս դերանունը գոյականաբար չի կիրառվում, և թալիշերենում *դա* դերանվան իմաստը արտահայտվում է *əv* եզակի թվի երրորդ դեմքի անձնական դերանվան միջոցով: Օրինակ՝

Əv kitobe.

Əv mize.

Əv bəye.

Դա գիրք է:

Դա սեղան է:

Դա դուռ է:

Բառապաշար

ağılmand	խելացի	kinə	աղջիկ
band	սար	əv	նա, դա
bə	դուռ	sipi	սպիտակ
civon	երիտասարդ	merd	տղամարդ
çok	լավ	bevac	վատ
əğə	պարոն	xanım	տիկին
əv	նա	barz	բարձր
gam	տաք	sardın	սառը
gədə, gədəli	փոքր	ım	այս, սա
həkim	բժիշկ	miəllim	ուսուցիչ
həvo	եղանակ	miəllimə	ուսուցչուհի
Jen	կին	reçin	գեղեցիկ
kə	տուն	divo	պատ
kitob	գիրք	miz	սեղան
ni	արու	moə, del	էգ
şogird	աշակերտ	əmma	բայց
tələbə	ուսանող	ə	այն
vey	շատ	ımruj	այսօր
yol	մեծ	boğ	այգի
zoə	տղա	ov	ջուր

Տեքստ

Im jen Məryəm xanım. Əv miəlliməye. Məryəm xanım vey ağılmande. Ə merd Rabil əğəye. Əv tələbə ni, əv həkime. Rabil əğə civone. Im zoə Əliye, əv

şogirde. Ə kinə İrodəye, əv vey reçine. Imruj həvo game. Ov sardın ni, tate. Im miz yole, gədəli ni. Ə kitob vey çoke, bevəc ni.

Վարժություններ

1. Կարդալ և թարգմանել տեքստը:

2. Թարգմանել. Այս տղան Ռաբիլն է, նա աշակերտ է: Այն աղջիկը Մարիամն է: Մարիամը աշակերտ չէ, նա ուսանող է: Սա լեռ է, այն բարձր չէ: Այսօր ցուրտ չէ, եղանակը շատ տաք է: Այն կինը երիտասարդ չէ, բայց շատ գեղեցիկ է: Նա Իրոդան է: Տիկին Իրոդան բժիշկ է: Այդ տունը փոքր է, մեծ չէ: Պատը սպիտակ է:

3. Բառերով կազմել նախադասություններ. boğ, kə, bə, merd, jen, zoə, kinə, yol, gədə, reçin:

ԴԱՍ 2

Քերականություն

2.1. Անձնական դերանուններ

Թալիշերենի անձնական դերանուններն են՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	Az «էս»	Յոմ «մենք»
2-րդ դեմք	Ti «դու»	Տոմ «դուք»
3-րդ դեմք	Յո «նա»	Յոն «նրանք»

2.2. Բայ-հանգույց [2]

Նախորդ դասի ընթացքում անդրադարձ եղավ բայ-հանգույցի եզակի թվի երրորդ դեմքի ձևին: Այժմ քննարկենք դրա մյուս ձևերը: Թալիշերենում բայ-հանգույցն ունի միայն ներկա ժամանակաձև: Այս ձևերը շեշտ չեն կրում, կցվում են բաղադրյալ ստորոգյալի անվանական մասին՝ հանդես գալով որպես բայական մաս՝ ապահովելով նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև շարահյուսական կապը: Թալիշերենում բայ-հանգույցի խոնարհման հարացույցն ունի հետևյալ տեսքը՝

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1	-im/-m «եմ»	-imon/-mon «ենք»
2	-is/-s «ես»	-iyon/-on «եք»
3	-e/-ye «է»	-in/-n «են»

Բայ-հանգույցի՝ վերոբերյալ -im, -is, -e, -imon, -iyon, -in ձևերը կցվում են բաղաձայնով վերջացող բառերին, օրինակ՝

Az šairim.

Ես բանաստեղծ եմ:

Ti sərvoziš.

Դու զինվոր ես:

Յո ǵəhrəmonē.

Նա հերոս է:

Յոմ diǵǵətinimon.

Մենք ուշադիր ենք:

Տոմ boǵəvoniyon.

Դուք այգեպան եք:

Əvon jurnalistin.

Նրանք լրագրող են:

-M, -ş, -ye, -mon, -on, -in ձևերը կցվում են ձայնավորահանգ բառերին, օրինակ՝

Az vey şom.

Ես շատ ուրախ եմ:

Tı tərçuməəkəş.

Դու թարգմանիչ ես:

Əv piye.

Նա ծեր է:

Əmə ermənimon.

Մենք հայ ենք:

Şımə bekoon

Դուք գործազուրկ եք:

Əvon kinən

Նրանք աղջիկ են:

Բայ-հանգույցի ժխտական ձևերը կազմված են n- ժխտական նախա-մասնիկից և բայ-հանգույցի դրական ձևերից: Դրանք նույնն են թե՛ բաղա-ձայնով և թե՛ ձայնավորով վերջացող բառերի համար, կրում են շեշտ և չեն կցվում բաղադրյալ ստորոգյալի անվանական մասերին, օրինակ՝

Ճիշդ	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1	-nim «չեմ»	-nimon «չենք»
2	-niş «չես»	-niyon «չեք»
3	-ni «չէ»	-nin «չեն»

Az tırk nim, tolışim.

Ես ադրբեջանցի չեմ, թալիշ եմ:

Əmə şo nimon, ğəminimon.

Մենք ուրախ չենք, տխուր ենք:

Əvon şogird nin.

Նրանք աշակերտ չեն:

Բառապաշար

az	էս
beko	գործազուրկ
boğəvon	այգեպան
ğəmin	տխուր
ğəhrəmon	հերոս
dığğətin	ուշադիր

jurnalist	լրագրող
pi	ծեր
sərvəz	զինվոր
tərçuməəkə	թարգմանիչ
tı	դու
tırk	ադրբեջանցի,

erməni	հայ	şair	թուրք
əv	նա	şımə	բանաստեղծ
əvon	նրանք	şo	դուք
əmə	մենք	-ən	ուրախ
ısət	հիմա	hejo	էլ, նույնպէս
məlo	մոլլա		միշտ

Տեքստ

Az Pərvizim. Az tolışim, türk nim. Ə kinə Anahite, əv erməniyə. Anahit şogirde. Tı vey ağılmandış. Tı tərçuməəkəş, tı beko niş. Şımə sərvəziyon, məlo niyon. Əvon məlon. Im merd Əliyə, ə jen İrodəyə. Əvon jurnalistin, boğəvon nin. Imruj həvo gam ni, vey sardine. Tı gəminiş, əmə şomon. Ə jen Məryəm xanım. Məryəm xanım imruj vey şoye. Azən şom. Tı imruj şo niş. Tı hejo şoş, əmma ısət gəminiş.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել տեքստը:

2. Թարգմանել. Ես Փարվիզն եմ: Ես թալիշ եմ: Դու հայ ես: Մենք ադրբեջանցի չենք: Այն կինը շատ գեղեցիկ է: Դա տիկին Մարիամն է: Նա միշտ ուրախ է: Այն մարդը պարոն Ալին է: Նա հերոս է: Մենք լրագրող ենք: Մենք միշտ ուրախ ենք, բայց այսօր շատ ցուրտ է, հիմա մենք ուրախ չենք, տխուր ենք: Նրանք այգեպան են: Դու աշակերտ չես, բժիշկ ես:

3. Բառերով կազմել նախադասություններ. dığgətin, tolış, erməni, boğəvon, ısət, hejo, sərvəz, journalist, -ən, beko, pi.

4. Նախադասությունները լրացնել համապատասխան անձնական դերանուններով.

1. ... boğəvon nimon, journalistimon.
2. ... sərvəziş?
3. ... şairim, miəllim nim.
4. ... tolışə, erməni ni.
5. ... tərçuməəkə niyon.

6. ... ֆո նին, վեյ ցճմինին.

5. Գտնել նախադասություններում առկա սխալները և ուղղել՝

1. Az ֆաիր նիֆ, յուրնալիստիմ.
2. Ծմճ վեյ ֆոմոն, ցճմին նիյոն.
3. Տի տոլիֆե յաանկի ուրսե?
4. Տիմճ միճլլիմիյոն, սճրվոզ նիֆ.
5. Ծվոն ցճհրճմոնիմոն.
6. Ծվ տճրյումճճկճֆ.

ԴԱՍ 3

Քերականություն

3.1. Գոյական անուն. ուղիղ և թեք հոլովներ

Թալիշերենին հատուկ է գոյականի երկհոլով համակարգը՝ ուղիղ և թեք հոլովների հակադրությամբ, ընդ որում՝ այս հակադրությունն արտահայտվում է միայն եզակի թվով դրված գոյականների դեպքում: Ուղղական հոլովով դրված գոյականը թալիշերենում ունի զրո վերջավորություն, այսինքն՝ համապատասխանում է բառի ուղիղ ձևին: Ուղղական հոլովով դրված գոյականները հանդես են գալիս շարահյուսական տարբեր պաշտոններով, այդ թվում՝ որպես նոմինատիվ կառույց ունեցող նախադասությունների ենթակա, էրգատիվ կառույց ունեցող նախադասությունների ուղիղ խնդիր, բաղադրյալ անվանական ստորոգյալի ստորոգելի և այլն: Ուղիղ հոլովի այս բոլոր գործառույթներին կծանոթանանք դասագրքի հետագա բաժիններում:

Թալիշերենում եզակի թվով դրված գոյականը թեք հոլովով կիրառվելու դեպքում ստանում է -i հոլովական վերջավորություն, որը թալիշերենում ունի լայն կիրառություն, արտահայտում է շարահյուսական զանազան հարաբերություններ, ինչպես սեռական հոլովի իմաստը, էրգատիվ հոլովի իմաստը, թեք հոլով է ստանում նաև ուղիղ խնդիրը նոմինատիվ կառույց ունեցող նախադասություններում և այլն:

3.2. Հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն

Թեք հոլովի -i վերջավորությունը, կցվելով գոյականներին, լայն առումով դրանք դնում է սեռական հոլովով՝ արտահայտելով հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունը թալիշերենում: Այս կապակցության մեջ հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ գրավում է նախադաս դիրք և դրվում թեք հոլովով, օրինակ՝ *kitobi səhifə qrp̄i t̄əz̄ə, jeni nom k̄əng անունը, merdi dust տղամարդու ընկերը, gujdi tikə մսի կտորը* և այլն:

Ձայնավորով վերջացող բառերից հետո երբեմն տեղի է ունենում i-y հնչյունափոխություն, օրինակ՝ *kəy bə տան դուռը, moəy dıl մայրիկի սիրտը, angıy təm խաղողի համը, muy rang մազի գույնը* և այլն, բայց մեծ

մասամբ՝ հատկապես բանավոր խոսքում, նման բառերի ուղիղ և թեք հոլովների հակադրությունը վերանում է, և հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ (կամ թեք հոլով պահանջող ցանկացած այլ շարահյուսական հարաբերություններում) դրանք հանդես են գալիս ուղիղ ձևով՝ առանց որևէ ձևաբանական ցուցչի, օրինակ՝ *kinə kif աղջկա պայուսակը, do xicə ծառի ճյուղը* և այլն:

Շատ հաճախ հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ կիրառվում է նաև *çi* նախադրությունը, որը դրվում է թեք հոլովով հատկացուցչից առաջ, օրինակ՝ *çi kinə dədə աղջկա պապիկը, çi şairi kitob բանաստեղծի գիրքը* և այլն:

3.3. De նախադրություն

Թալիշերենում գործիական հոլովի իմաստը արտահայտելու, ինչպես նաև միասնություն, համատեղություն ցույց տալու համար (հայերենի *հետ* կապի իմաստը արտահայտելու համար) կիրառվում է *de* նախադրությունը, որը որոշ բարբառներում ու խոսվածքներում կիրառվում է նաև *dı* ձևով: Այս նախադրության *հետ* գործածվող բառերը դրվում են թեք հոլովով՝ ստանալով *-i* (*-y*) վերջավորություն՝ *de maşini մեքենայով, de ovi ջրով, de Rabili Ռաբիլի հետ, de dədəy պապիկի հետ, de kinəy աղջկա հետ* և այլն:

Բառապաշար

səhifə	էջ	dıl	սիրտ
gujd	միս	təm	համ
tikə	կտոր	mu	մազ
moə	մայրիկ	rang	գույն
şair	բանաստեղծ	pıə	հայր
maşin	մեքենա	ğələm	գրիչ
angı	խաղող	avtobus	ավտոբուս
xalə	մորաքույր	nom	անուն
şu	ամուսին	derzi	դերձակ
osınəğə	դարբին	aşboz	խոհարար
sı	կարմիր	çəy	նրա

Տեքստ

Im çı Məryəmi kəye. Əv vey yol ni. Ə kə çı Isoimli kəye. Isoimli kə gədəli ni, yole. Az İrodə zoəm. Tı Məryəmi kinəş. Əv çı Əli dədəye. Çı Əli dədə həkime. Imən çı Rabili moəy. Çı Rabili moə nom Vılənoze. Vılənoz miəlliməye. Ə jen çı Vılənozi xaləye. Çı Vılənozi xaləy nom Ənivəse. Im merd çı Ənivəsi şuye. Çı Ənivəsi şu nom Şirzade. Əv şaire. Çı Məryəmi moə tolış ni, erməniye. Çəy nom Anahite. Anahit derziye.

Վարժություններ

1. Կարդալ և թարգմանել տեքստը:

2. Թարգմանել թալիշերեն.

Այս տղամարդը Իսմայիլի հայրն է: Նա դարբին է: Իսմայիլի հոր անունը Ալի է: Այն աղջիկը Մարիամն է: Մարիամը ուսանող է: Մարիամի մայրը թալիշ չէ, հայ է: Նրա անունը Կարինն է: Կարինեն խոհարար է: Մարիամի ընկերոջ հոր անունը Հուսեյն է: Հուսեյնի տունը մեծ չէ, փոքր է: Տան դուռը կարմիր է: Մարիամի տան դուռը կարմիր չէ, սև է: Այս քաղաքի անունը Լենքորան է: Լենքորանը մեծ է և գեղեցիկ: Այդ քաղաքի անունը Անբարան է: Անբարանը մեծ չէ, բայց գեղեցիկ է: Քաղաքի օդը լավն է:

3. Յուրաքանչյուր բառը կիրառել հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ և այդ բառակապակցություններով կազմել նախադասություններ. kə, mašin, şəhər, mu, dədə, merd, kinə, xalə, kitob, ğələm

4. Փակագծում տրված բառերը դնել ուղիղ կամ թեք հոլովով.

1. Çı Isoimli ... kə yol ni. (xalə)
2. Məryəm ... ni, erməniye. (tolış)
3. Çı ... pıə pi ni, cıvone. (kinə)
4. Çı İrodə ... ıset kədə ni. (moə)
5. Vılənoz ıset de ... kədəye. (Rabil)

ԴԱՍ 4

Քերականություն

4.1. Անորոշ դերբայ

Թալիշերենում բացարձակապես բոլոր բայերի անորոշ դերբայը ունի -e (ձայնավորով վերջացող հիմք ունեցող մի քանի բայերի դեպքում՝ -y) վերջավորություն՝

karde	անել	vote	ասել
şe	գնալ	məse	լսել
ome	գալ	vinde	տեսնել
hande	կարդալ	peşome	խմել
harde	ուտել	vite	վազել
doy	տալ	jəy	խփել

Թեև անորոշ դերբայը արտահայտում է գործողության, ընթացքի իմաստ, այն իր իմաստային հատկանիշներով մոտ է նաև գոյական անվանը. այն կարող է գործածվել նաև գոյականաբար՝ նախադասության մեջ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով, օրինակ՝

Hande vey foydəyne.

Կարդալը շատ օգտակար է:

4.2. Սահմանական եղանակ: Ներկա ժամանակաձև

Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը ցույց է տալիս գործողություն, որը կատարվում է խոսելու պահին, ինչպես նաև սովորաբար կատարվող գործողություն, որը լեզվաբանության մեջ անվանվում է նաև ընդհանուր կամ մշտական ներկա: Թալիշերենում սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը կազմվում է բայի անորոշ դերբայից, -də հետադրությունից և հետևյալ դիմային վերջավորություններից՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-m	-mon
2-րդ դեմք	-ş	-(y)on
3-րդ դեմք	-Ø (զրո վերջավորություն)	-n

Օրինակ՝

Az kardedəṃ	<i>Ես անում եմ</i>	Əmə hardedəṃon	<i>Մենք ուտում ենք</i>
Tı şedəş	<i>Դու գնում ես</i>	Şımə vindedəyon	<i>Դուք տեսնում եք</i>
Əv handedə	<i>Նա կարդում է</i>	Əvon məsedən	<i>Նրանք լսում են</i>

Վերոբերյալ օրինակները սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի ամբողջական ձևերն են: Հարկ է նշել, որ թալիշերենում այս ձևերին զուգահեռ հատկապես բանավոր արագ խոսքում կիրառվում են նաև այս ժամանակաձևի կրճատ ձևերը, որոնց կազմավորումը պայմանավորված է հնչյունական մի շարք գործընթացներով: Այդպիսի կարճ ձևեր հիմնականում ունեն -te, -de, -šte վերջավորությամբ բայերը՝ պայմանավորված անորոշ դերբայի -e վերջավորության սղմամբ և դրա արդյունքում առաջացած td, dd, ştd բաղաձայնական խմբերում տարբեր հնչյունափոխություններով, օրինակ՝ votedəṃ > vottəṃ *ասում եմ*, gətedəş > gəttəş *վերցնում ես*, hitedəṃon > hittəṃon *քնում ենք*, kardedəṃ > kardəṃ *անում եմ*, bardedə > bardə *տանում է*, nivıştedən > nivıştən *գրում են* և այլն:

Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կազմության ժամանակ հոգնակի թվի երկրորդ դեմքում, երբ որպես դիմային վերջավորություն կիրառվում է -on ձևը, և այն կցվում է -də հետադրությանը, վերջինիս ə ձայնավորը սղվում է՝ hardedon *ուտում եք*, məsedon *լսում եք*, patedon *եփում եք* և այլն:

Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի ժխտական խոնարհումը կազմվում է բայ-հանգույցի ժխտական ձևերից (nim, niş, ni, nimon, niyon, nin, տե՛ս §2.2), որոնք կցվում են -də հետադրությանը, օրինակ՝

Az məsedənim	<i>Ես չեմ լսում</i>	Əmə votedənimon	<i>Մենք չենք ասում</i>
Tı gətedəniş	<i>Դու չես վերցնում</i>	Şımə vitedəniyon	<i>Դուք չեք վազում</i>
Əv hardedəni	<i>Նա չի ուտում</i>	Əvon hitedənin	<i>Նրանք չեն քնում</i>

4.3. Բə նախադրություն

Բə նախադրությունը թալիշերենում լայն առումով արտահայտում է տրական հոլովի իմաստը և ցույց տալիս՝

- գործողության կատարման ուղղություն, օրինակ՝

Həmməy şogirdon bə miəllimi	<i>Բոլոր աշակերտները ուսուցչի տուն են գնում:</i>
kəy şedən.	

Dışmen bə çəmə şəhəri nez
bedə.

Թշնամին մոտենում է մեր քաղաքին:

- Անձին կամ իրը, որին ուղղված է գործողությունը, օրինակ՝
Çımı dust ıstı nomi bə Rabili votedə. *Ընկերս քո անունն ասում է Ռաբիլին:*
Əvon ə kitobi bə hırdəni doydən. *Նրանք այդ գիրքը տալիս են երեխային:*

- Նմանություն ինչ-որ մեկին կամ ինչ-որ մի բանի, օրինակ՝
Ə jen bə İğbali xalə xəyli oxşəş *Այն կինը շատ նման է Իդրալի մորաքրոջը:*
Iştı mu bə şəvi oxşəş doydə. *Քո վարսերը գիշերվա են նման:*

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, թալիշերենում *bə* նախ-դիրի հետ կիրառվող գոյականները դրվում են թեք հոլովով, այսինքն՝ ստանում են *-i* կամ *-y* վերջավորություն: Սակայն երբեմն *bə* նախադրու-թյան հետ բառերը կիրառվում են ուղիղ ձևով, օրինակ, *bə kə դպրոց/դեպի դպրոց*, *bə şəhər քաղաք/ դեպի քաղաք* և այլն: Սա ամենայն հավանա-կանությամբ բացատրվում է կիրառվող բառի որոշյալ կամ անորոշ առմամբ օգտագործված լինելու հանգամանքով, օրինակ՝

Rabil ha ruj bə məktəb şedə. *Ռաբիլն ամեն օր դպրոց է գնում:*

Rabil isət bə ıstə məktəbi şedə. *Ռաբիլը հիմա իր դպրոց է գնում:*

Առաջին նախադասության արտահայտած իմաստից մենք հասկա-նում ենք, որ Ռաբիլն ընդհանրապես դպրոց է հաճախում, իսկ երկրորդ նախադասությունը ցույց է տալիս, որ խոսելու պահին Ռաբիլը կոնկրետ իր դպրոցն է գնում:

Բառապաշար

nez	մոտիկ
şəhər	քաղաք
dust	ընկեր
hırdən	երեխա

be	լինել
çəmə	մեր
çımı	իմ
doy	տալ

həmməy	բոլոր	dışmen	թշնամի
foydəyn	օգտակար	gəte	վերցնել
ha	ամեն	məktəb	դպրոց
şe	գնալ	məse	լսել
xəyli	շատ	mu	մազ
hıte	քնել	nıvıste	գրել
xalə	մոռաբույր	oxşəş doy	նմանվել
hande	կարդալ	peşome	խմել
şəv	գիշեր	ruj	օր
ome	գալ	vinde	տեսնել
harde	ուտել	vite	վազել
karde	անել	vote	ասել
ısət	հիմա	ışte	իր
nom	անուն	ıstı	քո
bəçəy gorə ki	որովհետև	ko karde	աշխատել
sıvoy ımı	բացի այդ	həvatəkəs	վաճառող
dukon	խանութ	həvate	վաճառել
rə-rə	հաճախ	əyo	այնտեղ
nışte	նստել	gəp jəy	խոսել, զրուցել
mivə	միրք	barde	տանել

Տեքստ

Im zoə Əliye. Əv şogirde iyən ha ruj bə məktəb şedə. Ə kinə Məryəme. Məryəm bə məktəb şedəni bəçəy gorə ki əv şogird ni, tələbəye. Sıvoy ımı Məryəm ko kardedə. Əv həvatəkəs e. Isət Məryəm bə dukoni şedə. Im Vılənoze. Məryəm iyən Vılənoz dustin. Əvon rə-rə bə boğ şedən. Əyo nıştedən iyən gəp jəydən.

Վարժություններ

- Կարդալ և թարգմանել տեքստը:**
- Թարգմանել.** Այս կինը Իրոդան է: Իրոդան բժիշկ է, բայց հիմա չի աշխատում: Այն մարդը Սաբիրն է: Սաբիրը ուսուցիչ է և ամեն օր գնում է դպրոց: Սաբիրն ու Իրոդան հիմա խանութ են գնում: Ալին այնտեղ է

աշխատում: Նա վաճառող է, միրգ է վաճառում: Հիմա գիշեր է: Սաբիրը, Իրոդան ու Ալին տուն են գալիս: Սաբիրը գիրք է կարդում, Իրոդան միրգ է ուտում, Ալին քնում է:

3. Բայերով կազմել նախադասություններ՝ դրական ու ժխտական խոնարհմամբ. gəte, məse, hite, hande, harde:

4. Փակագծում տրված բայերը դնել սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի համապատասխան դեմքով և թվով.

1. Əmə ha ruj de maşini bə məktəb (şe)
2. Çı Adili kinə ısıt (ko karde)
3. Az ha şəv kitob (hande)
4. Şimə keynə ... ? (hite)
5. Əli iyən Babək de Məryəmi (gəp jəy)
6. Tı boçi bə məktəb ... ? (ome)
7. Əv de avtobusi bə di(şe)
8. Əvon ha sor kitob (nivişte)

ԴԱՍ 5

Քերականություն

5.1. Ածական անուն. ածականի կազմությունը

Թալիշերենում ածականը գուրկ է սեռի, թվի և հոլովի քերականական կարգերից, ինչպես նաև նրան հատուկ չէ որոշյալության և անորոշության առումը:

Ըստ կազմության ածականները լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ ածականները թալիշերենում արտաքնապես ոչնչով չեն տարբերվում գոյականներից, այսինքն՝ օժտված չլինելով որևէ ձևաբանական ցուցիչով՝ դրանք հենց բառարմատներ են (այդ պատճառով էլ լեզվաբանական գրականության մեջ դրանք անվանվում են նաև արմատական ածականներ), օրինակ՝ *yol մեծ, ֆոկ լավ, sipi սպիտակ, tırş թթու, kok գեղ* և այլն:

Բաղադրյալ ածականները իրենց հերթին բաժանվում են ածանցավոր և բարդ ածականների: Թալիշերենի հիմնական ածականակերտ ածանցներն են՝

- **-in**, թալիշերենի ամենակենսունակ ածանցներից է, կազմում է մեծ թվով ածանցավոր ածականներ, օրինակ՝ *hırsin բարկացած, sıgın քարե, gəmin տխուր, ovin ջրիկ, ջրային* և այլն;

- **-mand**, օրինակ՝ *xəymand բարի, ağılmand խելացի, cigəmand խիզախ, zumand ուժեղ* և այլն;

- **-li**, ունի փոքրացուցիչ-փաղաքշական իմաստ, օրինակ՝ *gədəli փոքրիկ (gədə փոքր)*;

- **be-**, **no-**, ցույց են տալիս մի բանից գուրկ լինելու, մի բան չունենալու հատկանիշ, օրինակ՝ *bedandon անատամ, bebəfo անհավատարիմ, besəvod անգրագետ, noxəs հիվանդ, nodon տղետ* և այլն;

- Կան նաև մի քանի այլ ոչ կենսունակ ածականակերտ ածանցներ, ինչպես **-ək** (*məvindək ազահ, չտես*), **-i** (*dimi աներես, ruyəni ճարպոտ*), **-lu** (*bəfolu հավատարիմ -nuk/-nok (ğəzəbnuk զայրացած, կատաղած)* և այլն:

Թալիշերենում բարդ ածականներ կազմելու համար գոյություն ունեն հետևյալ կաղապարները՝

- ածական + գոյական (կամ հակառակ շարադասությամբ), օրինակ՝ *şinəxun քաղցրարյուն, haadəli, dılnam փափկասիրտ, բարի*;

- թվական + գոյական + -in, օրինակ՝ *մտերօֆին երկկողմանի, ֆոլինգին քառոտանի*;

- գոյական + բայահիմք, օրինակ՝ *միլեստ համակրելի, հաճելի* (*միլ սիրտ + sute այրել, այրվել*), *նունդո առատաձեռն* (*նուն հաց + doյ տալ*), *ջոնաջո* «հյուրընկալ» (*ջոնաջ հյուր + doյ տալ*);

- դերանուն + գոյական + (-ո՞, -in և այլն), օրինակ՝ *յուրյո՞ ալյուրվա, հարյո՞ ալենօրյա, հա՛տերօֆին բազմակողմանի, համակողմանի*:

5.2. Որոշիչ-որոշյալ կապակցություն

Թալիշերենում որոշիչ-որոշյալ կապակցության դեպքում որոշիչը դրվում է որոշյալից առաջ՝ ընդունելով -ձ վերջածանց, օրինակ՝ *բեչոնե կոնե գեղեցիկ աղջիկ, Եո՞ձ ֆեհեր մեծ քաղաք, ֆոնե աղյ քաղաքը խաղող, տա՞ձ աք ապուր* և այլն: Թ և ա ձայնավորներով վերջացող ածականների հետ այդ վերջածանցը հիմնականում չի դրվում, օրինակ՝ *գե՞ձե կո փոքր տուն*: Մնացած ձայնավորներով վերջացող ածականները սովորաբար որոշիչ-որոշյալ կապակցության մեջ ընդունում են -ձ վերջածանց, իսկ ածականի ու վերջածանցի միջև ավելանում է *յ* կիսաաձայն, օրինակ՝ *գե՞ձեօյո՞ զո՞ձ փոքր տղա, բեչոյո՞ բիյոմերձ անու՞ժ ծերունի, Տիյոյո՞ ժիյո Սև ծով* և այլն:

5.3. Ծծ հետադրություն

Ծծ հետադրությունը լեզվի զարգացման ավելի վաղ փուլերում իրականացրել է մի շարք գործառույթներ և արտահայտել հոլովական տարբեր իմաստներ, որոնք որոշ դեպքերում այսօր ևս հազվադեպ կիրառություն ունեն: Այնուամենայնիվ, ներկայումս ծծ հետադրությունը թալիշերենում արտահայտում է գլխավորապես ներգոյական հոլովի, ինչպես նաև հայերենի *մեջ* կապի իմաստը: Այն կցվում է գոյականին և շեշտ չի կրում, օրինակ՝ *բոջե՞ձ ալգուլ, ժիյո՞ձե ծովում, Եոլիստոնե՞ձ Թալիշստանում, Երմոնտոնե՞ձ Հայաստանում* և այլն: Թ ձայնավորով վերջացող բաներից հետո ծծ հետադրության առաջին ձ-ն սղվում է՝ *կե՞ձե տանը, կս՞ձե փողոցում, վի՞ձե՞ձ անտառում* և այլն:

Բառապաշար

xəymand	բարի	ağılmand	խելացի
hətərəfin	համակողմանի	angi	խաղող
Tolışiston	Թալիշստան	Erməniston	Հայաստան
tat	տաթ	aş	ապուր
məvindək	ագահ, չտես	bəfolu	հավատարիմ
gədəli, gədə	փոքր	bedandon	անատամ
bebəfo	անհավատարիմ	besəvod	անգրագետ
məşo	կոշիկ	bezu	անուժ, թույլ
piyəmerd	ծերունի	dıyo	ծով
şinəxun	քաղցրաբյուն	dıləsut	հաճելի
nundo	առատաձեռն	ğonəğdo	հյուրընկալ
ımrujnə	այսօրվա	harujnə	ամենօրյա
noxəş	հիվանդ	nodon	տգետ
ğəmin	տխուր	ovin	ջրիկ, ջրային
hırsin	բարկացած	sığın	քարե
kok	զեր	tırş	թթու
kuçə	փողոց	vişə	անտառ
cigəmand	խիզախ	zumand	ուժեղ
nəv	ինը	otağ	սենյակ
yonzə	տասնմեկ	jimon karde, jie	ապրել
haft	յոթ	havzəvot	բանջարեղեն
həşt	ութ	universitet	համալսարան
penc	հինգ	mərağın	հետաքրքիր

Տեքստ 1

Ə reçinə kinə Vılənoze. Əv vey çokə kinəye. Vılənoz Tolışistonədə, Lankoni şəhərdə jimon kardədə. Əv məktəbdə ko kardədə. Vılənoz vey çokə miəlliməye. Əv ha ruj saat nəvədə bə məktəb şedə. Vılənoz ıset məktəbdə ni, əv kədəye iyən ko kardəni, nun hardədə iyən kitob handedə. Şəve. Vılənoz adətən saat yonzədə bə ıstə otağ şedə iyən hıtedə.

Տեքստ 2

Məryəm xanım vey xəymandə iyən nundoyə jene. Əv tolişe, əmma Tolışistonədə jimon kardedəni. Əv Rusiyədə, Moskva şəhərədə jiedə. İsət Rusiyədə xəyli tolişon jimon kardedən. Məryəm xanım ko kardedəni, əv pensionere. Ha mang pul gətədə iyən bə vijor şedə, ləzətinə mivon, foydəynə havzəvot hıriədə iyən bə kəy vardədə. Əv ha ruj bə Rabili sef iyən angı doydə.

Վարժություններ

1. *Կարդալ, թարգմանել և պատմել տեքստերը:*

2. *Թարգմանել.*

1. Ալին ու Հասանը լավ աշակերտներ են: 2. Մարիամը բարի ու հաճելի կին է: Նա աշխատում է դպրոցում, ուսուցչուհի է: Ամեն օր ժամը 7-ին դպրոց է գնում: 3. Նարեն հայ է, նա ապրում է Հայաստանում՝ Գյումրի քաղաքում: 4. Իրոդան խանութում է աշխատում, վաճառողուհի է: Նա քաղցր խնձոր ու համեղ խաղող է վաճառում: 5. Ծերունին հիմա տանը չէ, այգում է: Նա աշխատում է: Սովորաբար ժամը 8-ին տուն է գալիս և քնում: 6. Ես թալիշ չեմ, հայ եմ, բայց համալսարանում թալիշերեն եմ սովորում: 7. Ես գիտեմ, դու ամեն գիշեր այն հետաքրքիր գիրքն ես կարդում: 8. Մենք ամեն օր ժամը 5-ին գնում ենք խանութ, գնում ենք հաց ու պանիր: 9. Նրանք այսօր Լենքորան են գնում, դուք գալիս եք Երևան: 10. Մենք գիտենք, դու դպրոց չես գնում և մնում ես տանը:

3. *Ածականներով կազմել նախադասություններ.* yol, gədə, reşin, ləzətin, sardın, tırş, şin, pi, noxəşin, xos, sı

4. *Փակագծում տրված ածականներից ընտրել ճիշտը և տեղադրել նախադասության մեջ.*

1. İrodə ... aş patedə. (ləzətin/yol)
2. Çı Babəki nənəy kə ...e. (bezu/gədə)
3. Im ... merd çı Əli dədəye. (ovin/pi)
4. Çı Həsəni jen vey ... jene. (xəymand/sığin)
5. Çı Şirzadi kə ...e (nodon/sığin)

ԴԱՍ 6

Քերականություն

6.1. Գոյականի թիվը

Թալիշերենում գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Լեզվում կա հոգնակի թվի կազմության միայն մեկ եղանակ՝ -on (-n) հոգնակիակերտ վերջածանցի օգնությամբ, որը կցվում է բառի եզակի թվի ուղիղ ձևին: Այս վերջածանցով է կազմվում բոլոր տեսակի գոյականների հոգնակին՝ լինեն դրանք շնչավոր կամ անշունչ, թանձրացական կամ վերացական, անձնանիշ կամ առարկայանիշ և այլն, օրինակ՝ merd - merdon *տղամարդ* - *տղամարդիկ*, səhər - səhəron *քաղաք* - *քաղաքներ*, dıl - dilon *սիրտ* - *սրտեր*, doj - dojon *ցավ* - *ցավեր* և այլն:

Հոգնակիակերտ -on վերջածանցի կցմամբ բառերը որևէ զգալի հնչյունափոխության չեն ենթարկվում: A և ə ձայնավորով վերջացող բառերը հոգնակիի կազմության ժամանակ սովորաբար կորցնում են այդ ձայնավորը, և -on հոգնակիակերտ վերջածանցը կցվում է դրան նախորդող բաղաձայնին կամ ձայնավորին, օրինակ՝ kinə - kinon *աղջիկ* - *աղջիկներ*, xəbə - xəbon *լուր* - *լուրեր*, zoə - zoon *տղա* - *տղաներ*, bina - binon *շենք* - *շենքեր* և այլն, բայց կիրառելի են նաև դրանց չհնչյունափոխված ձևերը՝ kinəon, xəbəon, zoəon, binaon: Այս ձայնավորներով վերջացող միավանկ բառերի տվյալ ձայնավորը հոգնակիի կազմության ժամանակ պահպանվում է՝ kə - kəon *տուն* - *տներ*, ka - kaon *փրփուր* - *փրփուրներ*, bə - bəon *դուռ* - *դռներ*, sə - səon *գլուխ* - *գլուխներ* և այլն:

O ձայնավորով վերջացող բառերի դեպքում սովորաբար բառավերջի և հոգնակիակերտ վերջավորության o ձայնավորները ձուլվելով տալիս են երկար ō (պահպանելով o գրությունը), սակայն հաճախ երկու o ձայնավորներն էլ պահպանվում են՝ հանգեցնելով երկձևության՝ ko - kon - koon *գործ* - *գործեր*, do - don - doon *ծառ* - *ծառեր*, ro - ron - roon *ճանապարհ* - *ճանապարհներ* և այլն:

Մնացած ձայնավորներով վերջացող բառերի դեպքում դրանց և հոգնակիակերտ վերջածանցի միջև ավելանում է y կիսաձայն, օրինակ՝ ovçi - ovçiyon *որսորդ* - *որսորդներ*, mu - muyon *մազ* - *մազեր* և այլն:

6.2. Թեք հոլովը և հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն (2)

Թալիշերենում ուղիղ և թեք հոլովների հակադրությունն արտահայտվում է միայն եզակի թվով դրված գոյականների դեպքում. հոգնակի թվով դրված գոյականները երբեք չեն ստանում -i թեք հոլովի ցուցիչ, այսինքն՝ նախադասության մեջ շարահյուսական բոլոր պաշտոններում հոգնակի թվով դրված գոյականը միշտ ունի միևնույն տեսքը՝ բառի ուղիղ ձև + -on (-n) հոգնակիակերտ վերջածանց: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզվի զարգացման ավելի վաղ փուլերում -on վերջածանցի օգնությամբ կազմվել է գոյականների հոգնակի թվի թեք հոլովը, իսկ հոգնակի թվով դրված գոյականների ուղղական հոլովի համար գոյություն է ունեցել մեկ այլ վերջավորություն, որը հետագայում դուրս է մղվել -on վերջավորության կողմից: Եվ քանի որ ժամանակակից թալիշերենում -on վերջավորությունը պարունակում է թեք հոլովի իմաստային լիցքը, այսինքն՝ դրա օգնությամբ է արտահայտվում նաև սեռական հոլովի իմաստը, ուստի հոգնակի թվով դրված գոյականը հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ որևէ այլ լրացուցիչ ձևաբանական ցուցիչ չի ստանում, օրինակ՝ *kinon moə աղջիկների մայրը, şəhəron roon քաղաքների ճանապարհները, şairon nomon բանաստեղծների անունները* և այլն:

6.3. ku հետադրություն

Ku հետադրությունը թալիշերենում ամենալայն կիրառություն ունեցող հետադրություն է, և դրա օգնությամբ արտահայտվում են տեղ մատնանշող հոլովական ամենատարբեր իմաստներ, ընդհուպ հակոտնյա. օրինակ՝ այս հետադրության օգնությամբ որոշ դեպքերում կարող է արտահայտվել թե՛ տրական, թե՛ բացառական, նույնիսկ ներգոյական հոլովի իմաստ: Այս հանգամանքը հատկապես լավ է արտացոլված թալիշերենի ավելի վաղ շրջանի բանահյուսական տեքստերում, այնինչ ներկայումս մեծ մասամբ ku հետադրությունն արտահայտում է բացառական հոլովի իմաստ: Այս հետադրության հետ կիրառվող գոյականները միշտ դրվում են թեք հոլովով և հանդես են գալիս շարահյուսական տարբեր պաշտոններով, օրինակ՝

• Rabil miziku kitobi pegatedə *Ռաբիլը սեղանից վերցնում է գիրքը* (անջատման անուղղակի խնդիր),

• Məryəm de Əli ə kitobiku gəp jəydə *Մարիամը Ալիի հետ այն գրքից (=գրքի մասին) է խոսում* (վերաբերության անուղղակի խնդիր) և այլն:

Հաճախ բացառական հոլովի իմաստն արտահայտելու համար *ku* հետադրությունը կիրառվում է *չ*1 նախադրության հետ՝ *չ*1 *kəyku տանից*, *չ*1 *məktəbiku դպրոցից*, *չ*1 *kişvərikü երկրից* և այլն:

Բառապաշար

doj	ցավ	mang	ամիս
xəbə	լուր	mande	մնալ
sə	զուլիս	vıl	ծաղիկ
ko	գործ	gobələk	սունկ
do	ծառ	girdə karde	հավաքել
ro	ճանապարհ	ləzətin	համեղ
kişvər	երկիր	pate	եփել
dı	երկու	bu	բույր
ogarde	վերադառնալ	noxəşxonə	հիվանդանոց
rəbədə	առավոտյան	beşe	դուրս գալ, ելնել
hətto	նույնիսկ	kali vaxton	երբեմն
mande	մնալ	vindemon karde	հանդիպել
kafe	սրճարան	bə şəv	գիշերը
idorə	գրասենյակ	mıhum	կարևոր
mıvzu	թեմա	hovə	քույր
kum	տանիք	voə	ձյուն
zəmin	գետին	egınie	թափվել, ընկնել
dinci se	հանգստանալ	prezident	նախագահ
barz	բարձր	bina	շենք
mənzıl	բնակարան	boə	եղբայր
sıpə	շուն	band	սար, լեռ
çəş	աչք	pencə	պատուհան
kijə	թռչուն		

Տեքստ 1

Մարյամ, Կահին իյան Վիլանոզ վեյ չոկա dustonin. Մարյամ իյան Վիլանոզ Լանկոնաձա յիմոն կարձեձոն, Կահինոն չի Լիկ շահարիկույե, աժմա հա սոր աճոն եձա ձի շեձոն իյան ձի մանց աճո մանձեձոն. Ըիձա հաճո վեյ չոկե. Մարյամ, Վիլանոզ իյան Կահին կաձա մանձեձոնին, հա ռոյ եձա յիշա շեձոն, յիլ իյան գոբալակ ցիձա կարձեձոն. Ըի յիշա գոբալակոն վեյ լաճատին իյան չի Մարյաժի մոա գոբալակոնկու վեյ չոկա աշ քաձեձա. Վիլոնոն վեյ ռաճին իյան չի յիլոն եւ շինե. Քոճաձա duston չի ձիկու եձա շահար ոգարձեձոն իյան եձա մաճաբ շեձոն.

Տեքստ 2

Օլի հաճիմե. Օճ յոլա յոխաշխոնաձա կո կարձեձա. Հա ռաբաձա յիտա կաճկու եթեձա իյան ձա աճոբուսի եձա յոխաշխոնա շեձա. Օճ վեյ կո կարձեձա, հաճո կալի յաճոն կոաձա մանձեձա. Ըի Օլի duston Բաբակ իյան Իճբալ միալլիմոնին. Օճոն մաճաբաձա կո կարձեձոն. Օլի, Բաբակ իյան Իճբալ ռա-ռա յինձեմոն կարձեձոն իյան եձա կաֆե շեձոն. Օճո յիշեձոն, ցաթ յաճձոն իյան եձա շաճ չի կաֆեկու եթեձոն յա եձա կա ոգարձեձոն.

Վարժություններ

1. Կարդալ և թարգմանել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Այս երկրում ճանապարհները մեծ են և լավը: 2. Մարիամը ամեն օր առավոտյան տանից դուրս է գալիս և մեքենայով գնում է գրասենյակ: 3. Նրանք ամեն օր հանդիպում են, նստում են այգում և կարևոր թեմաներից են զրուցում: 4. Մենք այսօր Լենքորանից վերադառնում ենք Լերիք, այնտեղ իմ ընկերն է ապրում իր մայրիկի և քույրերի հետ: 5. Ես խանութ չեմ գնում, հիվանդանոցից եմ գալիս: 6. Եղանակն այսօր շատ տաք է, տների տանիքներից ձյունը գետնին է թափվում: 7. Դու շատ ես աշխատում, չես հանգստանում և աշխատանքից գիշերն ես տուն վերադառնում: 8. Այսօր այդ երկրների նախագահները հանդիպում են այս մեծ քաղաքում: 9. Թալիշատանի քաղաքներն ու գյուղերը գեղեցիկ են: 10. Այս բարձր շենքի բնակարաններում հայեր, թալիշներ ու ռուսներ են ապրում:

3. Կազմել բառերի հոգնակիները և դրանցով կազմել նախադասություններ.
մոա, եոա, Լոլիշ, կիշվար, սիթա, եան, չաթ, քենչա, կիթա, կո:

4. Տեղադրել համապատասխան նախադրություններն ու հետադրությունները և փակագծում տրված բայերը խոնարհել համապատասխան դեմքով և թվով.

1. Az ha ruj ... avtobusi... məktəbi (şə).
2. Tı ... kəy... (bəşə) iyən ... boği (ogarde).
3. Əv Lankon... (jimon karde)
4. Əmə im dukoni... nun (hırie).
5. Şimə ... Məryəmi dustonin.
6. Əvon ha mang ... Zabili (vindemon karde) iyən ... diy (şə).

5. Տեքստերից դուրս գրել եզակի թվով օգտագործված բոլոր հասարակ դերանունները և կազմել դրանց հոգնակին:

Քերականություն

7.1. Ուղիղ խնդիրը նումինատիվ նախադասություններում

Ինչպես արդեն նշվեց նախորդ դասերի ժամանակ, թեք հոլովով դրված գոյականները թափշերենում հանդես են գալիս շարահյուսական մի շարք պաշտոններով, այդ թվում՝ որպես ուղիղ խնդիր նումինատիվ կառույցի նախադասություններում, այսինքն՝ երբ նախադասության ստորոգյալն արտահայտված չէ սահմանական եղանակի անցյալ կատարյալ, վաղակատար և վաղակատար անցյալ ժամանակաձևերով (այդ դեպքում գործ ունենք էրգատիվ կառույցով նախադասությունների հետ, որոնք կքննարկվեն դասագրքի հետագա բաժիններում): Այսպես, արտահայտելով հայցական հոլովի իմաստը և ստանալով թեք հոլովի -i (-y) վերջավորություն, ուղիղ խնդրի դերում հանդես եկող գոյականները (կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերը) հակադրվում են ուղիղ կամ ուղղական հոլովով դրված ենթակային, օրինակ՝

Məryəm kitobi okardədə iyən
handedə.

Im zoə ha ruj ə merdi çəş
kardədə.

P1ə ıştə kinə ç1 məktəbiku bə kəy
bardedə.

*Մարիամը բացում է գիրքը և
կարդում:*

*Այս տղան ամեն օր այդ
մարդուն է սպասում:*

*Հայրն իր աղջկան դպրոցից
տուն է տանում:*

Հարկ է նշել, որ երբ ուղիղ խնդիրն արտահայտվում է վերացարկված ձևով, առանց որոշակիացման, այն դրվում է ուղղական հոլովով և ձևաբանորեն չի տարբերվում ենթակայից՝

Əli kitob handedə.

Ə merd tolışon həxədə kitob
niviştədə.

Ç1 Rabili moə sef hardədə.

Ալին գիրք է կարդում:

*Այդ մարդը թափշների մասին
գիրք է գրում:*

*Ռաբիլի մայրիկը խնձոր է
ուտում:*

7.2. Անձնական դերանունների թեք ձևերը

Թեև թալիշերենում երկհոլով համակարգը արտացոլված է նաև դերանվանական հարացույցում, թեք հոլով ունեն ոչ բոլոր անձնական դերանունները. ուղիղ և թեք ձևերի հակադրությունը պահպանվել է միայն եզակի թվի առաջին և երրորդ դեմքերի համար՝

	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
	Ուղիղ հոլով	Թեք հոլով	Ուղիղ հոլով	Թեք հոլով
1-ին դեմք	az	mi	əmə	-
2-րդ դեմք	ti	-	šimə	-
3-րդ դեմք	əv	əy	əvon	-

Թեք հոլովը պահպանած երկու դերանունները հանդես են գալիս որպես երգատիվ նախադասությունների ենթակա (այս մասին կխոսվի հետագայում), իսկ եզակի թվի երրորդ դեմքի թեք ձևը նոմինատիվ նախադասություններում իրականացնում է ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ, օրինակ՝

Az əy vindedənim, ehtimolən əv iyo
ni.

*Ես նրան չեմ տեսնում, նա
հավանաբար այստեղ չէ:*

Մնացած դեմքերի ու թվերի համար թալիշերենում զարգացել են հայցական հոլովի իմաստ արտահայտող երկրորդային ձևեր՝ թեք հոլովի -i վերջավորության հավելմամբ, ընդ որում՝ եզակի թվի առաջին դեմքի համար վերականգնվում է պատմական -n- ձայնորդը՝ moni *ինձ*, իսկ մյուս դեմքերում դրա առկայությունը պայմանավորված է moni ձևի հետ համաբանությամբ և հորանջից խուսափելու համար՝ tni *քեզ*, əməni *մեզ*, šiməni *ձեզ*, հոգնակի թվի երրորդ դեմքի əvoni ձևում պահպանվում է -on հոգնակիակերտ վերջավորության ձայնորդը: Նշենք նաև, որ այս ձևի համաբանությամբ լեզվում երբեմն հանդիպում է əvi *նրան* ձևը՝

Moə ha ruj moni bə məktəb
bardedə.

*Մայրիկն ամեն օր ինձ դպրոց է
տանում:*

Ha mang tini diədə vindedəm.

Ամեն ամիս քեզ գյուղում եմ տեսնում:

Əvi noxəşxonəku vardedən, mərise.

*Նրան հիվանդանոցից են բերում,
հիվանդ է:*

Boçi əməni jəydon, əmə gınokor
nimon.

Diye, şıməni çəş kardedəmon.

Vılənoz əvoni çəş kardedəni.

*Ինչու՞ եք մեզ խփում, մենք մեղավոր
չենք:*

Ուշ է, ձեզ ենք սպասում:

Վրլանոզը նրանց չի սպասում:

7.3. Անձնական ստացական դերանուններ

Ի տարբերություն գոյական անունների՝ ո՛չ եզակի թվի առաջին և երրորդ դեմքի անձնական դերանունների թեք ձևերը, ո՛չ էլ -i թեք հոլովի ցուցչով կազմված երկրորդային ձևերը սեռական հոլովի իմաստ չեն արտահայտում: Դերանունների դեպքում պատկանելությունն արտահայտվում է հատուկ ստացական դերանունների միջոցով: Թալիշերենի ստացական դերանուններն են՝

Դեմք/Թիվ	Եզակի	Հոգնակի
1	չոմո <i>իմ</i>	չəmə <i>մեր</i>
2	իշտ <i>քո</i>	şımə <i>ձեր</i>
3	չəy <i>նրա</i>	çəvon <i>նրանց</i>

Ստացական դերանունները միշտ դրվում են լրացյալից առաջ, անփոփոխ են, չեն արտահայտում լրացյալի քերականական թիվը և նախադասության մեջ հանդես են գալիս միայն հատկացուցչի շարահյուսական պաշտոնով՝

Çımı boə nom Hilale.	<i>Իմ եղբոր անունը Հիլալ է:</i>
Iştı kinə vey çokə tələbəyə.	<i>Քո աղջիկը շատ լավ ուսանող է:</i>
Çəy mamu zoə Lankonədə jiedə.	<i>Նրա հորեղբոր տղան Լենքորանում է ապրում:</i>
Çəmə kə gədəliye, əmma rəçine.	<i>Մեր տունը փոքր է, բայց գեղեցիկ:</i>
Şımə duston əyo nin.	<i>Ձեր ընկերներն այնտեղ չեն:</i>
Çəvon şəhər Likiku diyəro ni.	<i>Նրանց քաղաքը Լերիքից հեռու չէ:</i>

Թյուրքական ծագման -ki վերջածանցի միջոցով ստացական դերանուններից կազմվում են գոյականաբար գործածվող ձևեր, որոնք համապատասխանում են հայերենի -ը, -ն որոշյալ հոդերով ստացական դերա-

նուններին՝ փմոնկի *իսը*, փտոնկի *քոնը*, ֆոյկի *նրանը*, ֆոմոնկի *մերը*, ֆմոնկի *ձերը*, ֆոնոնկի *նրանցը*, օրինակ՝

Իժտի կիտօբ ֆոկե, ֆմոնկի եւոճե.

Յ յօլճ կճ փտոնկի ու, ֆոնոնկիյե.

Հոմ ֆոմճ ֆճհոյ ռեֆոնե, հոմոն
ֆմոնկի.

Քո գիրքը լաւն է, իսը վատն է:

Այն մեծ տունը քոնը չէ, նրանցն է:

*Ե՛ւ մեր քաղաքն է գեղեցիկ, և՛
ձերը:*

Բառապաշար

okarde	բացել	məriz	հիվանդ
film	ֆիլմ	boçi	ինչն՝
təmşo karde	դիտել	gıno kor	մեղավոր
pıə	հայր	di	ուշ
həxədə	մասին	çəş karde	սպասել
ehtimolən	հավանաբար	mamu	հորեղբայր
varde	բերել	diyəro	հեռու
zıvon	լեզու	şin	քաղցր
mətn	տեքստ	yolon sıxan	ասացվածք
mahne	երգ	guş doy	լսել
moə/inə zıvon	մայրենի լեզու	umute	սովորել
zine	իմանալ, գիտենալ	ğıymətin	թանկագին

Տեքստ

Tolişə zıvon

Tolişə zıvon ֆմու մօճ չիւոնե. Յւ վեյ ռեֆոնե, վեյ ֆոնե. Ազ հա ռւյ տօլիճ չիւոնճճ մոտնոն հոնճճճ, եճ ֆոնճ տօլիճ մոհնեյոն ցւշ ճոյճճճ իյոն ֆոմճ ինճ չիւոնճճճ յօլոն սիքոնոն ումոնճճճ. Իժտի ճոստ, Հիլոլ տօլիճ, ճոմմո տօլիճ չիւոնոն չիւոնճճնի. Իմ վեյ եւոճե. Ազ վեյ ֆոմ կի ֆմու հոմմոյ ճոստոն ֆոմճ ռեֆոնճ չիւոնոն չիւոնճճն իյոն հոմ կճճ, հոմ մոկտեբճճ, հոմոն կոճճճ տօլիճ չիւոնճճճ ցոյ յոյճճն.

Օլի ֆոմճ ճոստե. Բոնոն չիյոնոն Թօլիստոնճճճ յիմոն կոնճճճճնի, ճոնոն Աւրօթճճճ յիճճն, ճոմմո տօլիճ չիւոնոն վեյ ֆոկ չիւոնճճն, հեյո ճե փտճ ճոստոն մօճ չիւոնճճճճ ցոյ յոյճճն.

Tolişə zivon çımınciye, ıştırınciye, şımənciye, tolişə zivon çı həmməy tolişon ғыmətinə gənce.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

2. Թարգմանել թայիշերեն.

1. Ես ամեն օր իմ գիրքը բերում եմ դպրոց, բայց դու այնտեղ չես լինում:
2. Դու մեզ չես տեսնում, որովհետև մենք այդտեղ չենք, ուշանում ենք:
3. Այս թանկարժեք մեքենան իմը չէ, նրանցն է, և նրանք այն վաճառում են:
4. Նրա փոքր եղբայրը Եվրոպայում է ապրում, իմը՝ Լենքորանում, բայց նրանք ամեն տարի հանդիպում են մեր գյուղում:
5. Նա ամեն առավոտ բացում է սենյակի պատուհանը, նստում է այնտեղ ու սպասում է իր որդուն:
6. Դուք ինչո՞ւ ծաղիկները չեք դնում ծաղկամանի մեջ, դրանք շատ գեղեցիկ են:
7. Զաբիլն այդ աղջիկների անունները գրում է իր տետրում:
8. Մեր քաղաքների փողոցներ մաքուր են, լայն ու գեղեցիկ:
9. Ձեր գյուղը մեծ է, նրանցը փոքր է, բայց վատը չէ:
10. Ամեն գիշեր գիրք եմ կարդում կամ ֆիլմ եմ դիտում:

3. Կազմել նախադասություններ, որոնցում անձնական դերանունները հանդես կգան ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնով:

4. Գտնել նախադասություններում առկա քերականական սխալները և ուղղել. 1. Az ha mangədə im kitob handedəm. 2. Məryəm isət bə filmi təmşo kardedəş. 3. Çəmənci kə ə yol kuçədəye. 4. Tı ha ruj az vindedəş, əmma de Məryəm mangədə dı kərə vindemon kardedən. 5. Əvon çışımə duston nin, əvon çışımə dışmenonimon.

Քերականություն

8.1. *Be* օժանդակ բայը և դրա անցյալ կատարյալ ժամանակաձևը

Be բայը թալիշերենում ունի երկու հիմնական նշանակություն՝ «լինել» և «դառնալ», բացի այդ՝ համապատասխանում է հայերենի «եմ» օժանդակ բային: Այս բայը լայն կիրառություն ունի և մասնակցում է տարբեր ժամանակաձևերի կազմությանը: *Be* բայի անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է դրա անցյալի՝ *b-* հիմքից և հետևյալ դիմային վերջավորություններից (բայի հիմքերի և դիմային վերջավորություններն առավել հանգամանորեն կքննարկվեն դասագրքի առաջիկա բաժիններում)՝ 1-ին դեմք, եզ. թ.՝ *-im*, 2-րդ դեմք, եզ. թ.՝ *-is*, 3-րդ դեմք, եզ. թ.՝ *-e*, 1-ին դեմք, եզ. թ.՝ *-imon*, 2-րդ դեմք, եզ. թ.՝ *-iyon*, 3-րդ դեմք, եզ. թ.՝ *-n*:

	եզակի թիվ	հոգնակի թիվ
1-ին դեմք	<i>bim եղա/էի</i>	<i>bimon եղանք/ էինք</i>
2-րդ դեմք	<i>bis եղար/ էիր</i>	<i>biyon եղաք/ էիք</i>
3-րդ դեմք	<i>be եղավ/ էր</i>	<i>bin եղան/ էին</i>

8.2. *Սահմանական եղանակ: Անցյալ-անկատար 1*

Թալիշերենում կա անկատար անցյալ ժամանակաձևի կազմության երկու եղանակ. դրանցից առաջինը, որ կքննարկենք այս դասի ընթացքում, ունի բաղադրյալ կազմություն. այն արտահայտում է անցյալում կրկնվող կամ որպես սովորույթ կատարվող գործողության իմաստ և, ինչպես սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը, կազմվում է խոնարհվող բայի անորոշ դերբայից և *-də* հետադրությունից, իսկ դեմքն ու թիվը արտահայտվում են *be* օժանդակ բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի օգնությամբ, որը տվյալ դեպքում համապատասխանում է հայերենի *եւ* օժանդակ բայի անցյալ ժամանակին, օրինակ՝ *az şedəbim եւ գնում էի*, *tı ogardedəbis դու վերադառնում էիր*, *əv novıştedəbe նա գրում էր*, *əmə peşomedəbimon մենք խմում էինք*, *şımə məsedəbiyon դուք լսում էիք*, *əvon vitedəbin նրանք վազում էին*:

Անկատար անցյալի այս ժամանակաձևի ժխտական խոնարհումը կազմվում է ու նախամասնիկի օգնությամբ, որն անմիջականորեն կցվում է օժանդակ բային՝ *az bardedənim* ես չէի տանում, *əmə hitedənimon mənəp zəhinəp pənəm*, *əvon vardədənimin nıranəp zəhinəp fərrəm* և այլն:

Նշենք նաև, որ սահմանական եղանակի ներկա ժամանակաձևում կիրառվող կրճատ ձևերը և -e վերջավորության սղման հետևանքով առաջացած հնչյունափոխությունները (տե՛ս §4.2) նույնական են նաև անցյալ անկատարի համար, օրինակ՝ *kardənim* անում էի, *vottəbiş* ասում էիր և այլն:

8.3. *Bo* նախադրությունը և *ro* հետադրությունը

Թալիշերենում *bo* նախադրության և *ro* հետադրության միջոցով արտահայտվում է այսպես կոչված բենեֆակտիվ հոլովի, այսինքն՝ *համար, հանուն* կապերով արտահայտված նպատակի պարագայի, օգուտի և շահի խնդրի իմաստները: Ե՛վ *bo* նախադրության, և՛ *ro* հետադրության հետ կիրառվող բառերը դրվում են թեք հոլովով, օրինակ՝

Əv ha ruj bo vəzirî şinə angî
vardədəbe.

Az iyo bo ko karde omedəm.

Əmə Rabili vinderə əyo şedəbimon.

Hiç kəsiro nomə niviştedənimbe.

Նա ամեն օր վեզիրի համար քաղցր
խաղող էր բերում:

Ես աշխատելու համար եմ այստեղ
գալիս:

Մենք այնտեղ էինք գնում Ռաբիլին
տեսնելու համար

Ոչ ոքի համար նամակ չէր գրում:

Շատ հաճախ *bo* նախադրությունը և *ro* հետադրությունը հանդես են գալիս միասին՝ որպես կադապարային կառույց, օրինակ՝

Sərvəzon bo podşoro çokə xəbə
vardədəbin.

Bo ko kardero əvon bə Lankon şedən.

Զինվորներն արքայի համար լավ
լուր էին բերում:

Աշխատելու համար նրանք
Լենքորան են գնում:

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, bo նախադրության և ro հետադրության հետ կիրառվող բայերի անորոշ դերբայը ձևաբանական որևէ փոփոխության չի ենթարկվում:

Բառապաշար

di	ուշ	hašte	թողնել
ovc, təræggi	զարգացում	poz	աշուն
vildon	ծաղկաման	hulə, ambu	տանձ
noy	դնել	huštuli	դեղձ
şirə	հյութ	ətrin	անուշաբույր
mivə şirə	մրգահյութ	minosib, rohət	հարմար
norohət be	անհանգստանալ	dəvardə/ponə sor	անցած տարի
tovson, toviston	ամառ	dinci se	հանգստանալ
ha maštə	ամեն առավոտ	viz	ընկույզ
pešo	ապա, հետո	hındıl	մոշ
nəvə	թոռ	mərağın	հետաքրքիր
nəğıl	հեքիաթ	diğğət	ուշադրություն
şangovəsəy	երեկոյան	hamsiyə	հարևան
xıyzon	ընտանիք	yodobenişə	անմոռանալի
haftə	շաբաթ	vıjor	շուկա
parçə	կտոր	hırie	գնել

Տեքստ

Çımı pıə xaləy xıyzon gıləy gədə iyən vey reçinə diədə jiedəbe. Əmə tovsənədə bo dinci sero de avtobusi bə di şedəbimon iyən çand ruj əyo mandədəbimon. Az, çımı pıə iyən çımı boə ha maštə bə vişə şedəbimon, gobələk, viz, hındıl, curbəcürə mivon gırdə kardedəbimon iyən bə kə bardədəbimon. Çımı moə bo əməro de gobələki vey ləzətinə aş patedəbe. Peşo çı pıə xalə, Bənovşə nənə, bo ıştə nəvə iyən çımı hovə vey mərağınə nəğılön handedəbe, əvonən de diğğəti guş doydəbin. Şangovəsəy çı Bənovşə nənə hamsiyəön de ıştə hırdənon omedəbin, toşə şəvi nıştədəbimon, anekdoton iyən lətifəön votedəbimon. Bo çəmə xıyzonıro ə rujön vey yodobenişə bin.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Անցյալ տարի ամեն օր մայրիկս ինձ համար շուկայից համեղ հատապտուղներ էր բերում: 2. Ես Իրոդայի և Բանավշայի համար գեղեցիկ ծաղիկներ էի գնում, բայց նրանք այդ ծաղիկները տուն չէին տանում, թողնում էին դպրոցում: 3. Նրա հայրը աշխատելու համար ամռանը Լերիքից Լենքորան էր գնում, իսկ աշնանը վերադառնում էր: 4. Դու ամեն օր գրադարան էիր գնում, շատ գրքեր էիր կարդում և միշտ ուշ էիր տուն գալիս: 5. Թալիշատանի քաղաքների զարգացման համար այս ծրագիրը շատ կարևոր է: 6. Ինչո՞ւ ինձ չէիք զանգահարում, ես շատ էի անհանգստանում ձեզ համար: 7. Մենք խնձոր, դեղձ, տանձ և զանազան մրգեր էինք գնում, համեղ հյութեր էինք պատրաստում և վաճառում էինք: 8. Ռաբիլն ու Ադիլը ամեն շաբաթ այգի էին գնում և իրենց քույրերի համար գեղեցիկ ու անուշահոտ ծաղիկներ էին հավաքում: 9. Այս գեղեցիկ, մեծ քաղաքը շատ հարմար է ապրելու համար: 10. Այդ գյուղ հասնելու համար նրանք ավտոբուս էին նստում:

3. Կազմել կարճ տեքստ հետևյալ բառերով՝ կիրառելով bo նախադրությունն ու ro հետադրությունը. zimiston, kə, sardın, gırdə karde, vişə, sute, aş, gam, voə, əvəsor:

4. Տեղադրել համապատասխան նախադրություններն ու հետադրությունները և փակագծում տրված բայերը խոնարհել համապատասխան ժամանակաձևով, դեմքով և թվով.

1. Pənə sori ha ruj ... avtobusi bə məktəb (şe).
2. Dəvardə mangədə az ha haftə ... Rabili vijoriku şinə huştuli (varde).
3. Ə derzi im dukoni... parçə (hırie).
4. Çimiku haft sor bənav Fərmon Rusiyə... (jimon karde).
5. ... Cəməli boə imruj ... Lankoni (ogarde).

ԴԱՍ 9

Քերականություն

9.1. Գոյականի անորոշ և որոշյալ առումները

Թալիշերենում նումինատիվ նախադասության մեջ որոշյալ առումով գործածված գոյականը քերականական որևէ հատուկ ցուցիչ կամ հոդ չի ստանում, այսինքն՝ համապատասխանում է բառի ուղիղ ձևին (էրգատիվ կառույց ունեցող նախադասությունների դեպքում որոշյալ առումով կիրառված ենթական դրվում է թեք հոլովով և ունենում -i վերջավորություն, տե՛ս §12.3), օրինակ՝

Kinə xəyli rəçine.

Աղջիկը շատ գեղեցիկ է:

Boğəvon boğədə ko kardədə.

Այգեպանն աշխատում է այգում:

Գոյականի որոշյալությունը արտահայտելու համար երբեմն գործածվում են նաև ցուցական դերանունները (ւո *այս*, ə *այն*, *այդ*)՝

Im zoə çimü nəvəye.

Այս տղան իմ թոռն է:

Ə jen çı vıjoriku ogardədə.

Այն կինը շուկայից է վերադառնում:

Ի տարբերություն որոշյալ առման՝ անորոշ առումով գործածված եզակի թվով դրված գոյականը արտահայտվում է հատուկ ցուցիչով. գոյականի անորոշ առումն արտահայտվում է ցլəy *ինչ-որ*, *ոմն* բառի միջոցով՝

Im kədə gıləy piyəmerd jimon
kardədə.

Այս տանը մի ծերունի է ապրում:

Gıləy əğil ha ruj iyo omedəbe.

*Ամեն օր այստեղ մի երեխա էր
գալիս:*

Գոյականի անորոշ առումն ընդգծելու նպատակով ցլəy բառը հաճախ ուղեկցվում է i *մեկ* քանակական թվականով, որը կցվում է բառից առաջ, և հնչյունափոխության արդյունքում բառը ստանում է iglə տեսքը, օրինակ՝

İglə həkim ə noxəşxonədə ko
kardədəbe.

*Մի բժիշկ էր այդ հիվանդանոցում
աշխատում:*

Երբեմն գոյականի անորոշությունը կարող է արտահայտվել նաև միայն *i* *մեկ* քանակական թվականի օգնությամբ՝

İ nəfər hanədə iştə dusti vindedəbe.

Մեկը երազում իր ընկերոջն էր տեսնում:

9.2. Թվական անուն. քանակական թվականներ

Թալիշերենում առանձնացվում են թվականների հետևյալ հիմնական տեսակները՝ քանակական, դասական, բաշխական և կոտորակային թվականներ:

Քանակական թվականների 1-9 շարքը ունի հետևյալ տեսքը՝

1	i	6	şəş
2	dı	7	haft
3	se	8	həşt
4	ço	9	nəv
5	penc	10	da

Քանակական թվականների երկրորդ տասնյակի շարքը (11-19) ցուցաբերում է կազմության զուգաձևություն. առաջին դեպքում այս շարքի թվականները իրանական՝ բնիկ թալիշական ժառանգություն են՝ միավորի՝ տասնավորի հանդեպ նախադաս դիրքով և թալիշերենին հատուկ հնչյունափոխություններով, մյուս դեպքում գործ ունենք թալիշերենի վրա թյուրքական ազդեցության արդյունքում առաջացած կազմության հետ, երբ տասնավորը նախադաս դիրք է գրավում միավորի հանդեպ՝ դրան միանալով *vi* շաղկապի օգնությամբ:

	Իրանական	Թյուրքական		Իրանական	Թյուրքական
11	yonzə	davı i	16	şonzə	davı şəş
12	donzə	davı dı	17	havdə	davı haft
13	senzə	davı se	18	həjdə	davı həşt
14	çordə	davı ço	19	nonzə	davı nav
15	ponzə	davı penc			

Թալիշերենի տասնավորներն ու հարյուրավորները հետևյալն են՝

10	da	100	sa
20	vist	200	dısa
30	si	300	sesa
40	çıl	400	çosa
50	penco	500	pensa
60	şest	600	şəşsa
70	hafto	700	haftsa
80	həştə	800	həştəsa
90	nəve	900	nəvsa

Հազարավորները կազմվում են *həzo hawqar* թվականով և դրան նախորդող համապատասխան միավորներով՝ *dı həzo tərqlu hawqar*, *se həzo tərte hawqar*, *da həzo tıasur hawqar* և այլն: Ճիշտ նույն կերպ կազմվում են միլիոնավորները և միլիարդավորները՝ համապատասխանաբար *milyon* և *milyard* թվականների միջոցով:

Բարդ թվականները թալիշերենում մեծ մասամբ կազմվում են պարզ հարադրության միջոցով՝ մեծից փոքր, օրինակ՝ 358 - *sesa penco həşt*, 1915 - *i həzo nəvsa ponzə*, 11789 *yonzə həzo haftsa həştə nəv* և այլն: Բացառությունն են կազմում *vist puşn*, *si tərksun*, *çıl puşnasun* և *şest vıaşun* տասնավորները, որոնք միավորի հետ կապվում են *ı/vı* բաղադրուսական շաղկապի օգնությամբ՝ 25 - *vıstı penc*, 431 - *çosa sıvı i*, 2142 - *dı həzo isa çılı dı*, 1666 - *i həzo şəşsa şestı şəş* և այլն:

Քանակական թվականների հետ կիրառվող գոյականները դրվում են եզակի թվով: Բացի այդ՝ առարկաների թվարկման ժամանակ շատ հաճախ կիրառվում է *gılə* դասանիշը, որը կիրառվում է ինչպես անշունչ, այնպես էլ շնչավոր առարկաների ու անձանց հետ՝ այսպիսով թարգմանվելով և՛ *hատ*, և՛ *հոգի*՝ *dı gılə mız tərqlu hատ սեղան*, *penc gılə go հինգ կով*, *haft gılə merd յոթ հոգի մարդ* և այլն:

9.3. heste կա պակասավոր բայը

Թալիշերենի heste բայով արտահայտվում է հայերենի լինել, գոյություն ունենալ, կա բայերի իմաստը, բացի այդ՝ այս բայի և կցական դերանունների օգնությամբ է արտահայտվում ունենալ բայի իմաստը (այս մասին տե՛ս 13.2): Այս բայը հիմնականում խոնարհվում է միայն երրորդ դեմքով՝ heste կա և hestin կան ձևերով՝

Համա չահաթաճ գիլայ vey yolə park

heste.

Im kitobədə mərağınə hikoyəon

hestin.

Մեր քաղաքում մի շատ մեծ գրոսայգի

կա:

Այս գրքում հետաքրքիր

պատմվածքներ կան:

Այս բայը չունի ժխտական խոնարհում. հայերենի կա բայի ժխտական ձևերի իմաստով թալիշերենում կիրառվում են բայ-հանգույցի ժխտական ձևերը (տե՛ս 2.2)՝

Թ օտաթաճ հիչ կəs ni.

Հəvon boğədə vilon nin.

Այն սենյակում ոչ ոք չկա:

Նրանց այգում ծաղիկներ չկան:

Heste բայի անցյալ ժամանակաձևը կազմվում է բայի hest հիմքով և be բայի անցյալ կատարյալ ժամանակաձևով՝ hestbe կար, hestbin կային՝

Giləy tolış hestbe, de mı ko

kardedəbe.

Մի թալիշ կար, ինձ հետ էր

աշխատում:

Astekon imperiyədə məktəbon iyən

kitobxonon hestbin.

Ացտեկների կայսրությունում

դպրոցներ և գրադարաններ կային:

Բառապաշար

əgil երեխա

nəfər անձ, հոգի

han երազ

ıştə իր, յուր

park գրոսայգի

hikoyə պատմվածք

hiç kəs ոչ ոք

kitobxonə

muzey

tarixi

abidə

hovuj

ğəşəng

dijd

գրադարան

թանգարան

պատմական

հուշարձան

լայն

գեղեցիկ

մեծ, հսկայական

imperiya	կայսրություն	xiyobon	փողոց, պողոտա
məhəllə	թաղամաս	haliyədə	ներկայումս
bəpeştə	հետո	təğribən	մոտավորապես
day	քեռի	rujnomə	թերթ
dovləti	պետական	şərgəşinosəti	արևելագիտություն
zine	իմանալ, ճանաչել	taniş nibe,	անձանոթ
		noməlum	
iberdəmə,	հանկարծ	cif	գրպան
hababa			
əji, səbəso	բնակիչ	koğəz	թուղթ
teatr	թատրոն	barzəbolo	բարձրահասակ
şer	բանաստեղծություն	ləzzət, xışmət	հաճույք
siyəvil	վարդ	həyf ki, de	ցավոք սրտի
		həyfi	
pegəte	վերցնել	çəşmək	ակնոց
vığande	ուղարկել	angışte	մատանի
hırs	արջ		

Տեքստ

Çımiku penc sor bənav çəmə xıyzon Tolişistonədə nibe, əmə Almaniyədə, Berlin şəhərədə jimon kardedəbimon. Berlin gıləy vey yolə iyən reçinə şəhərə. Əyo xəyli muzeyon, tarixiyə abidəon, hovujə parkon, vey gəşəngə binaon iyən dijdə xiyobonon hestin. Çəmə məhəllədə se gılə yolə kitobxonə hestbe. Az haftədə se kərə dərson bəpeştə bə kitobxonə şedəbim iyən tobə şəvi əyo niştədəbim, kitob handedəbim. Kitobxonədə gıləy kinəon hestbe. Çəy nom Ani be. Əv erməni be. Ponzə ya şonzə sor be ki, çəy xıyzon Almaniyədə jimon kardedəbe. Ani votedə be ki, əv ha sor deştə moə bə Erməniston şedəbe. Haliyədə əmə Masallədə jiedəmon. Im tolişə şəhər yol ni, əmma vey reçinə. İyo təğribən nəv həzo çosa toliş jimon kardedə.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Սրանից 12 տարի առաջ իմ քեռու ընտանիքը ապրում էր Իրանում՝ Աստարա քաղաքում: 2. Անցյալ տարի մի գեղեցիկ կին շաբաթը երկու անգամ մեր տուն էր գալիս և տատիկիս համար թերթեր էր բերում: 3. Այս դպրոցում կա 433 աշակերտ և 48 ուսուցիչ: 4. Երևանի պետական համալսարանում 19577 ուսանող է սովորում, իսկ Արևելագիտության ֆակուլտետում կա 525 ուսանող: 5. Մոտավորապես 13 տարի է, որ ես Քահինին ճանաչում եմ, և մենք ամիսը 5 անգամ հանդիպում ենք և զրուցում: 6. Այդ անձանոթ տղամարդը հանկարծ գրպանից ինչ-որ թուղթ է հանում և տալիս իմ ընկերոջը: 7. Մեր քաղաքում 6144 բնակիչ կա, բայց, ցավոք սրտի, գրադարաններ ու թատրոններ չկան: 8. Իմ քույրը մի գեղեցիկ, բարձրահասակ ու բարի աղջիկ է, նա ուսանողուհի է, բացի այդ՝ աշխատում է սրճարանում: 9. Այս գրքում շատ գեղեցիկ բանաստեղծություններ և հետաքրքիր պատմվածքներ կան, իսկ ես դրանք հաճույքով եմ կարդում իմ աշակերտների համար: 10. Այս դպրոցում մի երիտասարդ ուսուցիչ է աշխատում, Իդրալը միշտ նրա համար գեղեցիկ վարդեր է տանում:

3. Տրված թվերը գրել տասերով. 13, 48, 79, 185, 333, 654, 978, 1841, 9772, 48222, 264990, 1184321, 11022104208:

4. Տրված բառերով կազմել նախադասություններ՝ գոյականները դնելով անորոշ առումով. *şair, pegəte, viğande, həkim, hırs, poz, do, çəşmək, xəbə, angışte:*

Քերականություն

10.1. Տ՝ հետադրությունը

Թալիշերենում կիրառվող այս հետադրությունը, որը երբեմն գործածվում է որպես նախադրություն, ունի անվանական ծագում՝ *զլուխ* բառից, և դրա հետ կիրառվող գոյականները միշտ դրվում են թեք հոլովով: Ինչպես անկախ կիրառության դեպքում, այնպես էլ այլ նախադրությունների և հետադրությունների հետ գործածվելով՝ *ս*-ի միջոցով կարող է արտահայտվել գործողության կատարման տեղը, ուղղությունը և այլն՝ կախված նաև նախադասության համատեքստից և ստորոգյալի իմաստաբանական արժեքից: Այնուամենայնիվ, *ս* հետադրությունը ժամանակակից թալիշերենում կիրառվում է գլխավորապես երկու իմաստով.

1) այս հետադրությամբ օգնությամբ լայն առումով արտահայտվում է հայերենի *վրա* կապի իմաստը, օրինակ՝

Բօրօնդ թոյ կումսօ ուշտեձ, բինօ
kardedə hande.

*Թռչունը տան տանիքի վրա է
նստում, սկսում երգել:*

Իշտ թոյ միզիսօ ոյդձ, հիտեձ.

Գլուխը դնում է սեղանին, քնում:

2) Տ՝ հետադրությամբ արտահայտվում է նաև բացառական հոլովի իմաստ. այս գործառնությունը այն կիրառվում է գլխավորապես ածականի համեմատության աստիճանների արտահայտման ժամանակ:

10.2. Ածականի համեմատության աստիճանները

Թալիշերենում ածականի համեմատության աստիճանների կազմության ձևաբանական հատուկ ցուցիչներ գոյություն չունեն: Առարկայի հատկանիշի չափը այլ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ արտահայտվում է նկարագրական միջոցների կիրառմամբ:

Թալիշերենում ածականի բաղդատական աստիճանը արտահայտվում է համար ամենից հաճախ կիրառվում է *ս* հետադրությունը, որը կցվում է թեք հոլովով դրված համեմատվող առարկային և տվյալ դեպքում

արտահայտում հայերենի բացառական հոլովի իմաստը, իսկ ածականը որևէ հատուկ ցուցիչ չի ստանում՝ գործածվելով ուղիղ ձևով՝

Հəmə səhər çəvon səhərisə yole.

Մեր քաղաքը նրանց քաղաքից մեծ է:

Ğəhvə çayisə tele.

Սուրճը թեյից ավելի դառն է:

Երբեմն նույն գործառնությունը կարող է հանդես գալ նաև ևս հետադրությունը՝

Im band ə bandiku barze.

Այս լեռն այն լեռից բարձր է:

Բաղդատական աստիճանի կազմության մյուս եղանակը եթե բաղադրյալ նախադրությամբ և սօ հետադրությամբ կազմված շրջանակաձև կառույցի գործածությունն է, օրինակ՝

Bəsə Məryəmisə çokə kinə az
zinedənim.

*Մարիամից ավելի լավ աղջիկ ես
չեմ ճանաչում:*

Թալիշերենում չկա նաև գերադրական աստիճանի կազմության ձևաբանական հատուկ ցուցիչ. այն արտահայտելու համար կիրառվում է հəmməy բոլոր, ամեն դերանունը՝ սօ հետադրության համադրությամբ՝

Lankon dınyoədə həmməysə reçinə
səhəre.

*Լենքորանն աշխարհում
ամենագեղեցիկ քաղաքն է:*

Həmməysə çokə zoə Rabile.

Ամենալավ տղան Ռաբիլն է:

Վերջին շրջանում թալիշերենի վրա թյուրքական ազդեցության հետևանքով լեզվում բավականին մեծ տարածում է գտել գերադրական աստիճանի կազմության ժամանակ թյուրքական ծագման ձո ամենա բառի կիրառությունը՝ ձո yolə kə ամենամեծ տունը, ձո bevcə səxan ամենավատ խոսքը և այլն:

Գերադրական աստիճանով դրված ածականի հետ կիրառվող հոգնակի թվով գոյականներից մեկը առանձնացնելու համար կիրառվում է gıləyni բառը, ընդ որում՝ հայերենի բացառական հոլովի իմաստն այս կառույցում արտահայտվում է ədə հետադրությամբ՝

Im piyəmerd çı səhəri həmməysə
xəymandə odəmonədə gıləyniye.

*Այս ծերունին քաղաքի ամենաբարի
մարդկանցից մեկն է:*

Həmməysə gəncinə zivononədə
giləyni erməniyə zivone.

*Ամենահարուստ լեզուներից մեկը
հայերենն է:*

10.3. *Իժտոն անդրադարձ դերանունը*

Թալիշերենում կա միայն մեկ անդրադարձ դերանուն՝ *իժքը*, որը սպասարկում է բոլոր դեմքերը և չունի հոգնակի թիվ. առանձին կիրառության դեպքում նշանակում է *իժքը*, *նա իժքը*, մյուս դեմքերի իմաստն արտահայտելու համար այս դերանվան հետ գործածվում են նաև համապատասխան անձնական դերանունները՝ *az* *իժտոն էս իժքս*, *ti* *իժտոն դու իժքդ*, *əmə* *իժտոն մենք իժքներս* և այլն:

Բացի ուղիղ ձևից՝ այս դերանունը ունի նաև սեռական՝ *իժտ*, և հայցական՝ *իժտոն* հոլովաձևեր: Սեռական հոլովաձևը կիրառվում է որպես ստացական դերանուն, նախադասությունների մեջ հանդես է գալիս հատկացուցչի շարահյուսական պաշտոնով և այս դեպքում, ելնելով սույն ձևի արտահայտած իմաստաբանական արժեքից, փաստորեն սպասարկում է միայն երրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերը՝ նշանակելով «իր, իրենց»՝

Rabil *իժտ* kitobi kifiku bekardedə.

*Ռաբիլն իր գիրքը հանում է
պայուսակից:*

Əvon *իժտ* milləti həxədə hiççi
zinedənin.

*Նրանք իրենց ազգի մասին ոչինչ
չգիտեն:*

Նշենք, որ *իժտ* դերանունը, կիրառվելով *bə*, *bo* և *de* նախադրությունների հետ, թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում շատ հաճախ կցվում է անմիջապես դրանց, ինչի արդյունքում 1 ձայնավորը սղվում է՝ առաջ բերելով *bəʃtə*, *boʃtə* և *deʃtə* ձևերը՝

Əv *deʃtə* dusti bə kə omedə.

Նա իր ընկերոջ հետ տուն է գալիս:

Məryəm *bəʃtə* di ogardedəbe.

*Մարիամն իր գյուղ էր
վերադառնում:*

Çı boğiku *boʃtə* zoə gəysi vardedə.

*Այգուց իր որդու համար ծիրան է
բերում:*

Հայցական լծանի ձևը գործածվում է նոմինատիվ տիպի նախադասություններում (նախադասության նոմինատիվ և էրգատիվ կառույցների մասին կխոսվի հետագա բաժիններում)՝ հանդես գալով բոլոր դեմքերի և թվերի հետ ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնով՝

Յո՛ւ լծանի օճայնոճոճոճո՛ւ քննոճոճո՛ւ:

Յոճոճ լծանի հոճիգոճոճոճո՛ւ տոլիճ
քննոճոճոճո՛ւ:

Նա ինքն իրեն հայելու մեջ տեսնում է:

*Մենք մեզ իսկապես թալիշ ենք
համարում:*

Բառապաշար

pərəndə, kijə	թոշուն	kif	պայուսակ
bino karde	սկսել	bekarde	հանել
ğəhvə	սուրճ	millət	ազգ, ժողովուրդ
çay	թեյ	ğəysi	ծիրան
tel	դառը	ovəynə	հայելի
dınyo	աշխարհ	həğigətən	իսկապես
zıvon	լեզու	ingilisə zıvon	անգլերեն
gəncin	հարուստ	peştıpur be	վստահ լինել
hətto	նույնիսկ	məmləkət	երկիր
məşhur	հայտնի	pok	մաքուր
ənivışt	գրող	gol	լիճ
tərcumə karde	թարգմանել	ru	գետ
həmkor	գործընկեր	hırhovuj	լայնարձակ
nəinki	ոչ միայն	çimən	մարգագետին
bəlkəm	այլև	pəydo be	գտնվել, լինել
vətən	հայրենիք	bemisl	աննման
fəxr karde	հպարտանալ	paytaxt, sərşəhər	մայրաքաղաք
tarixən	պատմականորեն	ğədim	հին
sahil	ափ	mıxtəlif	տարբեր
astovə	աստղ	əbədi	հավերժական
dıroz	երկար	ironi	իրանական
tədgığ karde	ուսումնասիրել	befoydə	անօգուտ
kuto	կարճ	cigəmand	քաջ
boho	թանկարժեք	zumand	ուժեղ
tənbəl	ծույլ	xos	լավ, սիրելի

Տեքստ 1

Vistı penc sorisə veye ki, Կımı moə Կı kişvəri həmməysə yolə universitetədə ko kardədə. Əv ingilisə zıvoni miəlliməye iyən ım zıvoni vey Կok zinedə. Moə hejo bəştə tələbon votedə ki, ingilisə zıvon Կı dınyo ən gəncinə zıvononədə gıləyniye, əmma əv həmonə zəmonədə peştıpure ki, Կəmə inə tolişə zıvon həmməysə reçinə zıvone və hətto ingilisə iyən Կı Avropə co zıvononsə ցədime. Ha ruj Կımı moə boştə tələbonro ingilisə məşhurə ənıvıştən koon bardədə, əvon ım mətnon handedən iyən bə tolişi tərcumə kardedən. Kali vaxtonən moə dəştə həmkoron bə şəhəri həmməysə Կokə kinoteatronədə gıləyni şedə iyən ingilisi zıvonədə ən tojə filmon diyə kardədə. Həm Կımı moə, həməն Կəy həmkoron vey Կokə miəllimonin, əmma bomıro iglə Կımı moə həmməysə Կokə iyən ağılmandə miəllime, bəlkəm əv Կı dınyo həmməy jenonsə xəymand iyən reçine.

Տեքստ 2

Կəmə vətən Tolişiston dınyo dimisə həmməysə reçinə, şinə, həmməysə əzizə zəmine. Tolişiston Կı dınyo xəyli məmləkətonsə ցədəliye, əmma ən ցəşəngə bandon, ən pokə golon iyən ruyon, həmməysə hırhovujə Կimənon iyo pəydo bedən, iyən tolişə millət dəştə ցədə, eyni vaxtədə bemisilə vətəni xəyli fəxr kardədə. Tolişistoni paytaxt Lankon Կı kişvəri ən yolə şəhərə ki, Kaspi diyo kənoədə vəցə bedə. Կəmə xosə vətəni əmandə şəhəron, Lik, Ostor, Masalon, Biləsıvo iyən Vargədz, Lankonisə ցədən, əmma əvonən vey reçinin.

Կəmə xəլց tarıxən, ցədime vaxtonku Կı dınyo həmməysə yolə gol Kaspi diyo kənoədə jiedə. Կəy sahilon vey ցəşəngin. Ha sor toviştonədə həm Կı Tolişistoni mıxtəlifə şəhəronku, həməն co kişvəronku xəyli odəmon bo dinci sero iyo omedən. Əmə dəştə vətəni vey fəxr kardədəmon.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

Ա) 1. Մորաքրոցս տղան միշտ նստում էր իրենց տան բարձր տանիքի վրա և նայում էր աստղերին: 2. Այս գիրքը ավելի կարևոր և հետաքրքիր է, քան այդ գիրքը: 3. Ալի Նասիրը թալիշ ամենահայտնի բանաստեղծներից մեկն է: 4. Թալիշական լեռների ամենաբարձր լեռը Սավալունն է: 5. Ամեն

երեխա էլ իր մայրիկի համար ամենագեղեցիկն ու ամենալավն է: 6. Նա ուսուցիչ է, դպրոցում է աշխատում և միշտ իր աշակերտների հետ այցելում է տարբեր թանգարաններ ու կինոթատրոններ: 7. Դուք ձեր ուսանողներին ասում եք, որ աշխարհի ամենագեղեցիկ ու ամենահարուստ լեզուներից մեկը թալիշերենն է: 8. Մորաքրոջս տունը մեր տնից մեծ չէ, բայց այն շատ գեղեցիկ է և հարմարավետ: 9. Այս դասարանի ամենախելացի աղջիկը Մարիամն է, նա նույնիսկ Լեյլայից ավելի ինչլացի է: 10. Ես հաճախ էի գնում քաղաքի ամենամեծ գրադարան և կարդում էի այդ գրողի ամենահետաքրքիր գործերը:

Բ) Երևանը աշխարհի ամենահին ու գեղեցիկ քաղաքներից է: Երևանը նույնիսկ «հավերժական քաղաքից»՝ Հռոմից էլ ավելի հին է: Մեր քաղաքում շատ զբոսայգիներ, գեղեցիկ շենքեր, ընդարձակ պողոտաներ, ժամանակակից կինոթատրոններ ու սրճարաններ կան: Ես ապրում եմ Արշակունյաց պողոտայում: Այն Երևանի ամենաերկար փողոցն է, դրա երկարությունը մոտ 7 կիլոմետր է: Ես և Անահիտը ուսանողներ ենք, սովորում ենք Հայաստանի ամենամեծ համալսարանում՝ Երևանի պետական համալսարանում, արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում: Մենք տարբեր իրանական լեզուներ ենք ուսումնասիրում, այդ թվում՝ աշխարհի ամենահին լեզուներից մեկը՝ թալիշերենը:

3. Տրված ածականների համեմատական և գերադրական աստիճաններով կազմել նախադասություններ. barz, befoyda, ġəmin, dıroz, kuto, mıhum, boho, tənbəl, cigəmand, zumand

4. Նախադասությունները լրացնել համապատասխան հետադրություններով և ածականներով.

1. Im jen ə jeni... ..
2. İrəvon çı dınyo həmməy... ... şəhəronədə ğiləyniye.
3. Çəmə sinifi həmməy... ... zoə Şirzade.
4. Əli Nasir ən ... tolışə şaire.
5. Şımə kə çəvon kə... ..

Քերականություն

11.1. Բայերի կազմությունը. պարզ, նախդրավոր և բաղադրյալ բայեր

Թալիշերենում բայերը ըստ կազմության կարելի է բաժանել երեք խմբի՝ պարզ, ածանցավոր և բաղադրյալ բայեր: Ածանցավոր բայերը իրենց հերթին լինում են նախդրավոր և պատճառական:

Պարզ են համարվում այն բայերը, որոնք բաղկացած են երկհիմք բայերի անցյալի բայահիմքից կամ միահիմք բայերի հիմքից (տե՛ս ներքևում) և -e անորոշ դերբայի վերջածանցից, օրինակ՝ *še qnaw, doy taw, noy qnēl, mase lūel* և այլն: Ընդ որում՝ այդ բայերից որոշներում (օրինակ *noy*) հին իրանական ածանցները սերտաճել են արմատի հետ և լեզվի զարգացման ներկայիս փուլում որպես առանձին ձևաբանական տարր չեն ընկալվում, ուստի դասվում են պարզ բայերի շարքին:

Նախդրավոր բայերը կազմվում են հետևյալ հինգ նախդիրներից՝ *o-*, *e-*, *pe-*, *be-*, *də-*: *O-* բայական նախդիրը ունի *hēt, hawawak [ուղղության]* իմաստները և բային հաղորդում է անջատման, զատման, գործողության ավարտի նշանակություն, թեև մի շարք բայերում այն կորցրել է իր իմաստային այդ հատկանիշները, օրինակ՝ *ogarde վերադառնալ, okarde բացել, omande կանգ առնել, դադարել, ogəte պահել, պահպանել* և այլն:

Թալիշերենի *e-* բայական նախդիրը ցույց է տալիս ուղղություն դեպի ներքև, օրինակ՝ *eginie ընկնել, ekarde լցնել, մեջը դնել, egəte փակել, ճգմել, edoy փակել, ծածկել, egarde իջնել, ցած գալ* և այլն:

Pe- բայական նախդիրը թալիշերենում ունի դեպի վերև ուղղության իմաստ, օրինակ՝ *pegəte բարձրացնել, հանել, pebe կանգնել, ոտքի էլնել, peše բարձրանալ, մագլցել, peğande նետել, վեր նետել, pešome* խմել և այլն:

Be- բայական նախդիրն արտահայտում է անջատման, զատման, առանձնացման իմաստ, օրինակ՝ *beğande դուրս հանել, դուրս նետել, beše դուրս գնալ, bevarde դուրս տանել, bekarde դուրս անել, վռնդել* և այլն:

Də- նախդիրն արտահայտում է դեպի ներս ուղղության, հայերենի *մեջ* կապի իմաստն արտահայտող իմաստ՝ *dəğande ներս մտցնել, դնել,*

dəgɒnie մի բանի մեջ ընկնել, դժվարություն քաշել, dəvarde անցնել, dənoy դնել մի բանի մեջ, միացնել և այլն:

Բաղադրյալ բայերը կազմված են անվանական մասից և բայից: Թալիշերենում որպես բաղադրյալ բայերի բաղադրիչ ամենից շատ գործածվում է *անել* բայը՝ *karde*, օրինակ՝ *ko karde աշխատել*, *pəydo karde գտնել*, *tumo karde պատրաստել*, *սարքել*, *ստեղծել*, *ğəbul karde ընդունել*, *համաձայնել* և այլն: Որպես բաղադրյալ բայերի բայական մաս հանդես են գալիս նաև հետևյալ պարզ բայերը՝ *be լինել*, *դառնալ*՝ *doxil be մտնել*, *volo be թափվել*, *ավերվել*, *doy տալ*՝ *cəvob doy պատասխանել*, *ağil doy սովորեցնել*, *խրատել*; *jəy խփել*՝ *gəp jəy խոսել*, *զրուցել*, *dast jəy ձեռք տալ*, *դիպչել*, *barde տանել*՝ *ko barde աշխատել*, *աշխատանք տանել*, *hande կարդալ*՝ *dərs hande սովորել*, *mande մնալ*՝ *səpo mande կանգնել*, *նոքի վրա մնալ* և այլն:

11.2. Բայահիմքեր: Միահիմք և երկհիմք բայեր

Իրանական լեզուներին հատուկ երկհիմք (ներկայի հիմք/անցյալի հիմք) բայական խոնարհման համակարգը թալիշերենում բավականին խախտված է. բայերի մեծ մասը պատմական զարգացման ընթացքում կորցրել է հիմքերից մեկը, և այսօր էլ երկհիմք բայական խոնարհման համակարգից միահիմք համակարգի անցման գործընթացը ինտենսիվորեն շարունակվում է: Պայմանավորված այս հանգամանքով՝ թալիշերենում բայերը բաժանվում են երկու խմբի՝ միահիմք և երկհիմք:

Երկհիմք բայերը թալիշերենում ավելի փոքրաթիվ են, քան միահիմք բայերը: Դրանց խոնարհման հարացույցը կառուցվում է երկու հիմքերի վրա՝ ներկայի հիմք և անցյալի հիմք: Նշենք, որ բայահիմքերի նման բնութագրումն ու անվանումը խիստ պայմանական է, քանի որ անցյալի հիմքով կազմվում է, օրինակ, սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը, իսկ ներկայի հիմքը մասնակցում է նաև անցյալ ժամանակաձևերի կազմությանը: Այդ է պատճառը, որ իրանագիտական գրականության մեջ այս հիմքերը անվանվում են նաև I և II հիմքեր: Երկհիմք բայերի մեծ մասի ներկայի հիմքերի կազմությունը համաժամանակյա քննության տեսակետից անբացատրելի է, ուստի այդ բայերի ներկայի հիմքերը պետք է պարզապես մտապահել (ամենահաճախ կիրառվող երկհիմք բայերի

ներկայի հիմքերին կարող էք ծանոթանալ Հավելված 1-ում): Ինչ վերաբերում է II հիմքին, ապա առանց բացառության բոլոր երկհիմք բայերի անցյալի հիմքը կազմվում է անորոշ դերբայից՝ -e վերջավորության հատմամբ, օրինակ՝ *թե - թ- գնալ*, *օմե - օմ- գալ*, *կարդե - կարդ- ածել* և այլն:

Միահիմք բայերը անհամեմատ մեծ թիվ են կազմում: Լեզվի պատմական զարգացման ընթացքում այդ բայերի հիմքերից մեկը անհետացել է. որոշ բայեր պահպանել են միայն ներկայի, իսկ որոշ բայեր էլ՝ միայն անցյալի հիմքը: Ինչպես երկհիմք բայերի անցյալի հիմքը, միահիմք բայերի միասնական հիմքը ևս ստացվում է՝ բայից հատելով անորոշ դերբայի -e վերջավորությունը՝ *ցոտե - ցոտ- վերցնել*, *բռնել*, *հիտե - հիտ- քնել*, *զինե - զին- իմանալ*, *հանդե - հանդ- կարդալ* և այլն:

11.3. Անանցողական բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևեր

Պայմանավորված թալիշերենում երգատիվ համակարգի գոյությամբ՝ մի շարք ժամանակաձևեր, այդ թվում՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, կազմվում է տարբեր եղանակներով՝ կախված բայի անցողական կամ անանցողական լինելու հանգամանքից: Ինչպես գիտենք, անցողականությունը բայի ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկությունն է, ըստ այդմ՝ ունենք բայերի երկու խումբ՝ անցողական բայեր, որոնք ընդունում են ուղիղ խնդիր լրացում, և անանցողական բայեր, որոնք ուղիղ խնդիր լրացում ընդունել չեն կարող: Դեռևս դիտարկենք միայն երկրորդ՝ անանցողական բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալի կազմությունը:

Մի անցյալ ժամանակակետում առանց տևականության կատարված-ավարտված գործողություն ցույց տվող անցյալ կատարյալ ժամանակաձևը անանցողական բայերի դեպքում կազմվում է միահիմք բայերի միասնական հիմքից կամ երկհիմք բայերի անցյալի հիմքից՝ հետևյալ դիմային վերջավորությունների հավելմամբ՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-im/-m	-imon/-mon
2-րդ դեմք	-is/-ş	-iyon
3-րդ դեմք	-e	-in/-n

Az bə kə şim.
 Əli çı universitetiku ome.
 Şimə zinə di hitiyon.

Ես տուն գնացի:
 Ալին համալսարանից եկավ:
 Դուք երեկ ուշ քնեցիք:

Անանցողական բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևի ժխտա-
 կան խոնարհումը կազմվում է ու- նախամասնիկի օգնությամբ, որը
 կցվում է բայահիմքից անմիջապես առաջ՝ ուհիտim *չքնեցի*, ուֆե *չգնաց*,
 ուտիլimon *չփախանք* և այլն: Նախդրավոր և բաղադրյալ բայերի ժխտական
 խոնարհման դեպքում ու նախամասնիկը դրվում է նախդիրներից և բայի
 անվանական մասերից հետո՝ դրանց և բայահիմքի միջև՝ onigardim
 չվերադարձա, benişimon *դուրս չեկանք*, eniginin *չընկան*, kuç nıkardiyon
չքոչեցիք և այլն:

Զայնավորով սկսվող բայերի անցյալ անկատարի ժխտականի կազ-
 մության ժամանակ ու նախամասնիկի ձայնավորը սղվում է՝ nomim *չեկա*,
 nəştimon *վեր չկացանք*, nəşmardin *չհաշվեցին* և այլն:

Բառապաշար

okarde	բացել	bevarde	դուրս տանել
ogəte	պահել, պահպանել	dəğande	ներս մտցնել
omande	դադարել	dəginie	մի բանի մեջ ընկնել
eginie	ընկնել	dənoy	մտցնել
ekarde	լցնել	dəvarde	անցնել
egarde	իջնել, ցած գալ	pəydo karde	գտնել
egəte	փակել, ճզմել	tumo karde	սարքել, նորոգել
edoy	ծածկել, փակել	ğəbul karde	ընդունել
pegəte	բարձրացնել	doxil be	մտնել
pebe	կանգնել	volο be	թափվել, ավերվել
peşe	բարձրանալ	cəvob doy	պատասխանել
peğande	նետել, վեր նետել	ağıl doy	խրատել
peşome	խմել	dast je	ձեռք տալ, դիպչել
beğande	դուրս հանել	ko barde	աշխատանք տանել

beşe	դուրս գնալ	mande	մնալ
bekarde	դուրս անել, վռնդել	səpo mande	ոտքի կանգնել
dərs hande	սովորել	xaric	արտասահման
tile	փախչել	pəynə	երեկ չէ առաջին օրը
kuç karde	քոչել	ğatər	գնացք
əşte	կանգնել	rəse	հասնել
aşmarde	հաշվել	osınəro	երկաթուղի
ğonəğ	հյուր	çəş karde	սպասել
penışte	նստել, հեծնել	oşko be	պարզվել
co gılə	մեկ այլ, մեկ ուրիշ	həmsinif	համադասարանցի
marde, bə	մահանալ	baxtəvərətiku	բարեբախտաբար
rəhmət şe			
dəğigə	րուպե	əvəsor	գաբուն
hande	երգել	eme	իջնել, ցած գալ
perəxe	փրկվել, ազատվել	nəve	փնտրել
sire	ծիծաղել	tase	խեղդվել
bəme	լացել		

Տեքստ

Adil, çımı ən çokə dustonədə gıləyni, senzə sorisə vey deştə xıyzoni xaricədə jimon kardedəbe. Dəvardə mangədə əv bə Tolışiston oğarde bo ko kardero. Isət əvon Likədə jiedən. Pəynə az de çımı jeni iyən hırdənon çı Lankoniku de maşini bə çəvon kəy şimon. Vaxtı ki bə Lik rəsimon, Adil, çəy jen iyən boə ıstə ğonəğon çəş kardedəbin. Peşo əmə bə Adili maşini penıştimon iyən bə şəhəri həmməysə reçinə restoranonədə gıləyni şimon. Əyo oşko be ki, boəməro co gılə surprizən heste: çımı əzizə dust, çəmə həmsinif Babəkən əyo be. Ə ruj çımı jimoni ən xoşə rujonədə gıləyni be.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Երեկ հիվանդ էի, դպրոց չգնացի, մնացի տանը: 2. Ռաբիլն ու Ալին անցյալ ամիս նստեցին գնացք ու իրենց ընկերոջը տեսնելու համար մեկնեցին Մոսկվա: 3. Դուք վազեցիք ավտոբուսի հետևից, բայց չհասաք: 4. Անցյալ տարի մահացավ թալիշ ժողովրդի մեծագույն բանաստեղծներից մեկը: 5. Նրանց ընտանիքը Լենքորան չվերադարձավ, նրանք մինչև հիմա Մոսկվայում են ապրում: 6. Այդ մարդը տան տանիքից ընկավ, բայց բարեբախտաբար չմահացավ: 7. Արդեն շատ ուշ էր, ընկերներս մնացին սրճարանում, իսկ ես տուն եկա և քնեցի: 8. Մայրիկս տանը չէ, 15 րոպե առաջ նա դուրս եկավ: 9. Գարունը եկավ, օրերը տաքացան, հիմա նորից ծառերի վրա թռչուններն են երգում: 10. Երբ դու ընկերոջդ հետ հեռախոսով էիր խոսում, քույրդ սենյակից դուրս եկավ և շուկա գնաց:

3. Տրված բայերով կազմել նախադասություններ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով. eme, nəve, omande, pegarde, perəxe, sire, tase, bəme, pebe, nişte

4. Տրված նախադասությունները դարձնել ժխտական.

1. Adil zinə bəştə kə ogarde.
2. Az məktəbiku omim iyən bə teatr şim.
3. Əvon kəku beşin, bə avtobusi peniştin iyən diku şin.
4. Tı boçi siriş?
5. Şimə Lankoniku de maşini omiyon?

ԴԱՍ 12

Քերականություն

12.1. Անձնական-կցական դերանուններ

Թալիշերենի անձնական-կցական դերանուններն են՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-im/-m	-imon/-mon
2-րդ դեմք	-i	-on
3-րդ դեմք	-is/-ş	-işon/-şon

Ի տարբերություն իրանական շատ լեզուների՝ թալիշերենում կցական դերանունները պատկանելություն ցույց չեն տալիս. այդ գործառնությունը դրանք խիստ հազվադեպ են հանդես գալիս, այն էլ հիմնականում բանաստեղծություններում և ժողովրդական բանահյուսական նմուշներում (պատկանելություն արտահայտելու համար կիրառվում են ստացական դերանունները, տե՛ս §7.3): Կցական դերանունները ունեն երկու հիմնական գործառնությ. ամենից առաջ դրանք կիրառվում են էրգատիվ նախադասություններում և արտահայտում են նախադասության սուբյեկտի դեմքն ու թիվը: Կցական դերանունների երկրորդ գործառնությթը *ունենալ* բայի իմաստն արտահայտելն է. այս դեպքում դրանք կիրառվում են *heste* բայի հետ զուգահեռ:

12.2. Անցողական բայերի անցյալ կատարյալը

Ինչպես արդեն նշեցինք, թալիշերենում մի շարք ժամանակաձևեր ունեն կազմության զուգահեռ ձևեր՝ կախված բայի անցողական կամ անանցողական լինելու հանգամանքից և պայմանավորված լեզվում էրգատիվ համակարգի գոյությամբ: Անանցողական բայերի անցյալ կատարյալի կազմությունն արդեն քննարկվեց, այժմ տեսնենք, թե ինչպես է կազմվում անցողական բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը:

Անցողական բայերի դեպքում անցյալ կատարյալի կազմության ժամանակ որպես դիմային վերջավորություններ հանդես են գալիս անձնա-

կան կցական դերանունները, որոնց կցվում է էրգատիվության ցուցիչ -e ձայնավորը: Այսպես, անցողական բայերի անցյալ կատարյալի կազմության ժամանակ կիրառվող դիմային վերջավորությունները հետևյալն են՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-ime/-me	-imone/-mone
2-րդ դեմք	-ie	-one
3-րդ դեմք	-iše/-še	-išone/-šone

Կցական դերանուններից և -e ձայնավորից կազմված այս դիմային վերջավորությունները կցվում են միահիմք բայերի միասնական հիմքին կամ երկհիմք բայերի անցյալի հիմքին, օրինակ՝ *kardime ես արեցի*, *hardiše նա կերավ*, *domone մենք տվեցինք*, *kıstıšone սպանեցին* և այլն: Պետք է նշել, որ կցական դերանունները շատ հաճախ անջատվում են խոնարհվող բայից և կցվում էրգատիվ նախադասության այլ անդամների, և այս դեպքում -e վերջավորությունը կցվում է անմիջապես բայահիմքին՝ ձևով նույնանալով անորոշ դերբային: Այս խնդիրը կքննարկվի հաջորդ ենթագլխում, այստեղ պարզապես նշենք, որ, պայմանավորված կցական դերանունների այս հատկանիշով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1 կցական դերանունը և e վերջավորությունը միասին հանդես գալով՝ առաջացնում են արտասանական դժվարություն, եզակի թվի երկրորդ դեմքում 1 կցական դերանունը մշտապես առանձնանում է բայից և կցվում կա՛մ ուղիղ խնդրին, կա՛մ նախադասության այլ անդամի, իսկ -e-ն կցվում բայահիմքին, այսպիսով, *karde*, *harde*, *kıšte* ձևերը էրգատիվ նախադասություններում թարգմանվում են համապատասխանաբար *արեցիր*, *կերար*, *սպանեցիր*:

Ինչպես անանցողական բայերի դեպքում, անցողական բայերի անցյալ կատարյալի ժխտական խոնարհումը ևս կազմվում է ու- նախամասնիկի օգնությամբ, որը դրվում է բայահիմքից առաջ, իսկ նախդրավոր և բաղադրյալ բայերի դեպքում՝ նախադրության ու բահայիմքի կամ անվանական մասի և բայահիմքի միջև, օրինակ՝ *nı kardime չարեցի*, *cəvob nı domone չպատասխանեցինք*, *benıvardıše դուրս բերեց* և այլն:

12.3. Նումինատիվ և էրգատիվ նախադասություններ

Ըստ նախադասության շարահյուսական կառուցվածքի՝ լեզուները բաժանվում են մի քանի տիպերի՝ նումինատիվ, էրգատիվ, ակտիվ և այլն: Ամենից հաճախ համեմատության և հակադրության մեջ են դրվում նումինատիվ և էրգատիվ լեզուները՝ դրանց միջև առկա նմանությունների և տարբերությունների պատճառով: Թալիշերենը պատկանում է իրանական այն լեզուների շարքին, որոնք այս կամ այն չափով պահպանել են դեռևս հին իրանական լեզվական դարաշրջանում առաջ եկած էրգատիվ համակարգը: Թալիշերենում նախադասության էրգատիվ կառույցն ի հայտ է գալիս միայն սահմանական եղանակի անցյալ կատարյալ, վաղակատար և վաղակատար անցյալ ժամանակաձևերում այն դեպքում, երբ նախադասության ստորոգյալը անցողական բայ է: Մնացած բոլոր դեպքերում թալիշերենի նախադասությունները ունեն նումինատիվ կառույց, այսինքն՝ նախադասության ենթական դրվում է ուղղական հոլովով, ստորոգյալը համաձայնեցվում է ենթակայի հետ, իսկ ուղիղ խնդիրն ընդունում է թեք հոլով, օրինակ՝

Az ha ruj məktəbədə Rabili
vindedəm.

Adil ıstə kitobi kifiku bekardedə.

*Ես ամեն օր Ռաբիլին տեսնում եմ
դպրոցում:*

*Ադիլը պայուսակից հանում է իր
գիրքը:*

Նախադասության էրգատիվ կառույցն էականորեն տարբերվում է նումինատիվից: Էրգատիվ նախադասության ենթական դրվում է թեք հոլովով, ուղիղ խնդիրը, ընդհակառակը, ուղղական հոլովով, իսկ ենթակայի դեմքն ու թիվն արտահայտվում են կցական դերանունների միջոցով, որոնք ազատ տեղաշարժելի են նախադասության մեջ, կարող են առանձնանալ բայից և կցվել նախադասության ցանկացած անդամի՝ բացի ենթակայից, օրինակ՝

Mı məktəbədə Rabil vindime.

Mı məktəbədə Rabilım vinde.

Adili kitob kifiku bevardışe.

Adili kitobış kifiku bevarde.

Ես դպրոցում Ռաբիլին տեսա:

Ադիլը գիրքը հանեց պայուսակից:

Ինչպես գիտենք, անձնական դերանուններից թեք ձևեր ունեն միայն եզակի թվի առաջին և երրորդ դեմքերը, հետևաբար երգատիվ նախադասություններում մյուս անձնական դերանունները կա՛մ դրվում են ուղիղ ձևով, կա՛մ կարող են ընդհանրապես չգործածվել, քանի որ կցական դերանուններն արդեն իսկ արտահայտում են ենթակայի դեմքի ու թվի իմաստը: Եզակի թվի երկրորդ դեմքի դեպքում անցյալ կատարյալում կցական դերանունը բայի խոնարհված ձևում երբեք չի մնում, այլ կցվում է ուղիղ խնդրին կամ նախադասության այլ անդամի՝

Դի ցի՛ւ քարձե՛

Դու ի՞նչ արեցիր:

Բə ıřtı dustı həğigətı vote.

Ընկերոջդ ճշմարտությունն ասացիր:

Boşıməro gıləy çokə kitob vardımone.

Ձեզ համար մի լավ գիրք բերեցինք:

Şımə kıştone ə merd.

Դուք սպանեցիք այդ մարդուն:

Պետք է նշել, որ այն բաղադրյալ բայերը, որոնք թեև իրենց արտահայտած իմաստով անանցողական են, բայց որպես դրանց բայական մաս հանդես են գալիս այնպիսի անցողական բայեր, ինչպես *karde, doy, jəy* և այլն, բնականաբար խոնարհվում են անցողական բայերի նման, հետևաբար նախադասությունները, որոնց ստորոգյալը նման բայ է, ունենում են երգատիվ կառույց՝

Prezidenti de tələbəon vindemon
kardışe.

*Նախագահը հանդիպեց ուսանողների
հետ:*

Mı cəvob dome ki, tı kədə niş.

Ես պատասխանեցի, որ դու տանը չես:

Շատ հաճախ երգատիվ նախադասության ենթակայի դեմքն ու թիվը նշող կցական դերանունները անջատվում են բայական մասից և կցվում հենց այդ բայերի անվանական մասերին՝ *vindemonım karde* *հանդիպեցի*, *cəvobı doy* *պատասխանեցիք*, *gəpımon je* *խոսեցինք* և այլն:

Բառապաշար

kişte	սպանել	prezident	նախագահ
çiç	ինչ	rivos	աղվես
həğigət	ճշմարտություն	lo	ագռավ
tikə	կտոր	pəni	պանիր

pəre	թռչել	tərəf	կողմ
dumo	հետևից	dəmande	սկսել
yaltəğəti	շողոքորթություն	vang karde	ձայն տալ
por	փետուր	anə, anəndə	այնքան, որքան
viriskəyn	փայլուն	sədo	ձայն
ehanə	եթե	rost	ճիշտ
podšo	արքա	ğır-ğır karde	կռկռալ
gəv	բերան	hiləgor	խորամանկ
rəyrə	արագ	numrə	համար
dəvət karde	հրավիրել	musiği	երաժշտական
tosə, tobə,	մինչև	raxs karde	պարել
detobə			
nomə	նամակ	dırnie	պատռել
xəşəldon	աղբաման	sıkkə	մետաղադրամ
mərkəzi	կենտրոնական	arıšte	կոտրել
rıkin be	բարկանալ	əleng	արագիլ
lonə	բույն	dute	սարքել, կառուցել

Տեքստ 1

Rıvos iyən lo

Loy zəminisə i tikə pəniş vinde, əviş pegəte iyən bə gıləy barzə do tərəfi pəre. Gıləy rıvosi vindışe əv, çəy dumo şe, doy jiədə pemande, dəmande yaltəğəti karde. Əy do jio vangış karde: “Bəh-bəh! Əzizə lo, tı vey reçiniş. İştı poron anə ğəşəng iyən viriskəynin. Peştıpurim ki, ıştı sədo bənə ıştı poron ğəşənge, iyən ehanə az rost votedəm, tı çı həmməy pərəndon podşoş”. Lo çı rıvosi sıxanonku vey şo be iyən bo ğır-ğır kardero ıştə gəviş okarde. Əv ki gəviş okarde, çı pəni tikə çəy gəviku bə zəmin eginie. Hiləgorə rıvosi pegətişə əv iyən rəyrə vite.

Տեքստ 2

Zinə mı Lankoni ən yolə xiyobonədə Rabilım vinde. Əv deştə duston əyo nəvədəbe, azən de çımı hovə bo tojə məşo hıriero bə dukon şedəbim. Əmə gıləy restorani neziədə vindemon kardımone. Təğribən da dəğiğə gəpımon je, Rabili

ıřtə telefoni numrəş bə mı doy, çəyo bəřtə duston tono ogarde iyən bə kinoteatr řin. Əməən bə dukoni rəsimon iyən həm bomıro, həməən bo çımı hovəro tojə reçinə məşoon hırimone. Imruj rəbədə Rabili bə mı zangıř karde, bə konsert dəvət kardıře. Gıləy vey çokə tolıřə musıǵiyə ansambli konsert be. Tosə řəvi əyo mandimom, handımone, raxs kardımone. Vist dəǵıǵə bənav bə kə omim. Vey çokə iyən mərəǵinə ruj be.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել և պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Ես արագ բացեցի պատուհանը, սառը օդն անմիջապես սենյակ լցվեց:
2. Դու կարդացիր այդ նամակը, պատռեցիր այն և աղբամանի մեջ նետեցիր:
3. Նա իր գրպանից հանեց մի քանի մետաղադրամ, սեղանին դրեց և դուրս եկավ:
4. Մենք հանդիպեցինք այդ հին քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում և զրոսնելու համար այգի գնացինք:
5. Երեկ չե առաջին օրը մեր ուսուցիչը դպրոցում էր, դուք նրան չտեսա՞ք:
6. Նրանք այդ կնոջ հրավերը չընդունեցին և նրա տուն չգնացին:
7. Ռաբիլն ու Ադիլը երկար սպասեցին իրենց ընկերոջը, բայց նա չեկավ:
8. Երեկ ես տեսա այդ ֆիլմը և չհավանեցի:
9. Այդ կանայք մաքրեցին տունը և շատ համեղ ապուր եփեցին:
10. Երեխան կոտրեց այդ գեղեցիկ ծաղկամանը, սակայն նրա մայրիկը չբարկացավ:

3. Տրված նախադասություններում կիրառված ժամանակաձևերը վերափոխել անցյալ կատարյալի՝ կատարելով համապատասխան փոփոխություններ.

1. Az ıřtı dusti kuçədə vindedəm.
2. Novruzəli ə mərəǵinə kitobi bəřtə boə doydə.
3. Zoə bə okardədə iyən otaǵədə ıřtə hovə vindedə.
4. Tı dəftəri kifiku bekardədəş.
5. Çəmə kə kumisə əlengon lonə dutedən.

4. Տրված բայերով կազմել նախադասություններ՝ անցյալ կատարյալ ժամանակաձևի կիրառմամբ. harde, soxte, sute, řıřte, pate, məse, nivıřte, baste, ekarde, dənoy:

Քերականություն

13.1. Դասական թվականներ

Թալիշերենում դասական թվականները կազմվում են քանակական թվականներին ավելացնելով -min կամ -minci վերջածանցները, որոնցից առաջինը ունի իրանական ծագում, իսկ երկրորդը կազմված է իրանական -m և թյուրքական -inci ածանցների համադրությամբ: Դասական թվականները միշտ նախադաս դիրք են գրավում գոյականի նկատմամբ և նախադասությունների մեջ հանդես են գալիս որոշչի շարահյուսական պաշտոնով, ընդ որում՝ -min վերջածանցով կազմված դասական թվականների դեպքում որոշիչ-որոշյալ կապն արտահայտվում է մեզ արդեն հայտնի -ə վերջավորությամբ՝ *iminə sor առաջին տարի, dıminə sinif երկրորդ դասարան, vıstı iminə əsr քսանմեկերորդ դար* և այլն, այնինչ -minci վերջավորությամբ դասական թվականները չեն ընդունում այդ վերջավորությունը՝ ուղիղ ձևով դրվելով գոյականից առաջ՝ *iminci ruj առաջին օր, seminci mang երրորդ ամիս, i sa pencominci miştəri հարյուրհիսուներորդ հաճախորդ* և այլն:

Առաջին դասական թվականի համար կիրառվում է նաև արաբական ծագման ənvəl, ənvəlin ձևերը, որոնց երբեմն նույնիսկ կցվում է -minci վերջածանցը՝ *ənvələ/ənvəlinə maşın առաջին մեքենա, ənvəlminci bə առաջին դուռ* և այլն:

Թալիշերենում տարեթվերը նշելու համար օգտագործվում են ոչ թե քանակական, այլ դասական թվականները՝ *dı həzo ponzəminə sor 2015 թվական, i həzo nəvsa nəve seminə sor 1993 թվական* և այլն:

13.2. Ունենալ բայի իմաստի արտահայտումը թալիշերենում

Թալիշերենում որպես այդպիսին գոյություն չունի հայերենի *ունենալ* բային համարժեք բայ. դրա իմաստն արտահայտվում է անձնական կցական դերանունների և *heste* պակասավոր բայի օգնությամբ: Նախադասության ենթակայի դեմքն ու թիվն արտահայտում են կցական

դերանունները, իսկ heste բայը բոլոր դեմքերի ու թվերի համար մնում է անփոփոխ՝

Giləy vey çokə dustım heste.

Մի շատ լավ ընկեր ունեմ:

Xəyli kitobışon heste.

Շատ գրքեր ունեն:

Maşını heste, boçi romedəniş.

Մեքենա ունես, ինչու՞ չես վարում:

Եթե նախադասության եթականի շարահյուսական պաշտոնով հանդես է գալիս դերանունը, և այն գեղջված չէ, ապա կիրառվում են ստացական դերանունները, իսկ գոյականով արտահայտված ենթական դրվում է թեք հոլովով՝ ոչ պարտադիր կերպով ուղեկցվելով նաև ֆո նախադրությամբ, այսպես՝

Çəmə yolə reçinə kəmon heste.

Մենք մեծ, գեղեցիկ տուն ունենք:

Miəllimi xəyli şogirdoniş heste.

Ուսուցիչը շատ աշակերտներ ունի:

Çı Muradi giləy tojə maşınış heste.

Մուրադը մի նոր մեքենա ունի:

Նշենք, որ կցական դերանունների դիրքը նախադասության մեջ կայուն չէ, դրանք կարող են նաև մտնել heste բայի կազմի մեջ՝ դրվելով hest բայարմատի և e վերջավորության միջև, բացառությամբ եզակի թվի երկրորդ դեմքի, օրինակ՝

Çəy giləy zoə iyən dı gilə kinə hestişe.

Նա մի տղա և երկու աղջիկ ունի:

Çəvon xəyli pul hestişone.

Նրանք շատ փող ունեն:

Çəmə yolə boğ hestimone.

Մենք մեծ այգի ունենք:

Հայերենի *ունենալ* բայի անցյալ անկատար ձևը արտահայտվում է *be լինել* բայի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի *be* ձևի միջոցով, որը դրվում է heste բայի հիմքից հետո՝

Çımı giləy reçinə olətim hestbe.

Ես մի գեղեցիկ զգեստ ունեի:

Ə şairi koon yolə əhmiyətişon
hestbe.

*Այդ բանաստեղծի գործերը մեծ
կարևորություն ունեին:*

Çımı dusti moə dı gilə sipə
hestişbe.

Ընկերոջս մայրը երկու շուն ուներ:

Ժխտական ձևերը կազմվում են ներկայում ու, անցյալում՝ ու՞նի
բառերի օգնությամբ, որոնք նույնպես անփոփոխ են բոլոր դեմքերի ու
թվերի համար՝

Çımtı pulım ni, tı ımı çok zinedəş.

*Ես գումար չունեմ, դու դա լավ
գիտես:*

Çəy hiç gələ dustı ş nibe.

Նա ոչ մի ընկեր չունի:

13.3. Օ հետադրություն

Թալիշերենի քերականությանը նվիրված աշխատանքներում օ ան-
շեշտ վերջավորության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ
ու տեսակետներ. որոշ հեղինակներ այն դիտարկում են որպես երրորդ
հոլովածու, ոմանք էլ դասում են հետադրությունների շարքին: Մենք ևս
այն դիտարկում ենք հետադրություն. միայն ընդգծենք, որ այս խնդիրը
դեռևս վերջնականորեն լուծված չէ և պահանջում է համակողմանի
ուսումնասիրություն, ուստի բաց թողնելով դասագրքի նպատակների մեջ
չմտնող մանրամասները՝ անցնենք քերականական այս ցուցչի գործա-
ռւյթներին:

Թալիշերենում օ հետադրությունը զանազան իմաստներ կարող է
արտահայտել՝ կախված նախադասության ստորոգյալի իմաստաբանա-
կան արժեքից, դրա հետ կիրառվող նախադրություններից և այլն:

Անկախ կիրառության ժամանակ օ հետադրությունը արտահայտում
է բացառական հոլովի՝ ելակետի, անջատման կամ հեռացման իմաստ:
Այս իմաստով գործածվելիս այն հաճախ ուղեկցվում է նաև *çi* նախա-
դրությամբ՝

Mıxtəlifə məmləkətono omə alimon
gəp jəydəbin çəmə xəlgə həxədə.

*Տարբեր երկրներից եկած
գիտնականները մեր ժողովրդի
մասին էին խոսում:*

İ saat bənav çı kəo beşe.
Çı məktəbo de çımtı dustı omedəm.

*Մեկ ժամ առաջ տանից դուրս եկավ:
Դպրոցից ընկերոջս հետ եմ
վերադառնում:*

Այս դեպքում օ և *ku* հետադրությունները փաստորեն հանդես են գա-
լիս որպես հոմանիշներ և արտահայտում են նույն իմաստը:

Օ հետադրությունը, կցվելով ton կողմ, ուղղություն բառին, արտահայտում է հայերենի մոտ կապի իմաստը և, կախված նախադասության համատեքստից ու ստորոգյալի արտահայտած իմաստից, կարող է նշանակել նաև մոտից՝

Հայ tono şim.	Նրա մոտից գնացի:
Бә ıstı tono ome.	Քեզ մոտ եկավ:

Կիրառվելով бә և bo նախադրությունների հետ՝ օ հետադրությունն արտահայտում է համար կապի իմաստը՝

Бә jenono vilonım varde.	Կանանց համար ծաղիկներ բերեցի:
Bo tını vindeyo omimon.	Քեզ տեսնելու համար եկանք:

Օ-ն առանց այլ հետադրությունների հետ գործածվելիս երբեմն կարող է հանդես գալ նույն գործառնությամբ՝

Nun hirieyo бә dukon şim.	Հաց գնելու համար խանութ գնացի:
---------------------------	--------------------------------

Օ հետադրության օգնությամբ կազմվում են նաև զանազան մակբայներ, օրինակ՝ *dumo ետնից, հետո, peşo այնուհետև, հետո, jio տակից, pio վրայից, վերնից* և այլն: Դրանք ավելի հանգամանորեն կքննվեն դասագրքի հաջորդ բաժիններում:

Բառապաշար

sinif	դասարան	alim	գիտնական
əsr	դար	xəlg	ժողովուրդ, ազգ
mıştəri	հաճախորդ	ton	կողմ, ուղղություն
rome	վարել	jio	տակ
pul	փող	pio	վրա
olət	հագուստ, զգեստ	pəvəndi	սիրահար, նշանած
əhmiyət,	կարևորություն	çəğinde	ճակնդեղ
mihuməti			
lıbut, lıput	շուրթ	həmkurs	համակուրսեցի
ğənd	շաքար	mədəniyət	մշակույթ
ıştirok karde	մասնակցել	tolışşınos	թալիշագետ

məruzə	գեկույց	barədə	մասին
mısobiğə	մրցույթ	firsət	հնարավորություն
curbəcur	տարբեր, զանազան	adət-ənənən	ավանդույթներ

Տեքստ 1

ԹՎ ki, bə mı pəvənde,
Çiç kardedə çəğinde?
Çəy lıputon bo mınə,
Həm şokolat, həm gənde.

Հյուսիսթալիշական ժողովրդական բանահյուսական նմուշ

Տեքստ 2

Dəvardə haftədə az de çımı həmkurson İrəvoni ən yolə universitetədə tolışə milləti, çəmə inə zivoni, mədəniyəti, tarixi həxədə bə gıləy vey mərağinə konfransədə iştirək kardedəbim. Im konfransi vey yolə mıhumətiş hestbe, bə çəy gorə ki, çı Avropə, Asiyə iyən Amerikə məmləkətono məşhurə alimon gəp jəydəbin çəmə xəlgi həxədə. İrəvoni Dovlətiyə Universitetədə ım seminə tolışşinosə konfrans be. İminə jigo konfrans dı həzo pencminə sorədə be. Çımınən çəmə tolışə şinə zivoni həxədə məruzə hestimbe. Çımı dustonən tolışə tarixi iyən mədəniyəti barədə iştə məruzon handışone. Zinə şango Ermənistono ogardimon bə Lankon. Xəyli rozim ki İrəvoni reçinə şəhərədə ə mihumə konfransədə iştirəkım karde.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, անգիր սովորել բանաստեղծությունը:

2. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

3. Թարգմանել թալիշերեն.

1. Ես մի շատ լավ ընկեր ունեի, որ ապրում էր Երևանում և ամեն տարի ինձ տեսակցելու համար Հայաստանից Լերիք էր գալիս: 2. 1996 թվականից սկսած՝ ամեն տարի ամռանը դու Լենքորանից գնում ես գյուղ՝ հանգստանալու: 3. Նա շատ լավ ու հետաքրքիր գրքեր ունի, իսկ դու ոչ մի գիրք չունես: 4. Մենք այդ քաղաքում շատ ընկերներ ունենք, նրանք հիմ-

նականում ապրում են 14-րդ փողոցում: 5. Ձեզ համար այդ համերգը մեծ կարևորություն ուներ, բայց չգիտեմ, թե ինչու չմասնակցեցիք մրցույթին: 6. Նրանք հնարավորություն չունեն Եվրոպա մեկնելու և այդ գեղեցիկ թանգարան այցելելու: 7. Այս փողոցի 147-րդ տանն ապրում է մեր ուսուցիչը, նա երկու շուն և մեկ կատու ունի: 8. Անցյալ տարի ամեն ամիս նա ինձ Թալիշստանից նամակ էր ուղարկում, առաջին անգամ ես նրանից սեպտեմբերին նամակ ստացա: 9. Թալիշ ժողովրդի հայտնի բանաստեղծը մահացավ 2017 թվականի ձմռանը: 10. Մուրադը շատ գործեր ունի, դրանք ավարտելու համար նա այսօր համալսարան չգնաց, մնաց տանը:

4. Կազմել դասական թվականներ տրված քանակական թվականներից և դրանցով կազմել նախադասություններ. 1, 4, 19, 21, 302, 1204, 1993, 1999, 2015, 10000:

5. Բաց թողնված տեղերը լրացնել համապատասխան կցական դերանուններով և թարգմանել հայերեն.

1. Tolışon vey ğədimə xəlğin, çəvon curbəcurə adət-ənənön... heste.
2. Nəvuzi gıləy vey yolə kə hest...e.
3. Ə reçinə kinə çand gılə boə... heste?
4. Zinə çəmə xəyli koon... hestbe, toşə şəvi universitetədə mandimon.
5. İronijon vey gəncinə ədəbiyot hest...e ki, həmməy dınyoədə məşhure.
6. Iştı maşin... heste yaanki de avtobusi bə idorə şedəş?

Քերականություն

14.1. Անցյալի դերբայ

Անցյալի դերբայը կազմվում է երկհիմք բայերի անցյալի հիմքից կամ միահիմք բայերի միասնական հիմքից՝ օ վերջածանցի հավելմամբ՝ *kardə արած, votə ասած, hardə կերած* և այլն: Այս դերբայը համապատասխանում է հայերենի հարակատար դերբային, ցույց է տալիս գործողության արդյունք, դրություն, վիճակ և իր իմաստային հատկանիշներով մոտ է ածականին, ընդ որում՝ իմաստաբանական տեսանկյունից նշանակություն ունի նաև բայի անցողական կամ անանցողական լինելը. եթե անանցողական բայերի անցյալի դերբայը ունի միայն ակտիվ իմաստ՝ *şə qնացած, egotə ընկած, ogardə վերադարձած* և այլն, ապա անցողական բայերի անցյալի դերբայն ունի թե՛ ակտիվ, թե՛ պասիվ իմաստ, այսինքն՝ արտահայտում է նաև կրավորական սեռի իմաստ, համեմատենք՝ *kitobi handə zoə* գիրքը *կարդացած տղան*, բայց՝ *handə kitob* *կարդացած գիրք* (= *կարդացված գիրք*), *doy arıştə hirdən* *ծառը կոտրած երեխան*, բայց՝ *arıştə do* *կոտրած ծառ* (= *կոտրված ծառ*) և այլն:

Վերոբերյալ օրինակները պարզորոշ ցույց են տալիս, որ ինքնուրույն կիրառվելիս անցյալի դերբայն իմաստային հատկանիշներով մոտենում է ածականին և լրացյալի նկատմամբ նախադաս դիրք գրավում, սակայն որևէ լրացուցիչ ձևաբանական ցուցիչ չի ստանում:

Հայերենի հարակատար դերբայի նման թալիշերենի անցյալի դերբայն ունի մեկ առանձնահատկություն ևս. վիճակ, դրություն ցույց տվող բայերի անցյալի դերբայն արտահայտում է նաև ներկա ժամանակի իմաստ՝ *niştə jen* *նստած կին*, *hitə merd* *քնած տղամարդ*՝

Çımı hovə hitə.

Հիմա քույրս քնած է:

Əmə doy jiadə niştəmon.

Մենք ծառի տակ նստած ենք:

Անցյալի դերբայը կարող է կիրառվել նաև գոյականաբար՝ նախադասության մեջ հանդես գալով գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով. այս դեպքում այն կարող է դրվել անգամ թեք հոլովով՝ ընդունելով ձայնավորահանգ բառերի համար այդ հոլովաձևի -y ցուցիչը՝

Iṣṭi votəy az məsədənim.
Çımmı məsəy bə tı votedəm.

*Քո ասածը ես չեմ լսում:
Իմ լսածն եմ քեզ ասում:*

14.2. Անանցողական բայերի ներկա վաղակատարը

Թալիշերենում սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակաձևը ցույց է տալիս անցյալում կատարված, ավարտված, իր արդյունքով կամ հետևանքով ներկայի հետ կապված այնպիսի գործողություն, որին, որպես կանոն, խոստովանում են ակնհայտ էություն (ի տարբերություն սահմանական եղանակի անցյալ կատարյալի, որն, այսպես կոչված, ակնհայտ էության ժամանակաձև է համարվում): Վաղակատար ներկան այն երեք ժամանակաձևերից մեկն է, որոնք, կախված բայի անցողական-անանցողական լինելու հանգամանքից, տարբեր կերպ են կազմվում: Այս դասին կբնարկենք անանցողական բայերի վաղակատար ներկայի կազմությունը:

Անանցողական բայերի վաղակատարը կազմվում է անցյալի դերբայից՝ հետևյալ դիմային վերջավորությունների հավելմամբ՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-m	-mon
2-րդ դեմք	-ş	-yon
3-րդ դեմք	-ø	-n

Ինչպես երևում է աղյուսակից, որպես դիմային վերջավորություններ հանդես են գալիս բայ-հանգույցի՝ ձայնավորահանգ բառերին կցվող ձևերը՝ *oməmon եկել եմ, şəş գնացել ես, eginiəmon ընկել ենք, hitəyon քնել եք, nişəon նստել են* և այլն, բացառությամբ եզակի թվի երրորդ դեմքի, որն ունի զրո վերջավորություն և ձևով համընկնում է հենց անցյալի դերբայի հետ՝ *ogardə վերադարձել է, rəsə հասել է* և այլն:

Ժխտական խոնարհման դեպքում ևս անցյալի դերբայից հետո դրվում են բայ-հանգույցի ժխտական ձևերը՝ կազմված *ni-* նախամասնիկի միջոցով՝ *mandənim չեմ մնացել, gardəniş չես քայլել, vitəni չի վազել, tılənimon չենք փախել, mardəniyon չեք մահացել, beşənin դուրս չեն եկել* և այլն:

14.3. Հարցական-հարաբերական դերանուններ

Հարցական են կոչվում այն դերանունները, որոնք արտահայտում են հարցում խոսողին ծանոթ որևէ անձի կամ առարկայի, դրանց թվի, հատկության, գործողության տեղի ու ժամանակի, ձևի և այլնի վերաբերյալ՝ առանց դրանք անվանելու։ Թալիշերենի հիմնական հարցական դերանուններն են՝ *ki?* *n'ı́*, *çi?*, *çi?* *h'ı́z*, *çiki?* *nı́* *ú*, *kom?* *n'p*, *kom gı́z?* *n'p ı́tıkır*, *boçi?*, *çera?* *h'ını́*, *çoknə?*, *çi curə?* *h'ını́t* *ú*, *çand?*, *çandi?*, *çanədə?* *nı́pı́* *ú*, *h'ını́pı́* *ú*, *konco?*, *kovırə?*, *kovırədə?* *nı́t* *ı́*, *keynə?* *t'pı́*, *çandminə?* *n'p'ı́nı́nı́* և այլն։

Քի դերանունը հոգնակի թիվ և թեք հոլովաձև չունի, համեմատենք՝

T₁ kiş? *İnli n'ı ku:*

ԹՎՈՆ ԿԻՆ? ՆՐԱԻՆՔ ՈՎՔԵՆ ԵՆ:

Շիշ և kom դերանունները կարող են ընդունել հոգնակի թվի ցուցիչ՝

T1 zınedəniş çiçon bedən

Դու չգիտես՝ աշխարհում ինչեր են

dinyoədə.

[illegible]

Komonin çəmə dovləton?

Որո՞նք են մեր պետությունները:

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, այս բոլոր բառերի միակ ընդհանուր առանձնահատկությունը դրանց հարցական հնչերանգն է, այնինչ իրենց իմաստային հատկանիշներով դրանք բոլորովին տարբեր են, այդ առումով հարում են այս կամ այն խոսքի մասին, հետևաբար նախադասության մեջ էլ դրանք հանդես են գալիս իրենց արտահայտած իմաստից բխող շարահյուսական տարբեր պաշտոններով՝

Ենթակա՝ քիմիա թիվը քիմիա թիվը?

Համարս քեզ ո՞վ տվեց:

Ստորագելի՞ ւմ զիւ?

Uw h'ny t:

Ժամանակի պարագա՝ ti keynə

Ե՞րբ ես Հենքորանից վերադարձել:

Lankoniku ogardəş?

Տեղի պարագա՝ իժնի յոժն հոյժ

Մեծ քույրդ որտե՞ղ է աշխատում:

kovirədə ko kardedə?

Չափի ու քանակի պարագա՝ չայ

Նրա ընկերը քանի՞ եղբայր ունի:

dusti çand gılə boəş heste?

Ձևի պարագա՝ Տիմա Իսթա օտաճի ֆոկոն
təmiz kardedəyon?

Նպատակի պարագա՝ Բոճի Բաբիլ Բո
miəllimi sıvoli cəvob doydəni?

Դուք ձեր սենյակը ինչպե՞ս եք
մաքրում:

Ինչու՞ Ռաբիլը չի պատասխանում
ուսուցչի հարցին:

Հարցական դերանունները հաճախ կիրառվում են նաև տարբեր
նախդիրների ու հետադրությունների հետ՝ զանազան հոլովական
խմաստների արտահայտման համար՝

Əli iyən Vələnoz kovirəyku omedən?

Tı de ki jimon kardedəş?

Bə kovirə şin ıstı duston?

Bo çiçi im sıxanon votedəş?

Ալին ու Վրլանոզը որտեղի՞ց են
գալիս:

Դու ո՞ւմ հետ ես ապրում:

Ո՞ր գնացին քո ընկերները:

Ինչո՞ւ ես այս խոսքերն ասում:

Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են՝
առանց հարցական հնչերանգի, դրանք իրենց գործառնությունով չափազանց
մոտ են ստորադասական շաղկապներին, քանի որ երկրորդական նախա-
դասությունը կապում են գլխավորին՝

Əvon ki omin çımı duston nin.

Məsədənim tı çiç votedəş.

Kovirəo omən bəvirə şedən.

Նրանք, ովքեր եկան, ընկերներս չեն:

Չեմ լսում՝ ինչ ես ասում:

Վերադառնում են այնտեղ, որտեղից
եկել են:

Բառապաշար

garde	քայլել, շրջել
mande	մնալ
dovlət	պետություն
təmiz karde	մաքրել
sıvol	հարց
ıstənapər	ինքնաթիռ
oginie	հոգնել
peşt	մեջք
pınd	խիտ

nez	մոտ
islamə	իսլամական
nəğil karde	պատմել
hıtəxonə	հանրակացարան
bənav	առաջ
bədigə	հետո
məvujı	երևի
fərzənd	որդի
seyr karde	հիանալ

avlod	երեխա, սերունդ	gamo	տաք աղբյուր
honi	աղբյուր	bılbıl	սոխակ
ğıbon	մատաղ	yurd	կալվածք, տնատեղ
poeziyâ, şer	պոեզիա	sərəse, dərəse,	հասկանալ
		fame	
səbəb, bais, illət	պատճառ	əşte	արթնանալ
hejo ıset	հենց նոր	zişango	երեկ գիշեր

Տեքստ 1

Zinâ zınıme ki çımı ən nezâ dustonədə gıləyni, Pərviz çı İroniku ogardə. Əv çı İroni İslamə Respublikə sərşəhər Tehroni həmməysə çokə universitetədə handedəbe. Imruj əmə gıləy parkədə vindemonımon karde iyən əy İronədə ıstə jimoni barədə nəğıl kardışe. İminə dı sorədə Pərviz çı hitəxonə gıləy gədə otağədə mandə, peşo i sor gıləy ironijə tolışı kədə jiə. Bə Lankoni ogarde bənav Pərviz ıstə duston vindero çı Tehrono de avtobusi bə Şiraz şə, çəyo de ıstənəpəri bə Lankon omə. Çəmə vindemoni bədigə Pərviz bəştə kə şe, vey oginiə be. Məvuji ıset hitə.

Տեքստ 2

Tolişə band, tı çikiş?

Az de tı zumandim, tı çımı peştış,
Az ıstı fərzəndim, çanə ki hestiş,
Xətai vətəniş, Boboki dustış!
Ha ruj maştə seyr kardedəm az tını,
Tolişə band, çımı nomiş, çımı niş?

Pındə vişon bəştı rangi rang dodə,
Gamo, honi... bılbıl vində handedə,
Avlodonı bə conbozon mandedə,
Elmas ğıbon bəştə yurdi, vətəni,
Tolişə band, çımı nomiş, çımı niş?

Hidayəti Elmas

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել տեքստը:

2. Կարդալ, թարգմանել բանաստեղծությունը:

3. Թարգմանել թալիշերեն.

1. Այնտեղ քնած մարդը ո՞ւմ ամուսինն է: 2. Ես գիտեմ, որ դու Լենքորանից 4 ամիս առաջ ես վերադարձել, ինչո՞ւ մինչև հիմա մեր տուն չես եկել: 3. Այն բարձր ծառի տակ նստած երեխան ո՞ւմ հետ է զրուցում: 4. Մենք 10 տարուց ավելի ապրել ենք Հայաստանի մայրաքաղաքում, բայց անցյալ տարի եկանք Գյումրի և այստեղ մնացինք: 5. Սա քո կարդացած ո՞ր բերրող գիրքն է, դու ինչո՞ւ հաճախ թալիշական պոեզիա չես կարդում: 6. Նրանք շատ անհանգիստ են, Ռաբիլը վաղ առավոտյան տանից դուրս է եկել և մինչև հիմա չի վերադարձել: 7. Ես չեմ հասկանում ինչեր ես ասում, ի՞նչ լեզվով ես խոսում: 8. Թալիշստանի մայրաքաղաք Լենքորանում քանի՞ թանգարան կա: 9. Ոչ ոք չգիտի, թե այդ ծերունին երբ և ինչից է մահացել: 10. Նա պառկել է ծառի տակ, քնել, մի մեծ ընկույզ գլխին է ընկել, արթնացել է ու տուն վազել:

4. Տրված բայերը դարձնել անցյալի դերբայ ու դրանցով կազմել նախադասություններ. harde, hande, kışte, nivışte, vinde, barde, varde, okarde, ogarde, gəte.

5. Բաց թողնված տեղերը լրացնել համապատասխան անձնական դերանուններով.

1. ... zinə çı Fransə paytaxt Paris şəhərikü ogardəmon.
2. Vist dəğiğə bənav ... kəyku beşə iyən bə boğ şə.
3. ... keynə bə çəmə di oməş?
4. ... hejo isət bə kə rəsəm.
5. Zişango ... keynə hitəyon?
6. ... ponə sori bə çəmə şəhər omən iyən iyo mandən.

Քերականություն

15.1. Անցողական բայերի վաղակատար ներկան

Անցողական բայերի վաղակատար ներկա ժամանակաձևը կազմվում է անցյալի դերբայով և որպես դիմային վերջավորություններ հանդես եկող կցական դերանունների այն ձևերով, որոնք կցվում են ձայնավորահանգ բառերին՝ երգատիվության ցուցիչ -e ձայնավորի հավելմամբ: Այսպես, անցյալի դերբային կցվող դիմային վերջավորություններն են՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-me	-mone
2-րդ դեմք	-ie	-one
3-րդ դեմք	-se	-sone

Քանի որ եզակի թվի երկրորդ դեմք կազմելու ժամանակ *ə* ձայնավորով վերջացող անցյալի դերբային -i կցական դերանուն կցելիս տեղի է ունենում արտասանությունը դժվարացնող ձայնավորների կուտակում, այն երբեք չի մնում բայի կազմում, անջատվում է դրանից՝ միանալով կա՛մ նախադասության մեկ այլ անդամի, կա՛մ բաղադրյալ բայերի անվանական մասին, ընդ որում այս դեպքում երգատիվության ցուցիչ -e ձայնավորը նույնպես զեղչվում է: Օրինակ՝

Ti im kitobi ponə sori handə.

*Դու այս գիրքը անցյալ տարի ես
կարդացել:*

Ti zinə ıstə otağ təmiş kardə?

Դու երեկ սենյակդ մաքրե՞լ ես:

Անցողական բայերի ներկա վաղակատար ժամանակաձևի ժխտական խոնարհումը կազմվում է ու ժխտական մասնիկի օգնությամբ, որը նույնն է բոլոր դեմքերի ու թվերի համար և դրվում է դիմային վերջավորություններից հետո, օրինակ՝ kardəmoni *չեմ արել*, hardəni *չես կերել*, vardəşni *չես բերել* և այլն:

15.2. Կոտորակային թվականներ

Թալիշերենում կոտորակային թվականների կազմության համար գործածվում է ձեռնադրությունը. սկզբում դրվում է հայտարարը՝ քանակական թվականով, որին հաջորդում է ձեռնադրությունը, ապա դրվում է համարիչը՝ կրկին քանակական թվականով, այսպես, օրինակ՝ *seədə dı tərknı tərpnrt, haftədə ɟo ɟnru jrtərtpnrt, dıədə i mɛk tərknrt* և այլն:

15.3. Ժամանակի մակբայներ

Թալիշերենում օգտագործվում են ինչպես բնիկ թալիշական, այնպես էլ պարսկական ու արաբական ծագման ժամանակի մակբայներ: Թալիշերենի ժամանակի մակբայներն են՝ *im այս ցուցական դերանունով կազմված մակբայներ՝ imruj այսօր, imşango այս երեկո, imsor այս տարի, isət, isə, isa (< im + saat ժամ) հիմա*, -ձեռնադրության միջոցով կազմված մակբայներ՝ *əvəsorədə զարնանք, tovsənədə ամռանք, zımsonədə ձմռանք, pozədə աշնանք*, -*nə* վերջածանցով կազմված ածանցներ՝ *zinə երեկ, pəynə երեկ չէ առաջին օրը, ponə անցյալ տարի, maştənə առավոտյան, kəynə ե՞րբ, այլ՝ hejo միշտ, hiçvaxt երբեք, peşo հետո, navko/nako առաջ, նախկինում* և այլն:

Բառապաշար

imruj	այսօր	rast ome	հանդիպել
imşango	այս գիշեր/երեկո	so	բակ
imsor	այս տարի	hələ	դեռևս
isət, isə, isa	հիմա	umute	սովորել, սովորեցնել
əvəsor	զարնանք	koməg karde	օգնել
tovson, toviston	ամռանք	riyoziyot	մաթեմատիկա
poz	աշուն	məsələ	խնդիր
zımson,	ձմեռ	həll karde	լուծել
zımiston			

zinə	երեկ	չətin	դժվար
pəynə	երեկ չէ առաջին օրը	izoh karde	բացատրել
ponə	անցյալ տարի	tikror karde	կրկնել
maštənə	առավոտյան	əğiləti	մանկություն
hejo	միշտ	dəvonie	անցկացնել
hiçvaxt	երբեք	miosir	ժամանակակից
peşo	ապա, հետո	bə dınyo ome	ծնվել
navko, nako	առաջ, նախկինում	iyəndı	իրար, միմյանց
tosə bı vaxti	մինչև հիմա	şahmot	շախմատ
kərə	անգամ	hənək karde	խաղալ
kıtı, pişig	կատու	mızokirə karde	քննարկել
kiyəse	խոհանոց	nimçə	ափսե
gujd	միս	nəticə, səkiştə	արդյունք
moy	ձուկ	bə ğəror ome	որոշել
gımon karde	կարծել	şışə	ապակի
pulə tumə	դրամապանակ	gıno kor	մեղավոր
ənənəvi	ավանդական	gin karde	կորցնել
xorək,	կերակուր	vo	քամի
hardemon			
kuçədə	դրսում, փողոցում	gırd, həmməy	ամբողջ
gard	փողի	bırie	կտրել
petoşe	տաշել, հղկել	pekarde	արթնացնել
se	վերցնել	bəivirə	միասին, համատեղ

Տեքստ 1

Isət az məktəbədəm. Maştə-maştə iyo oməm. Roədə Nəcəf iyən Əjdər bə mı rast omin. Əmə bəivirə bə məktəb oməmon. Məktəbi soədə hələ hiçki nıbe. Peşo Rabilimon vinde. Əmə çəmə məktəbi yolə boğədə çəş kardəmonə. Rabili bə mış vote:

- Əli, tı dərsonı umutə?

- Ha, umutəmə. Zinə çımı nənə bə çəmə kəy ome, bo dəron umutero bə mı koməgış karde,- cəvəbım doy.

- Əmma mı riyoziyotə məsələm həll kardəni, vey çətin be,- votışe.

Mı bo Rabiliro məsələ izohım karde. Əv ısıt ım məsələ həll kardədə, azən çımı dəron tıkror kardədəm.

Stepun 2

Çımı dust Babək dəştə xıyzoni çı Tolışistoni paytaxt Lankoni gədimə məhəlləon gıləyniədə jimon kardədə. Əmma əvon hejo iyo jənin. Navko, çımiku 5 sor bənav Babək Liki rəyonədə jimon kardəşe, peşo çəy pıə Lankonədə çokə ko pəydoş kardə iyən çəvon xıyzoni bə paytaxt kuç kardəşe. Babəki ıstə əğlətı Liki reçinə di Kusəkonədə dəvonışe. Əli Nasir, ki ən məşhurə miosirə tolışə şaironədə gıləyniye, ım diyədə 1955-nə sori mayə mangi 1-də bə dınyo omə. Şirzad mamu, Babəki dədə, bə mı nəğilış kardə ki, yolə şair çəvon hamsiyə bə iyən gədimə vaxtonədə əvon rə-rə de iyəndı şahmot hənək kardışone, çı ruji mihumə xəbonışon mızokirə kardə ya bə musigı guşışon doə. Kali vaxtonən Əli Nasiri bo Babəki dədəro ıstə tojə şeron handəşe. Tosə bı vaxti Şirzad mamu Kusəkonədə jimon kardədə, iyən əmə tovsononədə i-dı kərə əyo şedəmon iyən de Babəki dədə vey mərəğinə çiyon barədə gəp jəydəmon.

Կարծություններ

1. Կարդալ, թարգմանել և պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Վերջին անգամ ես այդ մարդուն անցյալ տարի եմ տեսել, այս տարի նրան մեր քաղաքում դեռ չեմ հանդիպել: 2. Երեկ զիշերը մեր հարևանի կատուն մտել է մեր խոհանոց, կերել է միսն ու ձուկը, մի քանի ափսե է կոտրել: 3. Այդ գիրքը ռուսերենից թալիշերեն է թարգմանել հայտնի թալիշ բանաստեղծ Զուլֆուլար Ահմադդովան: 4. Մենք այդ քննարկմանը չենք մասնակցել և չգիտենք, թե բանակցությունների արդյունքում կողմերը ինչ են որոշել: 5. Բոլորը կարծում են, որ սենյակի պատուհանի ապակին դու ես կոտրել, բայց ես գիտեմ, որ դու մեղավոր չես: 6. Դու այդ գիրքն անցյալ ձմռանն ես կարդացել ու սովել ես ինձ, բայց ես այն կորցրել եմ: 7. Դու տեսե՞լ ես՝ ով է վերցրել իմ ակնոցը, այն սեղանի վրա էր: 8. Ես այս

դրամապանակը փողոցից եմ գտել, որևէ մեկը գիտի՞, թե այն ումն է:
9. Տատիկս մեզ համար կրկին թալիշական ավանդական շատ համեղ
կերակուր է եփել, մենք հիմա նրա տուն ենք գնում: 10. Դրսում սաստիկ
քամի է, իսկ դու դուռը չես ծածկել, ամբողջ փոշին տուն է լցվել:

**3. Տրված բայերով կազմել նախադասություններ՝ կիրառելով դրանք
սահմանական եղանակի ներկա վաղակատար ժամանակաձևով.** harde,
hande, nıvışte, birie, ogordinie, eğande, petoşe, pekarde, se, doy.

**4. Տրված նախադասությունների ժամանակաձևերը վերափոխել
վաղակատար ներկայի՝ կատարելով համապատասխան փոփոխու-
թյուններ.**

1. Məryəm bəy okardədə iyən yolə otağədə ıstə hovəy vindedə.
2. Az kitobi bardedəm iyən çımı kifədə noydəm.
3. Çımı dust ıstı nomi bə Rabili votedə.
4. Məryəm iyən İğbal ə kitobi bə çımı hırdən doydən.

Քերականություն

16.1. Հրամայական եղանակ

Գործողության կատարման հրաման, հարկադրանք, կոչ, խնդրանք արտահայտող հրամայական եղանակը թալիշերենում ունի միայն ներկա ժամանակաձև և միայն եզակի ու հոգնակի թվերի երկրորդ դեմք: Եզակի թվի երկրորդ դեմքի համար այն կազմվում է *bi-* նախամասնիկից և միահիմք բայերի ընդհանուր կամ երկհիմք բայերի ներկայի հիմքից և ունի զրո վերջավորություն, իսկ հոգնակի թվի երկրորդ դեմքը կազմվում է՝ *-ən* դիմային վերջավորությունը ավելացնելով, ինչպես՝

Bivot! – <i>ասա՛</i>	bivotən! – <i>ասե՛ք</i>
Bıpat! – <i>եփի՛ր</i>	bıpatən! – <i>եփե՛ք</i>
Bıpam! – <i>չափի՛ր</i>	bıpamən! – <i>չափե՛ք</i>
Bıvit! – <i>վազի՛ր</i>	bıvitən! – <i>վազե՛ք</i>

Նախդրավոր և բարդ բաղադրյալ բայերի հրամայական եղանակի կազմության ժամանակ *bi-* նախամասնիկը չի կիրառվում, օրինակ՝

Ogard! – <i>վերադարձի՛ր</i>	ogardən! – <i>վերադարձե՛ք</i>
Peşom! – <i>խմի՛ր</i>	peşomən! – <i>խմե՛ք</i>
Ehaşt! – <i>կախի՛ր</i>	ehaştən! – <i>կախե՛ք</i>
Pəydokə! – <i>գտի՛ր</i>	pəydokən! – <i>գտե՛ք</i>

Ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող որոշ բայերի հրամայական եղանակը կազմելիս *bi-* նախամասնիկը ենթարկվում է հնչյունափոխության, օրինակ՝

Boy! (<i>bi+o</i>) – <i>արի՛</i>	boən! – <i>եկե՛ք</i>
Bəhvət! (<i>bi+həvat</i>) – <i>գնի՛ր</i>	bəhvətən! – <i>գնե՛ք</i>
Bəşt! (<i>bi+əşt</i>) – <i>վե՛ր կաց</i>	bəştən! – <i>վե՛ր կացեք</i>

Հրամայական եղանակի արգելականը կազմվում է *mə-* նախամասնիկի օգնությամբ, որը դրվում է *bi* նախամասնիկի փոխարեն՝ *məgəθ* *մի՛ վերցրու*, *məjəθən* *մի՛ խփեք*, *mədəθ* *մի՛ տուր* և այլն: Բաղադրյալ բայերի

հրամայական եղանակի արգելականը կազմելիս *մօ- նախամասնիկը* դրվում է բայից առաջ՝ *ko məkə mʃi' wəʒhատիր*, *yod mədəon mʃi' տվորեցրեք*, *pəydo məkə mʃi' գտիր* և այլն:

16.2. Ներկայի դերբայ

Ներկայի կամ ենթակայական դերբայը թալիշերենում կազմվում է *ə-* նախամասնիկի օգնությամբ՝ երկհիմք բայերի ներկայի հիմքից կամ միահիմք բայերի ընդհանուր հիմքից՝ *əkə անող*, *ədə տվող*, *əson վերցնող*, *əzin իմացող* և այլն: *A* և *ə* ձայնավորներով սկսվող բայերի ներկայի դերբայի կազմության ժամանակ *ə-* նախամասնիկը սղվում է, այսպիսով ներկայի դերբայը ձևով նույնանում է բայահիմքի հետ, օրինակ՝ *arəʃt կոտրող*, *aspard հանձնող*, *əʃt վեր կացող* և այլն: *Ome qaw* բայի ներկայի դերբայ կազմելիս *ə-* նախամասնիկի և *o* բայահիմքի միջև ավելանում է *v* բաղաձայնը՝ *əvo եկող*: *O*, *e*, *pe*, *be*, *da* նախդիրներ ունեցող բաղադրյալ բայերի ներկայի դերբայի կազմության ժամանակ *ə-* նախամասնիկը դրվում է նախդիրի ու բայահիմքի միջև, օրինակ՝ *oəgard վերադարձող*, *eəgin ընկնող*, *peəsom խմող*, *beəkə դուրս հանող*, *dəəvə անցնող* և այլն:

Ներկայի դերբայի օգնությամբ կազմվում են մի շարք բարդ բառեր՝ ածականներ և գոյականներ, օրինակ՝ *vəsəkə քաղաքաբնակ*, *koəkə աշխատակից*, *koməgəkə օգնական*, *moyəgət ձկնորս*, *nunəhvat հացավաճառ* և այլն:

Be lʰinɛl բայի *əbi* ներկայի դերբայը հազվադեպ է կիրառվում, դրա փոխարեն ավելի հաճախ օգտագործվում է *bə* անցյալի դերբայը, որը պարունակում է նաև ներկա ժամանակի իմաստաբանական լիցք, օրինակ՝ *conibə անբաժանելի*, *zinonibə անիմանալի* և այլն:

Ներկայի դերբայը կիրառվում է նաև սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի ժխտականի (տե՛ս §18.2) և անցյալ անկատար II-ի (տե՛ս §23.2) կազմության ժամանակ:

16.3. Բայի սեռը

Թալիշերենում բային հատուկ է նաև սեռի քերականական կարգը: Բայի սեռը ցույց է տալիս բայի արտահայտած գործողության և դրա մասնակիցների փոխհարաբերությունները, այլ կերպ ասած՝ բայի սեռի քերա-

կանական կարգը ցույց է տալիս քերականական ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի ու օբյեկտի փոխհարաբերությունները, որոնք դրսևորվում են բայաձևի մեջ: Ըստ այդմ, թալիշերենում բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք:

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որի ժամանակ ենթակայի գործողությունը կատարելու համար պահանջվում է ուղիղ խնդիր լրացում, ինչպես յօյ *խիէլ*, *harde ուտել*, *vinde տեսնել*, *kışte սպանել*, *doy տալ*, *noy դնել* և այլն:

Յո **xorəki** de ləzzəti hardədə.

Նա կերակուրը հաճույքով է ուտում:

Քələngi **kıtış** sifətə bə pələngə baləş oxşəş
doy.

Վագրը սկզբում կատվին վագրի ձագի նմանեցրեց:

Suki berdəm gıləy **mirvariş** vinde.

Աքաղաղը հանկարծ մի մարգարիտ տեսավ:

Կրավորական սեռն իր արտահայտած իմաստով հակադրվում է ներգործական սեռին: Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որը տրամաբանական օբյեկտից անցնում է տրամաբանական սուբյեկտին: Իրենց կազմությամբ էլ կրավորական սեռի բայերը անմիջականորեն կապված են ներգործական սեռի բայերի հետ: Կրավորական սեռը կազմվում է ներգործական սեռի բայի անցյալի դերբայի (տե՛ս §14.1) և *be լինել*, *դառնալ* բայի օգնությամբ, օրինակ՝ *kıştə be սպանվել*, *soxtə be կառուցվել*, *həvatə be վաճառվել* և այլն: Այս դեպքում համապատասխան ժամանակաձևերով խոնարհվում է *be* բայը, իսկ կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական սուբյեկտը կարող է արտահայտվել *təəfo*, *təəfikü կողմից*, *de... vositəy միջոցով*, *oqənuşəyմբ* և մի շարք այլ կապերով՝

Zinə çı diy ro bastə be.

Երեկ գյուղի ճանապարհը փակվել էր:

Յո polisi təəfo nəvə bedə.

Նա փնտրվում է ոստիկանության կողմից:

Im xəbə de rujnomə vositə pevilə
kardə bəbe.

Այս լուրը թերթի միջոցով է տարածվելու:

Չեզոք սեռի բայերը երգործական սեռի բայերի պես ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը կատարում է ենթական՝ տրամաբանական սուբյեկտը, բայց, ի տարբերություն ներգործական սեռի բայերի, չեզոք սեռի բայերը ուղիղ խնդիր չեն պահանջում, օրինակ՝ *še qնալ, ome qալ, ուշտե նստել, հիտե քնել, sire ծիծաղել, bəme լացել* և այլն՝

Hirdən şəvıruj bəmedə.
Vəzir ome podşo toniku.
İ gılə merd bə hamsiyə şedə.

*Երեխան օրուգիշեր լալիս է:
Վեզիրը թագավորի մոտ եկավ:
Մի տղամարդ հարևանի մոտ է
գնում:*

Բառապաշար

pame	չափել	conibə	անբաժանելի
ehaşte	կախել	zinenibə	անիմանալի
yod doy	սովորեցնել	pələng	վագր
asparde, asbarde	հանձնել, հանձնարարել	siftə	նախ, սկզբում
vəsəkə	բավարար	balə	ձագ, երեխա
koəkə	աշխատակից	suk	աքաղաղ
koməgəkə	օգնական	berdəm	հանկարծ
nunəhvət	հացավաճառ	mirvari	մարգարիտ
soxte	սարքել, ստեղծել	həx	իրավունք, ճշմարտություն
vositə	միջոց	ogəte	գսպել
polis	նստիկան	xırtə	կոկորդ
pevilo karde	տարածել	surfə	սփռոց
şəvıruj	օրուգիշեր	inson	մարդ
vəzir	նախարար, վեզիր	şərəfin	պատվարժան, հարգարժան
şey	իր, առարկա	axməx	հիմար
yodo/yodiku	մոռանալ	duəvoj	ստախոս
bekarde			
və	դիմաց, առաջ	pəxıl	նախանձ
cəhd karde	փորձել	fitnəkor	խառնակիչ

mıdrikəti	իմաստնություն	si be	կշտանալ
əlomət	նշան	voş	անձրև
tovə	մինչև	elm	զիտություն
oxo	վերջ	ğələ	ամրոց, բերդ
təmom be	վերջանալ, ավարտվել	dışmen	թշնամի
eje	կառուցել	bə ... gorə	պատճառով
xanəti	խանություն	lap	շատ, հենց, ամենա
çəyo	հետո, ապա	ələğə	կապ, հարաբերություն
bəzi, kali	որոշ	həniyən	էլ ավելի
sənətkoəti	արհեստ	ticorət	առևտուր
inkişof karde	զարգանալ	əncəx	միայն
dəvət karde	հրավիրել	məruz mande	ենթարկվել
şəhər	քաղաք	həmon	հենց այդ, հենց նույն
vırə	տեղ	mıhoribə	կոնֆլիկտ, պատերազմ
ğoşun	բանակ, զորք	dayəğ	պաշտպանություն
məntəğə	տարածք, շրջան	dıjd	մեծ, խոշոր
ğəlb	սիրտ		

Տեքստ 1

Ço gılə şey ıstə yodiku beməkə: həxə koədə ıstə ğəlbi ogəte, surfə səpe ıstə xırtə ogəte, co kəsi kədə ıstə çəşon ogəte, xəlği dılədə ıstə zıvoni ogəte. İmon insoni şərəfin kardedən.

De çə kəsi dustiyəti məkə: de axməxi, de duəvoji, de pəxili, de fitnəkori.

Ço gılə şey çə gılə şeyku si bedəni: zəmin voşiku, çəş diyə kardeyku, pəvəndi çı pəvəndiku, alim elmiku.

Bəştı və beşə har ko həll karde cəhd məkə! Im çı mıdrikəti iminə əloməte. Cəhdı karde, əy tovə oxoy bə vırə bırosın! Imən çı mıdrikəti dımınə əloməte.

Տեքստ 2

Լանկոնի ջալա

Լանկոնի ջալա բինո 1726-նա սորաձա նոա բա. Թմմա 1727-նա սորաձա չայ եյե տամոմ բա. Իմ ջալա չի Ժիշմենիկու միժօփիյա եյե ցորա եյեթօնե. Դոլիշի քանաթի մարկաշ Լափ սիֆա Օստորաձա բա. Քաշօ աՅ չի Օստորոկու բա Լանկոն Բարձա բա. Չայօ Ժե Իրոնի, Միյօնա Ասիյա, Ինժիստօնի իյան Րուսիյա չայ ալօցօն հանիյան շուման Բա. Տալալաձա Բաշի Տանաթկօաթի, Դիօրաթի ինկիշօֆիշ Կարձա. Թնչաք տալալալաձա յիաթաթօն րա-րա Բա Կօ մալոլի հուսումօն մարաշ մանձաԺին. Բա չիմի ցորա Դոլիշի քանի չի ինգիլիսա իյան ֆրանսիա Տանաթկօոնիշ ձաՅաթ Կարձե, ԲաՅօն ջալա ժալաշ ասփարձե. Իսաթ Լանկոնաձա «Ջալա» յօթա յիրա համօնա ջալա ժիլաձա բինո բա.

Լանկոնի ջալա իմինա արուսի-իրոնի միլորիԺաձա չի Իրոնի ջօշունի աՅ միլումա ժալաջա մանաթաջա բա. Լանկոնի ջալա Բաթա Բօկու ջալաթան ժիլձե.

Վարժարանի լիստ

1. Կարդալ, թարգմանել և պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Այս գեղեցիկ ամբողջ կառուցվել է 18-րդ դարի սկզբին և եղել է թալիշական խանության կենտրոնը: 2. Երբեք հիմար մարդու հետ ընկերություն մի՛ արա, միշտ քեզնից խելացի մարդկանց ընտրիր ընկեր: 3. Մեր գրասենյակի աշխատակիցները երեկ վերադարձել են գործուղումից, բայց այսօր աշխատանքի չեն եկել: 4. Ըստ որոշ գիտնականների՝ այս քաղաքը հիմնադրվել է մեր թվարկությունից առաջ 7-րդ դարում: 5. Խնդրում եմ՝ ինձ մի բաժակ սառը ջո՛ւր տուր, երկար ճանապարհից շատ եմ հոգնել: 6. Երկրաշարժի պատճառով ավերվել է քաղաքի մեծ մասը, քանդվել են բազմաթիվ շենքեր: 7. Անջատի՛ր վառարանը, բացի՛ր սենյակի պատուհանը, օդն այստեղ շատ ծանր է: 8. Հայրը տեսնում է, որ որդին անգործ ման է գալիս, ասում է. «Տղա՛ս, գնա՛ մայրաքաղաք, մի գո՛րծ գտիր, փո՛ղ վաստակիր»: 9. Իմաստուն բժիշկը ծառաներին ասաց. «Այն կովին բերե՛ք, նրա ոտքերը կապե՛ք և ինձ մի սուր դանակ տվեք»: 10. Նրա հայրը անցյալ տարի պատերազմի ժամանակ է սպանվել, իսկ եղբայրը գերեվարվել է թշնամու կողմից:

3. Տեքստը թարգմանել թալիշերեն.

Մի աղքատ մարդ իր հարուստ հարևանից խնդրում է իրեն օգնության ձեռք մեկնել: Հարուստը աղքատին ասում է՝

- Գնա՛, Աստծո՛ւց օգնություն խնդրիր:

- Աստծուց օգնություն խնդրել եմ, նա էլ քեզ է ցույց տվել:

4. Տեքստ 1-ից դուրս գրել բոլոր բայերը, կազմել նախադասություններ դրանց հրամայական եղանակի հաստատական ու ժխտական ձևերով:

Քերականություն

17.1. Ուղեկցող գործողության և ձևի պարագայերայական դարձվածի արտահայտումը թալիշերենում

Անորոշ դերբայի մասին խոսելիս արդեն նշեցինք, որ թեև այն արտահայտում է գործողության, ընթացքի իմաստ, սակայն իր իմաստային հատկանիշներով մոտ է նաև գոյական անվանը և կարող է գործածվել նաև գոյականաբար՝ նախադասության մեջ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: Թալիշերենում անորոշ դերբայը մասնակցում է նաև ուղեկցող գործողության արտահայտմանը՝ կազմելով դերբայական դարձվածներ: Անորոշ դերբայով դերբայական դարձվածները կազմվում են երկու եղանակով՝

- անորոշ դերբայի կրկնությամբ, օրինակ՝

Dışmeniku tile-tile əvon bə cəmə şəhəri rəsin.	<i>Թշնամուց փախչելով՝ նրանք մեր քաղաք հասան:</i>
Həvuşi bəme-bəme ıstə roş gəte, şe.	<i>Նապաստակը լացելով ճանապարհ ընկավ, գնաց:</i>
Əy sire-sire bəmi votışe: “Zərfəti kardedəm”.	<i>Նա ծիծաղելով ինձ ասաց. «Կատակում եմ»:</i>

- անորոշ դերբայի և գործիական հոլովի իմաստ արտահայտող ədə հետադրության միջոցով՝

Çı koku ogardeədə vındime ki, Əli kədə ni.	<i>Աշխատանքից վերադառնալով՝ տեսա, որ Ալին տանը չէ:</i>
Çımı moə aş pateədə deştə hovə gəp jəydəbe.	<i>Մայրս, ապուր եփելով, իր քրոջ հետ էր խոսում:</i>
Ə jeni vindeədə vey şo biş.	<i>Այն կնոջը տեսնելով՝ շատ ուրախացար:</i>

Այս դեպքում երբեմն հատկապես հին շրջանի տեքստերում անորոշ դերբայի -e վերջավորությունը հնչյունափոխվում է, դառնում է -i, օրինակ՝

Məmməd ogardiyadə əy Kımıği gətə -*Մամմադը վերադառնալով (երբ վերադարձել է), Քըմըդը նրան բռնել է:*

17.2. Տեղի մակբայներ

Թալիշերենում որպես տեղի մակբայ կիրառվում են մի շարք բառեր, որոնք ուղեկցվում են զանազան նախադրություններով ու հետադրություններով: Այդ հիմնական բառերն են՝ *vıra*, *co տեղ*, *ji ներքև*, *pe վերև*, *ton կողմ*, *nav*, *və առաջ*, *peş հետ*, *dum պոչ* և այլն: Տեղի մակբայներ կազմելու համար այս բառերի հետ հիմնականում կիրառվում են՝

- *o* հետադրությունը՝ *tono կողքին*, *կողքից*, *dumo ետևից*, *ետևում*, *dumo tono ետևի կողմից*, *pio վրան*, *վրայից*, *վերևից*, *jio ներքևից*, *տակ* և այլն:
- *ədə* հետադրությունը՝ *jiədə ներքևում*, *տակը*, *vədə*, *navədə առջևում*, *դիմացը*, *diyərədə հեռվից*, *հեռվում*:
- *bə* նախադրությունը՝ *bə pe վերև*, *bə və*, *bənav առաջ*, *դեմ հանդիման*:
- *sə* նախադրությունը՝ *sə pe վերև*, *վրան*, *sə rost ուղիղ* և այլն:

Բառապաշար

həvuş	նապաստակ	peroxnie	ազատել, փրկել
ro gəte	ճանապարհ	livə	տերև
	ընկնել		
zərfəti karde	կատակել	niyo be	թաքնվել
şo be	ուրախանալ	niyo karde	թաքցնել
məral	եղնիկ	live	շարժվել
ovçi	որսորդ	gullə	գնդակ, փամփուշտ
con	հոգի	gullə gənde	կրակել
zu	ուժ	yarəjə	վիրավոր
yarə	վերք	nəfsi ogəte	դիմանալ, ինքնատիրապետել
gələvon	հովիվ	zikkə jəy	գոռալ, ճչալ
neçi	գայլ	tadi-tadi	շտապ, արագ
pəs	ոչխար	hucum karde	հարձակվել

çovnie	արածեցնել	lışte	լիզել
divoj	զյուղացի	angıştə	մատ
bə dast dəğande	ծաղրել	kisə	պարկ
ləzzət barde	հաճույք ստանալ	tang	նեղ
aptek	ղեղատուն	maçə karde	համբուրել
vəomə, omə	առաջիկա	mıhofizə karde	պահպանել
səçın	ընտրություն	məsofə	հեռավորություն
vağə be	կայանալ	ru be, dəvarde	հոսել
səhv karde	սխալվել	hədəf, məğsəd	նպատակ

Տեքստ 1

Մəral iyən ovçiyon

İglə mərali ıştır conış çı ovçiyonku de zuş peroxnie, çı do livon jio niyo be. Ovçiyon lap çəy toniku dəvardin, əncəx əvişon nıvinde. Əvon şe bəpeştə mərali binoş karde doon livon harde. Ovçiyon sədo məseədə bə dumo diyə kardışone. Bə livə livon dılə i gulləşon ğande. Məral yarəjə be, əncəx nılive. Ovçiyon bə di ogardin.

Mərali bəştə yarə diyə kardeədə ıştır bəştə votışe: “İm livon mınışon niyo karde, bə dışmenon nişo nıdoşone. Əmma mı ıştır nəfsim ogəte nızne”.

Տեքստ 2

Գələvon iyən neçi

İglə gələvon ha ruj ıştır pəson çovniero bə di neziədə bə bandon bardedəbe. İm gələvon divojon bə dast dəğandeku ləzzət bardedəbe. Bımi səbəb bə bandi rəseədə gələvon zikkə jəydəbe. “Neçi ome, neçi ome”! Divojon tadi-tadi bə koməğ rəsədəbin. Əmma neçi nıbe iyən əvon sərəsedəbin ki, gələvoni du votəşe. Gələvoni ım zərfətiş çand kərə tıkror karde. İ ruj həğigətən neçi hucumış karde bə pəson. Gələvoni ımı vindeədə de barzə sədo zikkə jəşe: “Neçi ome, neçi ome”! Əmma bı kərə hiç kəs bə çəy koməgi nome, bə çəy gorə ki, divojon ğumonışon karde ki, gələvon ijən du votedə. Neçi həmməy pəson hardeədə bə vişə ogarde.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել և պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Տատիկս շատ լավ էր պատրաստում, և մենք, նրա եփած կերակուրները ուտելով, լպստում էինք մեր մատները: 2. Տնից դուրս գալով՝ տեսավ, որ դռան դիմացի ծառի տակ մի մեծ պարկ կա: 3. Այդ լայն պողոտան անցնելով՝ մի նեղ փողոց մտանք, որտեղ ո՛չ խանութ կար, ո՛չ էլ դեղատուն: 4. Երեխան ծիծաղելով մայրիկի մոտ վազեց, համբուրեց նրան, և նրանք միասին տուն մտան: 5. Շատ թալիշներ, հայրենիքից հեռու բնակվելով, պահպանում են իրենց լեզուն, տանը միայն թալիշերեն են խոսում: 6. Իմանալով, որ մայրը վերադարձել է՝ Ռաբիլը գրասենյակից արագորեն դուրս է գալիս և տուն գնում: 7. Երկրի նախագահը, խոսելով առաջիկա ընտրությունների մասին, ասաց, որ դրանք կկայանան երկու ամիս հետո: 8. Ասթարայից 7 կիլոմետր հեռավորության վրա Արչիվան անունով թալիշական գյուղ կա, որտեղով նույնանուն գետ է հոսում: 9. Դու սխալվում ես, ես իմ առջև երբեք նման նպատակ չեմ դրել: 10. Աղջիկը առաջին սենյակը մտավ, տեսավ՝ սեղանի վրա երեք ապուրաման կա:

3. Տրված բայերով կազմել դերբայական դարձվածով նախադասություններ.

zine, vinde, mæse, beşe, bekarde, fikir karde, okarde, varde, ogordınie, pame.

Քերականություն

18.1. Մահմանական եղանակի ապառնի ժամանակաձևեր

Խոսելու պահից սկսած՝ մի որևէ ապագա ժամանակահատվածում ստույգ կերպով կատարելի գործողությունն արտահայտող ապառնի ժամանակաձևը թալիշերենում կազմվում է *բə-* նախամասնիկից, միահիմք բայերի միասնական հիմքից կամ երկհիմք բայերի անցյալի հիմքից և հետևյալ դիմային վերջավորություններից.

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-em/-m	-emon/-mon
2-րդ դեմք	-eš/-š	-eyon
3-րդ դեմք	-e/-i	-en/-n

օրինակ՝ *bəkardem անելու եմ*, *bəšeš գնալու ես*, *bəvinde տեսնելու է*, *bəməsemon լսելու ենք*, *bəšistejon լվանալու եք*, *bəvarden բերելու են* և այլն:

Ճայնավորով սկսվող բայահիմքերից առաջ *բə-* նախամասնիկի *ə* ձայնավորը սղվում է, օրինակ՝ *bomemon գալու ենք*, *bašmardem հաշվելու եմ* և այլն:

Երբ բայի հիմքը վերջանում է ձայնավորով, դիմային վերջավորությունն *e* ձայնավորը հիմնականում ընկնում է, օրինակ՝ *bədoš տալու ես*, *bənon դնելու են* և այլն:

Նախադրավոր և բաղադրյալ բայերի դեպքում *բə-* նախամասնիկը կցվում է բայական մասին, օրինակ՝ *obəgardem վերադառնալու եմ*, *pebəsomeš խմելու ես*, *bebəsemon դուրս ենք գնալու*, *pəydo bəkarden գտնելու են* և այլն:

Karde անել, *harde ուտել*, *varde բերել*, *barde տանել* բայերի ապառնի ժամանակաձև կազմելիս ի հայտ է գալիս երկձևություն. այս բայերի դեպքում տվյալ ժամանակաձևը կազմվում է նաև *ka*, *ha*, *va* և *ba* հիմքերից՝ *bəkam անելու եմ*, *bəhamon ուտելու ենք*, *bəvaš բերելու ես*, *bəban տանելու են* և այլն:

18.2. Ապառնի ժամանակաձևի ժխտական ձևերի կազմությունը

Թալիշերենում կա ապառնի ժամանակաձևի ժխտականի կազմության երկու եղանակ՝ *ni-* նախամասնիկի օգնությամբ և ներկայի դերբայով ու բայ-հանգույցի համապատասխան ժխտական ձևերով:

Առաջին դեպքում *ni-* ժխտական նախամասնիկը դրվում է անմիջականորեն *bə-* նախամասնիկից առաջ, օրինակ՝ *nibəşem չեմ գնալու*, *nibomes չես գալու*, *onibəgarde չի վերադառնալու*, *penibəsoxtemon չենք հորինելու*, *dəonibəşeyon չեք մտնելու*, *niyo nibəkan չեն թաքցնելու* և այլն:

Երկրորդ եղանակի դեպքում բայ-հանգույցի ժխտական ձևերը (*nim*, *niş*, *ni*, *nimon*, *niyon*, *nin*, տե՛ս §2.2) դրվում են *ə-* նախամասնիկով և ներկայի կամ ընդհանուր բայահիմքով կազմված ներկայի դերբայից (տե՛ս §16.2) հետո, օրինակ՝ *əvotnim չեմ ասելու*, *əvoniş չես գալու*, *ədəni չի տալու*, *əhitnimon չենք քնելու*, *ko əkəniyon չեք աշխատելու*, *əəgardnin չեն վերադառնալու* և այլն:

Ապառնի ժամանակաձևի ժխտականի այս երկու կազմությունները հավասարապես տարածված են, և դրանց միջև իմաստային որևէ տարբերություն չկա:

18.3. Պատճառական բայեր

Թալիշերենում պատճառական բայերը, որոնք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը ենթական ոչ թե ինքն է կատարում, այլ ուրիշ մեկի կամ մի բանի կողմից այդ գործողության կատարման պատճառ է դառնում, կազմվում են *-ovnie* և *-nie* վերջավորությունների միջոցով, որոնք ավելանում են միահիմք բայերի ընդհանուր հիմքին կամ երկհիմք բայերի անցյալի հիմքին, օրինակ՝ *karde անել* - *kardovnie ստիպել անել*, *harde ուտել* - *hardovnie կերակրել, ուտեցնել*, *tile փախչել* - *tilovnie վռնդել, վանել, ստիպել փախչել*, *hite քնել* - *hitovnie քնեցնել* և այլն:

-Nie վերջավորությամբ կազմված պատճառական բայերում հաճախ տեղի է ունենում հնչյունափոխություն. բայահիմքի *ə*, *a* ձայնավորները դառնում են *o*, օրինակ՝ *rəse հասնել* - *rosnie հասցնել*, *rəxe ազատվել*, *փրկվել* - *roxnie վայր գցել, ձեռքից բաց թողնել*, *pəre թռչել* - *pornie թռցնել*,

ստիպել թռչել, վախեցնել (թռչունին), ogarde շրջվել, վերադառնալ - ogordinie շրջել, վերադարձնել և այլն: Որոշ բայերի դեպքում -nie վերջավորության հավելման ժամանակ բայահիմքը չի հնչունափոխվում, ինչպես, օրինակ՝ kirie քարշ գալ - kɨrnie քարշ տալ, տանել, birie կտրել, կտրատել, հատել - bɨrnie կտրել, ստիպել կտրել և այլն:

Բառապաշար

şışte	լվանալ	dışambə	երկուշաբթի
pesoxte	հորինել	seşambə	երեքշաբթի
kardovnie	ստիպել անել	çəşambə	չորեքշաբթի
hardovnie	ուտեցնել	pencşambə	հինգշաբթի
tılovnie	վոնդել	cımə, əynə	ուրբաթ
hıtovnie	քնեցնել	şambə	շաբաթ
roxnie	վայր գցել	işambə	կիրակի
rosnie	հասցնել	təbrik karde	շնորհավորել
pornie	թոցնել	id	տոն
kirie	քարշ գալ	rost be	բարձրանալ, աճել
kɨrnie	քարշ տալ, կրել	dizəbın	երիցուկ
maşki	վաղը	gino	մեղք
dast-dimi	լվացվել	çınie	քաղել, պոկել
şışte			
xahiş karde	խնդրել	baxşe	ներել
nəfo	նախաճաշ	edyəse	նայել, աչք ածել
epo	հատակ	muzangıl	ճպուռ
gezi	ավել	şırhaşır	քչքչոց
rite	ավելել	məhol	երկիր, երկրամաս
peçoştə	կեսօրից հետո	bebəfo	անհավատարիմ
televiziya	հեռուստատեսություն	xıdovand	աստված
təmşo karde	նայել, դիտել	perosnie	աճեցնել
zizə	ծաղիկ, բողբոջ	divo	աղոթք
ocon ome	վերածնվել, վերակենդանանալ	zino	ծունկ
təbiyə	բնություն	laylay jəy	օրօր/նանիկ ասել

ov be	հավվել	siyo	սև
vənəşə	մանուշակ	zəmonə	ժամանակ
məst karde	արբեցնել	şukr karde	շնորհակալություն հայտնել, փառաբանել
ətrə bu	անուշահոտություն	səğ	կենդանի, առողջ
sıxan doy	խոստանալ	sorbəsor	տարեցտարի
dodo	քույր	heyve be	բազմանալ
həmməyəvo	բոլորով, բոլորը միասին	səlom	ողջույն
aid be	առնչվել	ğəssəm	երդուժ
dim, sıfət	դեմք	lovə karde	աղաչել
hafttir	ատրճանակ	səhv karde	սխալվել
hukmən,	անպայման	məğlub	պարտության
həzohəlbət		karde	մատնել
xodim	ծառա	mol, həyvon	անասուն
torsinie	վախեցնել	nısyə	ապառիկ
nağd	կանխիկ	dard	վիշտ, դարդ
pul	գումար	zindon	բանտ
tospinie	տաքացնել	xəş	առողջ
ezım, izım	ցախ	xətoyn,	վտանգավոր
		xətomand	
gile	եռալ	taspe	տաքանալ
pandome	ուռչել, փքվել	dəvişkie	տեղավորվել

Տեքստ 1

Maşki işambəye iyən az bə universitet nibəşem, kədə bəmandem. Tosə saat həşti bəhıtem, peşo bəştem, ıstə dast-dimi bəşistem iyən çımı oləton tan bəkam. Çımı moə xahiş kardəşe kə koonədə koməg karde iyən nəfo bədigə əmə otağon təmiz bəkardemon. Az həmməy otağon epo de gezi bəritem, moə aş bəpate. Çımı bəpeştə çımı pıə-moə iyən az bəşemon bə park bo nəve. Peşo az bə kitobxonə bəşem iyən tolışə nəğilon kitobi bəsem. Peçoştə çımı əzizə dust Adil

բə Ժəմə kə bome, əմə ֆəհմot հəնək bəkamon. Imֆango televiziյədə ցւլəյ vey mərəցինə film niֆo doə bəbe iյən az bəյ təմֆo bəkardem.

Տեքստ 2

Տինə dodom! Թվəsor omə iյən, doon bə zizən, ocon omedə təbiյət. Voə ov bedə bandonədə. Vւl-vənəֆə okardedə. Odəmi məst kardedə ətrə bu!

Տինə dodo, ha sor սւխan doյdəմ bə tւ ki, bomem ւտւ tono əվəsori iminə ruji. Bomem təbrik bəkardem ւտւ idi. Ժəյoən rost bəbem bə Ժəմə bandon, ցւrdə bəkam bo tւ vənəֆə. Bə yode, bə mւ heյo votedəbiֆ ki, dizəbւn rost bedə voə jiədə, ցւnoյe əյ Ժւnie? Ժւmւ yodədən ւտւ bə mւ votə սւխanon հəմմəյ, տինə mo!

Տինə dodo, bւbəֆ mւni, ome zinedənim ւտւ tono, duəvoj beֆədəմ ha sor. Ժւֆ bəbe, i kərə bւֆi bə dəֆt, edյəs bə Ժəմə bandon, bini omedə Ժւ Toliֆə bandon ətrə bu Ժəմə soo? Hiֆ muzangւli sədo omedə? Dəֆi bə Ժəմə boց, bini zizə kardəֆe huֆtiliյə doյ? Bini voə ov bedə bandon sədə? Bւմəs Ժəմə ruyon ֆւrhəֆւrə sədo, xəbə bւdə bə mւ Ժəմə məholiku – Ժəմə տինə-ֆəkə Vətəniku – Toliֆiku!

Ome nւznւme ւտւ tono ւմsorən, bebəfo beֆւմ, տինə mo! Xւdovandi i ruյ bomem ւտւ tono. Bəniֆtemon bəւvւrə nənə-balə, սւխan bəkamon տւn-տւni, bəham ւտւ perosnւə doon mivonədə, bəkam bəֆtւ conւ dւvo. Զəp bəյeֆ iյən bo mւ Ժəմə Vətəniku, Toliֆə bandonku, dəvardəonku, vəoməonku, Ժəմə yolonku, տւn-տւni ցəp bəյeֆ. Azən iյən əցւl bəbem, korpə bəbem, bənom ւտə səյ ւտւ zւnonsə, տւn-տւni laylay bəյeֆ iյən bo mւ.

Siյo bւbu zəmonə dim, տինə Mo! Diյəro egւniəmon iյəndւku – nənə baləku, hovə boəku, balə pւəku. Ozod ni Ժəմə Vətən. Ome zinedənimon bə Toliֆ. Թve, ֆukr kardedəմ bə Xւdo ki, conւmon səցe, xəֆւmon. Sorbəsor heyve bedəmon, vey bedəmon. Xւdovandi, ozod bəbe Ժəմə Vətən, bomemon, հəմմəյəvo bomemon bəֆtւ səlom, bəֆtə inon səlom, տինə Dodo!

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թայիշերեն.

1. Այս թեման մեր այսօրվա զեկուցմանը չի առնչվում, ուստի այդ մասին չենք խոսելու: 2. Ըստ տարածված լուրերի՝ երկրի հայտնի դեմքերից մեկն

իր ատրճանակով ինքն իրեն վիրավորել է, գյուղի բնակիչներն էլ նրան արագ հիվանդանոց են հասցրել: 3. Հիմա, որ այդ ճանապարհով արդեն գնացել եմ, երբեք հետ չեմ դառնալու, անպայման հասնելու եմ նպատակիս: 4. Հասանը ծառաներին վախեցնում է, թե թագավորին ամեն ինչ ասելու է, նրանք էլ վախից երդում են ուտում, որ ոչ ոքի չեն ասելու: 5. Կինը սկսեց աղաչել. «Մխավել եմ, մեկ էլ նման սխալ չեմ անի: Ների՛ր ինձ»: 6. Թալիշական զորքերը հարձակվեցին թշնամու վրա, պարտության մատնեցին և ստիպեցին փախչել: 7. Խոջա Նասիրը անասունների ասպառիկով չի տալիս, ասում է. «Այն մարդուն եմ վաճառելու, ով կանխիկ գումար կտա: 8. Հայտնի թալիշ բանաստեղծն իր գործերից մեկում գրում է. «Մեր ազգի դարդն է ինձ սպանելու, բանտը ինձ չի սպանելու»: 9. Դեռ աշուն է, բայց եղանակը շատ սառն է. տունը տաքացնելու համար նրանք ցախ են հավաքելու: 10. Նախկինում հոտն արածեցնելու համար հովիվները անցնում էին այդ վատ ու վտանգավոր ճանապարհով:

3. Կազմել դրված բայերի պատճառական ձևերը և դրանք կիրառել նախադասություններում. vite, hite, gile, mase, pandome, perase, peraxe, taspe, garde, daviskie:

4. Բայերը դնել համապատասխան ժամանակով.

1. Vəomə mangədə əmə bo dinci sero bə Fransə ... (şe).
2. Nəvuz ponə sori ha haftə de Rabili ... (vindemon karde).
3. Mı zinə ıstı miəllim çı məktəbi soədə ... (vinde) iyən əmə ... (gəp jəy).
4. Bə çəmə şəhəri ome bənav çəvon xıyzon penc sor Vargədizədə ... (jimon karde).
5. Məryəmi 2 sor bənav Lankonış ... (tərg karde), əv ısat Moskvadə ... (jie) iyən ... (ko karde).
6. Az hiçvaxt ıstı koməgi ... (yodo bekarde).
7. Məmməd bo tını vindero bə çəmə kəy ... (ome), boçi ıstı otağiku ... (beşe).
8. Həmməy zinedən ki, şımə çımı maşınon ... (hırie).

Քերականություն

19.1. Անորոշ դերբայի կիրառության առանձնահատկությունները

Խոսելով թալիշերենում անորոշ դերբայի առանձնահատկությունների մասին՝ արդեն նշեցինք, որ այն կարող է նաև գոյականաբար գործածվել և հանդես գալ շարահյուսական տարբեր պաշտոններով: Բացի այդ՝ անորոշ դերբայը լայնորեն կիրառվում է եղանակավորող բայերի, նախադրությունների և հետադրությունների հետ, ինչպես նաև դրա միջոցով կարող է արտահայտվել նպատակ, մտադրություն:

Այսպես, նպատակի և մտադրության արտահայտման համար անորոշ դերբայը կարող է կիրառվել թե՛ *bo* նախադրության հետ, թե՛ առանց դրա, օրինակ՝ *bədom giləy yola çəxu varde* - *կիրամայեմ մի մեծ դանակ բերել*, *şin bo ezım hırıe* - *գնացին ցախ գնելու*, *oməm mol həvate* - *եկել եմ ապրանք վաճառելու* և այլն:

Անորոշ դերբայը ուղիղ ձևով հաճախ կիրառվում է նաև *zine* *իմանալ*, *կարողանալ*, *dəmande*, *bino karde* *սկսել* եղանակավորող բայերի և թبوني *հնարավոր չէ*, *չի կարելի* անդամ եղանակավորող բայաձևի հետ, օրինակ՝

Çəyo çı məlo jen dəmande

bəme.

Çand ruje dılədəm giləy şer

heste,

Nivote zındənim, vote

zındənim.

Jəgo giləy odəm pəydo karde

əbini.

Ապա մոլլայի կինը սկսեց լացել:

Քանի որ է՝ սրտումս մի

բանաստեղծություն կա,

Չասել չեմ կարող, ասել չեմ կարող:

Անհնար է այդպիսի մի մարդու գտնել:

Անորոշ դերբայների հետ թալիշերենի հետադրություններից հատկապես հաճախ է կիրառվում *ro* հետադրությունը՝ կրկին արտահայտելով գործողության կատարման նպատակ, օրինակ՝

Çımı pıə ko kardero bə xaric

şə.

Oməm şıməni vındero.

Հայրս աշխատելու համար արտասահման է

գնացել:

Ձեզ տեսնելու համար եմ եկել:

19.2. Որոշյալ դերանուններ

Որոշյալ դերանունները մատնացույց են անում առարկաների կամ անձերի հայտնի, որոշյալ ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին-առանձին վերցրած, առանց դրանք անվանելու: Թալիշերենի հիմնական որոշյալ դերանուններն են՝ *har/ha ամեն, յուրաքանչյուր, հոփմոյ բոլոր* և *gird բոլոր, ողջ, ամբողջ*:

Ha դերանունը իր արտահայտած իմաստով ածականական է, արտահայտում է հատկանշային իմաստ, այն երբեք չի գործածվում առանձին և միշտ հանդես է գալիս որոշչի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝

Har toliš bimi dılısoxt bovə
kardedə.

*Ամեն թալիշ սրան անկեղծորեն
հավատում է:*

Həlbəttə Xıdo bə ha odəmi ağılış
doə.

*Անշուշտ, Աստված յուրաքանչյուր
մարդու խելք է տվել:*

Rusiyədə har şəhəri gıləy knyazış
hestbe.

*Ռուսաստանում ամեն քաղաք մի
իշխան ուներ:*

Har դերանվան օգնությամբ կազմվում են նաև որոշյալ դերանունների իմաստ արտահայտող բարդ բառեր՝ *har ցլə ցանկացած, ամեն, ամեն տեսակի*, *har vıradə ամեն տեղ, ամենուր*, *har kəs ամեն մեկը* և այլն:

Ի տարբերություն *har* դերանվան՝ *həmməy* և *gird* դերանունները կարող են արտահայտել և՛ առարկայական, և՛ հատկանշային իմաստ, այսինքն՝ գործածվում են ինչպես այլ բառերի հետ, այնպես էլ առանձին, ուստի հանդես են գալիս ածականների և գոյականների հատուկ շարահյուսական պաշտոններով՝ կիրառելով նաև տարբեր նախադրությունների և հետադրությունների հետ, օրինակ՝

Əvon həmməy de mı bə cəmə kə omin.

*Նրանք բոլորը ինձ հետ մեր տուն
եկան:*

Çımı dust gird zinedə.

Ընկերս ամեն ինչ գիտի:

Bə həmməy gılə-gılə səlom doşə.

Բոլորին մեկ առ մեկ բարևեց:

19.3. Ձևի մակբայներ

Թալիշերենում գործողության կատարման ձևը արտահայտելու համար առավել հաճախ մակբայաբար գործածվում են որակական ածականները՝ *çok լավ, barz բարձր, nızın ցածր, sıvık, hoston հեշտ, çətin դժվար, dıroz երկար* և այլն: Ձևի մակբայներ կազմվում են նաև որակական ածականների կրկնությամբ՝ *gədə-gədə կամաց-կամաց, աստիճանաբար* (բառացի՝ փոքր փոքր), *ğoyın-ğoyın ամուր, շատ ուժգին, hoston-hostonի դանդաղորեն, կամաց-կամաց* և այլն: Կան նաև փոքր քանակությամբ բուն մակբայներ, օրինակ՝ *jıgo այսպես, jəgo այնպես, rə արագ, արագորեն, շուտ, di ուշ, yalı մենակ* և այլն: Մակբայների կազմության համար գործածվում է նաև *bə* նախդիրը, օրինակ՝ *bə rohatı հեշտորեն, հեշտությամբ, bə çətinı դժվարությամբ* և այլն:

Օրինակ՝

İştı dust tolışı çok gəp jəydə.

Քո ընկերը թալիշերեն լավ է

խոսում:

Tı rohat bə çəvon otağ dəşədəş.

Դու հանգիստ նրանց սենյակ ես

մտնում:

Az hejo yalı bə noxəşxonə şedəm.

Ես միշտ մենակ եմ հիվանդանոց

գնում:

Բառապաշար

çəxu	դանակ	sıvık	հեշտ, թեթև
mol	ապրանք	hoston	հեշտ
zıne	կարողանալ	çətin	դժվար
əbını	հնարավոր չէ	ğoyın	ուժեղ, ամուր
dılısoxt	սրտանց, ի սրտե	jıgo	այսպես
həlbəttə	անշուշտ	jəgo	այնպես
səlom doy	բարևել	yalı	մենակ
nızın	ցածր	hırıəkəs	գնորդ
dukondor	խանութպան	ğıymət	գին, արժեք
kutisə	վրա, վրան	şonəpəpu	հոսպոպ
vəyu	հարս	həsuyə	սկեսրայր, աներ
kəybə	տան դուռ	həsi	սկեսուր,

obe	բացվել	xəcolət	զոքանչ
ğəfil	հանկարծ	lovə karde	ամոթ
			աղաչել,
			պաղատել
pegordinie	վերածել, դարձնել	ejəne	մտցնել, խրել
şonə	սանր	ğəzo	վթար
tənxo, sərvət	հարստություն	baxş, baxşə	պարզև
kurs	դասընթաց	mışoiyət karde	ուղեկցել
səlavat, divo	աղոթք	hi	արտ
morə	մուկ	əzbər	անզիր

Տեքստ 1

Գլայ յեն բə vıjor şedə olət hıriero. Dəşedə bə dukon, dəmandedə hosə-hosə nəve iyən de dıǵǵəti həmməy molon diyə karde. Hırəkəs oləton səpe çəvon ğıyməti nıvindeədə votedə bə dukondori:

- Boçi moli ğıymət ni çəy kutisə?

Dukondor cəvob doydə:

- Az norozi nim ıstə yodiku. Əzbər zinedəm həmməy molon ğıyməti.

Տեքստ 2

Տոնաբան

İ ruj gıləy vəyu şıştedəbe kədə ıstə səy. Kəybə ğəfil obedə, çə vəyu həsuyə dəşedə bə kə, vəyu oje sə vindedə. Vəyu xəcolətiku dəmandedə bəme, lovə kardedə bə Xıdo:

- Ha Xıdo, həni əbını diyə karde bə çımı həsuyə dimi. Tı boy mını pegordın bə gıləy pərəndə, bıpərim-bışim.

Xıdo çı vəyu sıxani məsedə, bə տոնաբան pegordiniedə əy, pəredə-şedə, şonə çəy sədə.

Isət տոնաբան həmonə vəyuye ki, pəgardə bə pərəndə, sədəşən տոնայե, sə şışteədə ejənəşe bəştə sə, jəgoən mandə.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Բոլորը սկսեցին հասկանալ, որ չի կարելի դրա մասին ամեն տեղ խոսել: 2. Ասում են, որ մարդու ծննդյան օրը ժամանակից շուտ շնորհավորել չի կարելի: 3. Անցյալ տարվա վթարից հետո այդ կինը դժվարությամբ է շարժում ձեռքներն ու ոտքերը, այժմ էլ սկսել է վատ տեսնել: 4. Երկար ժամանակ էր, ինչ Շիրվադ Ալիզոդան գործազուրկ էր, ոչ մի տեղ չէր կարողանում աշխատանք գտնել: 5. Լեզուն յուրաքանչյուր ազգի ամենամեծ հարստությունն է, Աստծո՝ ժողովրդին տված ամենամեծ պարգևն է: 6. Յուրաքանչյուր ոք իր կարողության չափով օգնեց ինձ, և ես բոլորից շնորհակալ եմ: 7. Ընկերս ամեն տարի Ֆրանսիա է մեկնում՝ մասնակցելու ֆրանսերենի դասընթացների, և այժմ շատ լավ է խոսում ֆրանսերեն: 8. Այդ ծեր կինը երբեք տանից մենակ դուրս չի գալիս, նրան միշտ ուղեկցում է իր թոռներից մեկը: 9. Երբ հասկացա, որ ուշանում եմ, սկսեցի ավելի արագ քայլել և 15 րոպեից արդեն համալսարանում էի: 10. Աղոթքով խոզին արտից վռնել հնարավոր չէ (ասացվածք):

3. Կազմել տեքստ՝ կիրառելով ձևի մակբայներ ու որոշյալ դերանուններ:

4. Ընդգծված բառերը փոխարինել հոմանիշներով.

1. Ha rəbədə əştədəm iyən bə çımı hovə səlom doydəm.
2. İberdəmə bə obe, gıləy reçinə kinə bə kə dəşe.
3. Zışango çəmə hamsiyə pişigi kuçədə moreş gəte.
4. Im məşhurə şair Tolışistonədə bə dınyo omə, əmma Rusiyədə bə rəhmət şə.
5. Vəomə cımə rujədə Adil de Babəki bəştə vətən bəşe.

114

filon *այսինչը, այնինչը, ուն*, filonkəs *ուն մեկը* և այլն: Այս դերանունների մի մասը առարկայական, որոշ մասն էլ հատկանշային իմաստ են արտահայտում՝ հանդես գալով համապատասխանաբար գոյականին և ածականին հատուկ շարահյուսական պաշտոններով, օրինակ՝

- ենթակա՝

İ kəsi ıstə çəsməkiş iyo yodo
bekardə.

*Ինչ-որ մեկը իր ակնոցն այստեղ է
մոռացել:*

- ստորոգյալի մաս՝

Im dı şikilon arədə bə
fərğon çand gılən?

*Այս երկու նկարների միջև տարբերությունները
քանի՞ սն են:*

- որոշիչ՝

Kali rəson əncəx çəmə şəhərədə bemedən.

*Որոշ բույսեր միայն մեր
քաղաքում են աճում:*

Բառապաշար

olixarte	պանկեյ
pegordinie	թարգմանել
xonəxo	ինչ-որ մեկը
şikil	նկար
arədə	միջև
rəsə	բույս
beme	աճել
tətil	արձակուրդ
Nəvuz	Նովրուզ
mısilmon	մուսուլման
ğ	կարգուկանոն
hələ	դեռ, դեռևս
fik doy	ուշադրություն դարձնել

aeroporto	օդակայան
epəre	վայրէջք կատարել
mığdor	թիվ, քանակ
məntər	խցանում
ruk	փոքր (քույր, եղբայր)
nəhoyət	վերջապես
dəgiş be	փոխվել
cıvon	երիտասարդ
xoştəbiyət	ուրախ
məzəyn	սրամիտ
bolışnə	բարձ
eşande	թափ տալ, թափահարել
tədoruk	պատրաստություն

andue	ամբածեփել	cəmat	մարդիկ
ğab-ğəcəğ	ամանեղեն	kanə	հին
lef	վերմակ	kul	տարվա վերջին չորեքշաբթի օրը
mavlə	սափոր, ջրաման	kag	հավ
kınc	անկյուն	moğnə	ձու
peşande	ցողել, շաղ տալ	nənə	տատիկ
bəd	վատ	soxte	սարքել, պատրաստել
aşti be	հաշտվել	bılınd	բարձր
vi	փակ	xıçə	ճյուղ
məcbur be	ստիպված լինել	baharaməd	գարունը եկավ (պարսկերեն)
koy otağ	աշխատասենյակ	subədəli	առավոտյան
bə xoş ome	հավանել	bəsə	դեպի (զետ, լիճ)
ehtimolən	հավանաբար	ovə çol	ջրհոր
çəşkarde zal	սպասասրահ	holəşge	ճոճանակ

Տեքստ 1

Dəvardə mangədə çımı ən çokə dustonədə giləyni, Hilal, çı Avropəku bə Lankon bo tovistoni tətılön oməbe. Da sorisə vey be ki, əv ıstə əzizə vətənədə bənıbe. Vaxtı ki az bə aeroporti rəsım, oşko be ki, vey di bəbım. ıstənəpər bə zəmin epərəbe, çımı dustən de taksi bə çəmə kə şəbe. Azən ogardım. Oxonə soronədə Lankonədə maşınön mığdor xəyli ziyod bə iyən çı şəhəri roonədə məntəron rə-rə bedən. Bə kəy ki dəşım, vındıme ki, Hilal kədəən ni. Əv de çımı rukə boə şəbe bo şəhəri nəve. İ-dı saat bədıgə əvon ogardin iyən əmə nəhoyət vındemonımon karde. Hilal hiç dəgiş bənıbe, çımı həmonə cıvonə, xoştəbiyətə iyən məzəynə dust be. Həyf ki, çəy jen Məryəm de əy omə nıbe.

Տեքստ 2

Նəvuzə id

Նəvuzə id ցı mısılmonon vey əzizə ide. Hələ bə Նəvuzə idi xəyli mandə odəmon bə sələğə-səhmōni fik doydə: kə anduedən, ġab-ğəcəği təmiz kardedən, lef-bolişnə eşandedən, ha kəs bəştə əğilon tojə oləti tədoruki gətədə. Cəmat bə kanə sori oxonə çoşambə şəvi hələ i haftə mandə bə kulə vıjor şədə, ım idi harçi sedə. Tolışon kulə şəvi be moy, idə şəvi be kagi dəvonie zinedənin.

Hələ bə Նəvuzə idi xəyli mandə əğilon moğnə jəy bino kardedən, kə-kə nəvedən, piyəjenə nənonku soxtə moğnə tələb kardedən, don bilində xıçonədə holəşge ehaştədən, şangovəsəy kəybə-kəybə nəvedən, “Baharaməd” votedən.

Kulə ruji subədəli odəmon həmməy bəsə ru, bəsə ovə çoli, bəsə honi, bəsə diyo de mavlə bo tojə ovi şədən. Ov vardedən, bə kə ço kinci peşandedən.

Նəvuzə idədə de iyəndi bəd bə kəson aştı bedən.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Երեկ ընկերս ինձ տեսնելու համար մեր գրասենյակ էր եկել, այն փակ էր եղել: 2. Մարիամը շատ շուտ էր համալսարան հասել և ստիպված էր եղել դրսում սպասել իր ընկերներին: 3. Այդ մասին լսելով՝ ուսուցիչները ծիծաղել էին և սենյակից դուրս եկել: 4. Մի քանի օր առաջ երկրի նախագահը մեկնել էր Մոսկվա՝ հանդիպելու ռուսաստանցի իր պաշտոնակցին: 5. Ինչ-որ մեկն իր դրամապանակը մոռացել է իմ մեքենայում: 6. Տնօրենը արագ ներս մտավ աշխատասենյակ, իր մեծ պայուսակից ինչ-որ բան հանեց, դրեց սեղանին և կրկին դուրս գնաց: 7. Մայրս ինձ ասաց, որ այսինչի տղան էր եկել մեր տուն, բայց մինչև իմ վերադարձը արդեն գնացել էր: 8. Նախկինում մենք այդ քաղաքում երբեք չէինք եղել, բայց այնքան հավանեցինք այն, որ հավանաբար եկող տարի էլ կմեկնենք այնտեղ հանգստանալու: 9. Երբ մենք ձեր տուն եկանք, դու արդեն քնած էիր, շատ էինք ուշացել: 10. Երբ դուք օդակայան հասաք, ձեր հյուրերը սպասասրահից դուրս չէին եկել, նույնիսկ ինքնաթիռը դեռ վայրէջք չէր կատարել:

3. Տրված անորոշ դերանուններով և բայերով կազմել նախադասություններ՝ ստորոգյալը դնելով վաղակատար անցյալ ժամանակաձևով.

- | | |
|--------------------|-----------------------|
| 1. Ի կəs – ուշտե | 6. Զand gılə - eginie |
| 2. Fılönkəs - hite | 7. Ի xonəxo - bəme |
| 3. Gıləy – peme | 8. Kəsi – marde |
| 4. Co gılə - şe | 9. Զiçsə - beşe |
| 5. Kali – ome | 10. Fılön – sire |

4. Գտնել նախադասություններում առկա սխալները և ուղղել.

1. Zinə subədəli az ıstı dust Şirzadi vıjorədə vındıme.
2. Pönə sori ha cımə mı de Məryəm de avtobusi bə məktəb şedəbim.
3. Bə çəy gorə ki, az xəyli di bə universitet rəsəbiş, çımı dusti bə kə ogardəbin.
4. Vəomə işambə ruji Əbosi iyən Zafəri bəşen bə gol bo moy gəteku.
5. Penc sore ki, çımı miəllim Ermənstonədə niye, əv ıset Fransədəy jimon kardədə.

Քերականություն

21.1. Անցողական բայերի վաղակատար անցյալ ժամանակաձևը

Մի անցյալ ժամանակակետից առաջ կատարված, ավարտված գործողություն մատնանշող վաղակատար անցյալ ժամանակաձևը անցողական բայերի դեպքում թալիշերենում կազմվում է դարձյալ անցյալի դերբայից, սակայն գործողության սուբյեկտի դեմքն ու թիվն արտահայտվում են կցական-անձնական դերանունների՝ ձայնավորահանգ բառերից հետո դրվող ձևերով՝ -m, -i, -s, -mon, -on, -son, ապա բոլոր թվերի և դեմքերի համար դրվում է be չինել բայի եզակի թվի երրորդ դեմքի անցյալ կատարյալի ձևը՝ be, օրինակ՝ kardəmbə *արել էի*, kişəşbe *սպանել էր*, vindəmonbe *տեսել էինք*, ekardəyonbe *լցրել էիք*, məsəşonbe *լսել էին* և այլն: Եզակի թվի երկրորդ դեմքի դեպքում կրկին կցական-անձնական դերանունը կցվում է ոչ թե ստորոգյալին, այլ նախադասության մեկ այլ անդամի, օրինակ՝

Vaxti ki tini vindime, giləy reşinə oləti *Երբ քեզ տեսա, մի գեղեցիկ զգեստ*
tan kardəbe. *էիր հագել:*

Ti çımı kitobı bə Əli doəbe? *Դո՞ւ էիր գիրքս Ալիին տվել:*

Անցողական բայերի անցյալ վաղակատարի ժխտական խոնարհումը կազմվում է ու- նախամասնիկի օգնությամբ, որը կցվում է be օժանդակ բային, օրինակ՝ bardəmonbe *չէի տարել*, torsiniəonbe *չէիր վախեցրել*, hardəşnibe *չէր կերել* և այլն:

21.2. Բաշխական թվականներ

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշակի թվային քանակով: Թալիշերենում բաշխական թվականները կազմվում են քանակական թվականների կրկնությամբ, օրինակ՝ di-di *երկու-երկու*, երկուական, penc-penc *հինգ-հինգ*, հնգական, həzo-həzo *հար-հար*, հազարական և այլն: Շատ հաճախ բաշխական թվական-

ների կազմության համար քանակական թվականի հետ կրկնվում է նաև ցլօ դասանիշը, օրինակ՝ *da ցլօ - da ցլօ տասական, sa ցլօ - sa ցլօ հարյուրական* և այլն:

21.3. Ժխտական դերանուններ

Ժխտական դերանունները մատնացույց են անում ամբողջությամբ ժխտվող առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու: Թալիշերենում կիրառվող ժխտական դերանուններն են՝ *hiç nş* մի, *hiç kəs*, *hiçki nş nş*, *hiç ցլօ nş մեկը*, *hiççi nşինչ*: Սրանք իրենց իմաստով փաստորեն ժխտում են որոշյալ դերանունների իմաստը և դրանց հետ հականշային գույգեր կազմում՝ *har - hiç*, *har kəs - hiç kəs*, *har ցլօ - hiç ցլօ*, *harçi - hiççi*: Այսպիսով, ժխտական դերանունները որոշյալ ու անորոշ դերանունների նման արտահայտում են հատկանշային (*hiç*, *hiç ցլօ*) կամ առարկայական (*hiç kəs*, *hiççi*) հատկանիշ և հանդես գալիս համապատասխանաբար ածականին և գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով՝

- որոշիչ՝
Hiç ցլօ astovə osmonədə vində bedəni. Երկնքում ոչ մի աստղ չի երևում:
- ենթակա՝
Hiç kəs iyo mini zinedəni. Ինձ այստեղ ոչ ոք չի ճանաչում:
- Անջատման անուղղակի խնդիր՝
Tı hiççiku tarsədəniş. Դու ոչնչից չես վախենում:
- Հանգման անուղղակի խնդիր՝
Bə hiç kəsi ıstı xıyoli həxədə məvot! Ոչ ոքի քո երազանքի մասին մի՛ ասա:

Պետք է նկատել, որ թալիշերենի միակ բուն ժխտական դերանունը *hiç*-ն է, որն ածականական իմաստ է արտահայտում, իսկ *kəs*, *çi*, *ցլօ* բառերի օգնությամբ դրանից կազմվում են ժխտական դերանունների իմաստ արտահայտող բարդ բառեր:

Բառապաշար

tan karde	հագնել	osmon	երկինք
tarse	վախենալ	xıyol	երազանք
hiç	ոչ մի	jəji	ոգնի
ğoti	տուփ	xəbə se, parse	հարցնել
lonə	բույն	kəy həyvon	ընտանի կենդանի
bə dumot şe	մտածել, մտորել	vəşi	սոված
səhv	սխալ	vadoy	արձակել, բաց թողնել
valeh be	հիանալ, հրճվել	jıgo bızın	կարծես, ասես
çie	թվալ	ovi ambo	ջրամբար
hədərə vırədə	իզուր չէ, որ	bə dıgğəti	տեսարժան
ni, ki		loyiğ	
rəğəmin	թվային	fotoaparət	տեսախցիկ
fotoşikili kəşe	լուսանկարել	vəş	հրդեհ
ittifoğən,	պատահաբար	həray	ահազանգ
ənəzınə		ğızılın	նսկյա
xılosəkə,	փրկարար	təxmin kardə	ենթադրյալ
xıloskor		bə	
otırnie, nəve	խուզարկել	doğmə	հարազատ
sıbut,	ապացույց	zıne nızıne	անձանաչելիորեն
dastəvuz		dərəcədə	
ğurbət	օտարություն	betərbiyəti	անդաստիարակություն
xəcolət kəşe	ամաչել	ıclos	նիստ
xariciyə koon	արտաքին		
	գործեր		
imtino karde	հրաժարվել		

Stəpuun 1

Jəji

Əjdər de əğılon bo futbol hənək karde şəbe. Bə kə oğardeədə əvon roədə gıləy jəji vindaşonbe. Gətəşonbe əv, vardaşonbe bə kə, bə ğoti dənəşonbe. Şangovəsəy Əjdəri pıə bə kə omeədə vindaşbe ki, ıstə zoə de jəji hənək kardədə. Çəyku xəbəş səbe:

- Əjdər, tı ım jəji bə kə boçi varda?

Əjdəri cəvobış doəbe:

- Dədəli, az bo jəji lonə bədutem, əy kədə obəğatem.

Əjdəri pıə votəşbe:

- Əjdər, jəji kə həyvon ni. Əy kədə ogətə əbini. Tı hiç zinedəş jəji çiç hardədə?

Əjdər bə dumot şəbe, parsəşbe:

- Dədə, jəji çiç hardədə ki?

- Vindəş, çımı zoə, tı hiç zinedəniş jəji çiç hardə, əy çoknə obəğatəş? Əv oxo vəşi bəmarde.

Əjdər ıstə səhvi dərəse, jəji vadoşe bə so.

Stəpuun 2

Xanbolan

Xanbolani həxədə vey məsəmbə, əncəx vindəmnıbe. Dəvardə əvəsorədə bə Burcəli ğəsəbə, bəştə xalə kə şəbim. İ ruj de ıstə xalə zoə Akifi bə Xanbolani təmşo şimon. Çəy vinde təmom co şeye, odəm valeh bedə. Jıgo bızın kavuyə bandon arədə gıləy ovəynəye, iyən ım ovəynədə ətrofədə bə harçi təmiz çiedə. Az çı dınyo çand gılə kişvəronədə bəbim iyən xəyli golon və ovi amboon vindəmbe, əmma Xanbolan çımı vində həmməysə ğəşəngə gol be. Hədərə vırədə ni ki, votedən “Xanbolan çı Lankoni bemisilə mirvariye”.

Çımı xalə zoə çımi navoni penc-şəş kərə Xanbolanədə bəbe iyən bə dığğəti loyiğə həmməy vıron vey çok zinedəbe. Akifi ıstə tojə rəğəminə fotoaparətışən vardaəbe, iyən əmə vey reçinə fotoşikilon kəşımone.

Əmə əyo beədə, həm çəmə vətəni paytaxt Lankoniku, həməni çı məholi co rəyononku xəyli odəmon bə təmşo oməbin.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստերը:

2. Թարգմանել թայիշերեն.

1. Երբ մենք հասանք կայարան, այնտեղ արդեն ոչ ոք չկար, բոլորը գնացել էին: 2. Նա փողոցում պատահաբար տեսավ իր հին ընկերոջը, ում հետ նույն համալսարանում էին սովորել: 3. Աքիֆը այդ մասին ոչ ոքի չէր ասել, ճշմարտությունը թաքցրել էր անգամ իր կնոջից ու երեխաներից: 4. Տատիկս ու պապիկս ապրում էին Լենքորանի կենտրոնում, մի գեղեցիկ ու մեծ տան մեջ, որ կառուցվել էր նախորդ դարի երեսնական թվականներին: 5. Հրդեհի մասին ահազանգից հետո փրկարարները աշակերտներին երեք-երեք դուրս էին բերել դպրոցից: 6. Մայրս շատ ուրախ էր, քանի որ գտել էր ոսկյա մատանին, որ մի քանի տարի առաջ էր կորցրել: 7. Ոստիկանությունը խուզարկել էր ենթադրյալ հանցագործի տունը, բայց ոչ մի ապացույց չէր գտել: 8. Շատ ցավալի էր, բայց ես չճանաչեցի հարազատ եղբորս. երկար տարիներ օտարության մեջ ապրելով՝ նա անճանաչելիորեն փոխվել էր: 9. Լավ չէ, որ դու ոչնչից ու ոչ ոքից չես ամաչում, դա անդաստիարակության նշան է: 10. Թեև հայտարարվել էր, որ արտաքին գործերի նախարարը կմասնակցի նիստին, բայց վերջին րոպեին նա հրաժարվել էր և չէր եկել:

3. Կազմել սահմանական եղանակի վաղակատար անցյալով

նախադասություններ հետևյալ բայերով. hitovnie, vote, çınie, hirie, pegordinie, guş doy, darişte, haşte

4. Բաց թողնված տեղերը լրացնել համապատասխան

նախադրություններով և հետադրություններով, բայերը դնել անցյալ վաղակատար ժամանակաձևով.

1. Vaxtı ki Pəri ... ıstə kə rəse, çəy şu kəyku (beşe) həni.
2. Mı zinə Ovşumım vinde, ki çımiku penc sor ... nav ... əy məktəbədə (ko karde).
3. Mərcon xəyli ğəmin be, çumçiko ıstə pəvəndi doə giyoza vıjor... (gin karde).
4. Şahnoz ıstənəpəri pəremoni... (di be) iyən (məcbur be) ... ğatəri ... Tehron şe.
5. Tı (zine), ki Mina dı mang bənav şəhəri... (şe), əmma ... mı hiççi (vote).

Քերականություն

22.1. Ըղձական և ստորադասական եղանակներ. ներկա-ապառնի

Թալիշերենում ցանկություն, նպատակ, պայման, հնարավորություն և այլ իմաստներ պարունակող և իրականում չկատարվող գործողությունը արտահայտվում է ստորադասական և ըղձական եղանակների ժամականներով: Այս երկու եղանակային ձևերի համատեղ քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախ՝ լեզվի զարգացման արդի փուլում սույն եղանակները զգալիորեն բաղարկված են և կարող են կիրառվել մեկը մյուսի փոխարեն: Բացի այդ՝ անցյալ ժամանակաձևերի համար դրանք ունեն մեկ ընդհանուր ժամանակաձև:

Ի տարբերություն սահմանական եղանակի ապառնի ժամանակի, որն արտահայտում է ստույգ կատարվող գործողություն, ստորադասական և ըղձական եղանակների ներկա-ապառնին ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարելը պարտադիր չէ, բայց հնարավոր է, և արտահայտում է ցանկություն, պայման, նպատակ, հնարավորություն, մտադրություն, ակնկալիք և այլն:

Ստորադասական եղանակի ներկա-ապառնի ժամանակաձևը կազմվում է երկհիմք բայերի ներկայի կամ միահիմք բայերի ընդհանուր հիմքին ավելացնելով *bi-* նախասմասնիկը և հետևյալ դիմային վերջավորությունները՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-im	-əmon
2-րդ դեմք	-is	-ion/-yon
3-րդ դեմք	-i	-in

Եթե բայահիմքը վերջանում է ձայնավորով, ապա դիմային վերջավորությունների 1 ձայնավորը սղվում է՝ *bışışım լվանամ, bədəm տամ, bihiş pñtu, bışış qñsu, bımandı մնամ, bıkə անի, bıvardəmon բերենք, bijimon ապրենք, bıkiştıon սպանեք, bıkuyon հարվածեք, bıərəın հասնեն, bıənən դնեն* և այլն:

Ըղձական եղանակի ներկա-ապառնին կազմվում է ճիշտ նույն կերպ
և ստորադասականի ներկա-ապառնից տարբերվում է միայն դիմային
վերջավորությունների օ ձայնավորով՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-om	-omon
2-րդ դեմք	-o	-oyon
3-րդ դեմք	-o	-on

Ձայնավորահանգ բայահիմքերի դեպքում դիմային վերջավորություն-
ների օ ձայնավորը պահպանվում է, փոխարենը սղվում է բայահիմքի
ձայնավորը՝ *bışıstom լվանաւ, bidom տաւ, bihişoş քնես, bımando մնաս,*
bıko անի, bınon ղնեն և այլն:

Նախդրավոր բայերի դեպքում ստորադասական և ըղձական եղա-
նակների ներկա-ապառնի ժամանակաձևում *bi-* նախամասնիկը ընկնում
է (օրինակ՝ *peşomım/peşomom խմեմ, ogardış/ogardoş վերադառնաս,*
bevardı/bevardo դուրս հանի և այլն), սակայն բարդ բաղադրյալ բայերի
դեպքում պահպանվում է (*pəydo bıxəmon/bıxomon գտնենք, ցք*
bijənon/bijənon խոսեն):

Ստորադասական եղանակի ներկա-ապառնի ժամանակաձևում *be*
լինել և *şə գնալ* բայերը շեղվում են ընդհանուր կանոնից. դիմային վերջա-
վորություններում 1 ձայնավորի փոխարեն կիրառվում է *u* ձայնավորը՝
bıbum լինեմ, bışum գնամ, bıbu լինի, bışu գնա և այլն:

Ժխտական խոնարհումը կազմվում է *ni-* նախամասնիկի միջոցով,
որը դրվում է *bi-* նախամասնիկի փոխարեն՝ *nıdəm/nıdom չտամ,*
nıhəvatəmon/nıhəvatomon չվաճառենք, jımon ունեմ/ունեմ ապրեն և այլն:

Ստորադասական և ըղձական եղանակների ներկա-ապառնի ժամա-
նակաձևերը, բացի ցանկություն, իղձ, հորդոր արտահայտելուց, բարդ
ստորադասական նախադասություններում արտահայտում է նաև
իրական պայման՝

Ehanə tı kədə bımandoš, azən
bəmandem.

Եթե դու տանը մնաս, ես էլ կմնամ:

Girəm əmə isət həğiğəti nıvotəmon,
peşo hiçki bə əmə bovə nibəkarde.

*Եթե հիմա մենք ճշմարտությունը
չասենք, հետո ոչ ոք մեզ չի
հավատա:*

22.2. Ըղձական և ստորադասական ներկա-ապառնիի կիրառությունը եղանակավորող բայերի և բառերի հետ

Խոսելով թալիշերենում անորոշ դերբայի մասին՝ արդեն անդրադարձանք դրա կիրառությանը մի շարք եղանակավորող բայերի հետ, ինչպես, օրինակ, *zine կարողանալ*, *dəmande*, *bino karde սկսել* և այլն (տե՛ս §19.1): Մի շարք այլ եղանակավորող բայերի ու բառերի հետ անորոշ դերբայի փոխարեն կիրառվում է ըղձական ու ստորադասական ներկա-ապառնին: Այս ժամանակաձևը գործածվում է հետևյալ բայերի ու բառերի հետ՝ *məcbur be ստիպված լինել*, *bəpe պետք է*, *mımkune հնարավոր է*, *qıngē*, *Xido nıkardə Աստված չանի* և այլն:

Թմə bəpe bızınəmon ki, əvon yolə xəton bo çəmə xəği.	<i>Մենք պետք է իմանանք, որ նրանք մեծ վտանգ են մեր ազգի համար:</i>
Oxoy məcbur bim bıpərim bə Suriyə.	<i>Ի վերջո ստիպված եղա թոշել Սիրիա:</i>
Gəp məjən, Xido nıkardə çımı pıə bıməso.	<i>Մի՛ խոսիր, Աստված չանի հայրս լսի:</i>

Որոշ բայերի հետ կարող է կիրառվել և՛ անորոշ դերբայը, և՛ ստորադասական կամ ըղձական ներկա-ապառնին, օրինակ՝ *məcbur be ստիպված լինել*, *bə ġəror ome որոշել*, *hozi be պատրաստ լինել*, *cəhd karde ձգտել*, *փորձել*, *bəbe կարելի է*, *կլինի* և այլն:

Bə ġəror oməm de əy gəp bijənim.	Bə ġəror oməm de əy gəp jəy.	<i>Որոշել եմ նրա հետ խոսել:</i>
Zoon hestin ki, hozın lap imruj bışun bə Fələstin.	Zoon hestin ki, hozın lap imruj bə Fələstin şe.	<i>Կան տղաներ, որ պատրաստ են հենց այսօր Պաղեստին գնալ:</i>

22.3. *İyəndi* փոխադարձ դերանունը

Փոխադարձ գործողությամբ իրար հետ կապված առարկաներ ցույց տալու համար թալիշերենում գոյություն ունի միայն մեկ փոխադարձ դերանուն՝ *iyəndi իրար, միմյանց, մեկմեկու՝*

Əvon iyəndışon kışte.	<i>Նրանք իրար սպանեցին:</i>
-----------------------	-----------------------------

Թմա boğədə iyəndi vindimone.

Մենք իրար այգում տեսանք:

Իյəndi փոխադարձ դերանունը իր իմաստաբանական առանձնահատկության պատճառով կարող է գործածվել միայն հոգնակի թվի դերանունների և մեկից ավելի գոյականների հետ, այսինքն՝ այն ունի հոգնակի թվի իմաստ: Բացի այդ՝ այն ինքնին արտահայտում է հայցական հոլովի իմաստ, ուղղական հոլովի իմաստ չունի, հետևաբար չի կարող ստանալ ենթակայի շարահյուսական պաշտոն, բայց նախդիրների և հետադրությունների օգնությամբ կարող է հանդես գալ գոյականին հատուկ շարահյուսական այլ պաշտոններով, օրինակ՝

Թյdər iyən Akif de iyəndi ko kardedən
əyo.

Տիմə bə iyəndi vey bevəcə sixanonon
vote.

Թմə iyəndiku tiledəmon.

*Աժդարն ու Աքիֆն այնտեղ իրար
հետ աշխատում են:*

*Պուք իրար շատ վատ բառեր
ասացիք:*

Մենք իրարից ենք փախչում:

Բառապաշար

kue	խփել, հարվածել	fərosətin	հնարամիտ
girəm, ehanə,	եթե	ğərəyz	բացի
əgəm			
bovə karde	հավատալ	kosib	աղքատ
mımkun	հնարավոր	ruji çı rujon	օրերից մի օր
Xıdo nıkarde	Աստված չանի	zımıstoni	ձմերուկ
xəto	վտանգ	tımən	թուման
hozı be	պատրաստ լինել	xırcin	խուրջին
bəbe	կարելի է, կլինի	xıdohafiz vote	հրաժեշտ տալ
dəro gınie	ճանապարհ ընկնել	hə	ավանակ, էջ
asp	ձի	dərəse	հասնել
kəlimə	խոսք,	rozi be	համաձայնել
	արտահայտություն		
miyon	կենտրոն, մեջտեղ	şək varde	կասկածել
bə sə ome	զուլիս գալ	andom	մարմին
beəloc	անելանելի	damə be	ասել, խոսել

çərxigardon	ճակատագրի անիվ	dəbaste	կապել
tərg	թամբափող	ğırmoc	մտրակ
kəno	կողոթ	əmr karde	հրամայել
de ... ıvırədə	միասին, մեկտեղ	məclis	հավաք, ժողով
dave karde	վիճել	fəlokət	աղետ
kitabxonəvon	գրադարանավար	vəy, veyəşmard	բազմաթիվ
əməkdoşəti karde	համագործակցել	tərg karde,	լքել
		şodoy	
dast gəte	աջակցել	tam jəy	լռել
mıfəssəl	մանրամասն	elon karde	հայտարարել
bərk	ուժեղ, խիստ	voye	տեղալ, գալ

Տեքստ

Բərosətinə piyəmerd

Gıləy hestbe, gıləy nıbe, ğərəyz Xıdo dınyo dimisə hiçki nıbe. Gıləy piyəmerd hestbe. Əv kosib be. Ruji çı rujon piyəmerdi pegətişə həşt gılə zımıstoni, bardışe bo podşo. Podşo gətışe çəvədə çə gıləş, vığande bo vəziri. Vəzirən bo har zımıstoni bəy doşe çosa tımən, vığandışe çı podşo toniku. Podşo ıştənən çosa tımənış doy bə piyəmerdi. Piyəmerdi əvonış ekarde bəştə xırcin, bə podşoş xıdohafız vote, xırcinış noy ıştə hə səpe, penışte bə hə, dəro gınie bəştə kə.

Vəzir ome çı podşo toniku, bəyış vote:

- Podşo-aləm səğ bıbu, tı ənə ğızılı bə piyəmerdi boçi doy? Az bəşem bəstem ə ğızılı piyəmerdiku.

Podşoy votışe:

- Tı ə ğızılön de sıxani bıstən. Ehanə de zuy bıstənoş, az ıştı giy bədom je.

Vəzir penışte bəştə aspi, şe dərəse bə piyəmerdi, votışe:

- Piyəmerd, az ıştıku se gılə kəlimə xəbə bəsem. Ehanə cəvob doy nızinoş, ə ğızılön bəstem ıştıku.

Piyəmerd rozi be. Vəziri votışe:

- ıştı mandə vırə çı dınyo kom vırəye?

Piyəmerdi votışe:

- Çımı hə mandə vırə çı dınyo miyone. Ehanə şək vardədəş, bıpam!

Vəzir diyəş karde ki, ım de pamie bə sə omə ko ni. Əve dıminə sıvolış doy:

- Piyəmerd, osmonədə çanədə astovə heste?

Piyəmerdi votışe:

- Çımı həy andomədə bə muyon başmard, bəvədə bəzineş ki, osmonədə çanədə astovə heste.

Vəzir beəloc mande, votışe:

- Piyəmerd, i gılə məsələm mande.

Piyəmerd ogarde, votışe:

- Çı jıtono bə pe sıxan əvotnin. Tı evo çı aspisə, penişt bə çımı hə, az peniştım bə ıştı aspi, ıştı ə sıvoli cəvobiyən bıdəm.

Vəzir eme, piyəmerd peniştə bə aspi, votışe:

- Isət çımı xırcini dəbast bə çımı tərgi.

Vəzir dəbastışe. Piyəmerdi votışe, ki, tı penişt bə çımı hə. Vəzir peniştə bə hə.

- Isət bıvot bıvındım çiç votedəş.

Vəzir damə be:

- Piyəmerd, çərxigardonədə çiç nıvıştə bə?

Piyəmerdi cəvobış doy:

- Çərxigardonədə nıvıştə bə ki, vəzir bəpe bə piyəmerdi həy peniştə, piyəmerdən bə vəzirə aspi peniştə.

Jəşe ğırmoc bə aspi, şe. Podşo kənoku ımonı həmməy seyr kardedəbe. Məsələş jıgo vinde, bə ğoşunış əmr karde ki, vəzirə de hə ıvıradə pegətən biyən bə çımı məclis. Vəzirışon varde bə podşo məclis. Podşo votışe:

- Bə tınım nıvote, məşi? Çı ğızılı dumo şəbiş, aspiyən doy, omış.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

2. Թարգմանել թայիշերեն.

1. Նա ձգտում էր հաճախ օգնել իր պապիկին, ով ծեր էր ու մենակ էր ապրում: 2. Գուցե նրան վաղը համալսարանում տեսնեմ, և եթե լավ եղանակ լինի, դասերից հետո կգնանք զբոսնելու: 3. Մի ծերունի երեք տղա ուներ, որոնք իրար հետ հաճախ էին վիճում: 4. Նրանք պետք է այդ գրքերն իրենց հետ բերեն և հանձնեն գրադարանավարին: 5. Աղետի

պատճառով բազմաթիվ մարդիկ ստիպված էին լքել ոչ միայն իրենց տները, այլև հայրենի երկիրը: 6. Միասին ապրել չէին կարող, բայց իրարից հեռու մնալ էլ չէր լինում: 7. Եթե ուզում եք հասնել ձեր բոլոր նպատակներին, դուք պետք է նախ և առաջ լուծեք այս մեծ խնդիրը: 8. Կարծում եմ, որ մենք պետք է իրար հետ համագործակցենք ու աջակցենք իրար: 9. Տարիներ շարունակ Սարվինոզը ստիպված է եղել լռել, բայց այս անգամ չկարողացավ զսպել իրեն: 10. Ամեն ինչ մանրամասն քննարկել էին և որոշել էին չմասնակցել այդ հանդիպմանը:

3. Կազմել տեքստ «Թագավորն ու ծերունին» վերնագրով՝ կիրառելով ստորադասական և ըղձական ներկա-ապառնի ժամանակաձևը և յջոռւ դերանունը:

4.Նախադասությունների անորոշ դերբայը փոխարինել ստորադասական կամ ըղձական ներկա-ապառնիով.

1. Բə ցəror oməbim həni hiçvaxt de əy gəp niyəy.
2. İminə vəzir elonış karde ki, hoziye bəştə milləti hejo xidmət karde.
3. Xahiş kardedəm, cəhd bıkən çımı gin bə zoə pəydo karde!
4. Çumçiko se ruj be ki, bərkə voə voyedəbe, məcbur bim de ցətəri bə Lankon şe.
5. Çımı moə ısıt noxəşine, bəbe de şımə bə teatr ome?

Քերականություն

23.1. Pie «սիրել/ցանկանալ» բայը

Թալիշերենի բայական համակարգում *pie սիրել, ցանկանալ* բայը հատուկ տեղ է զբաղեցնում, քանի որ խոնարհման հարացույցով տարբերվում է բոլոր մյուս բայերից. եթե մյուս անցողական բայերն ունեն երգատիվ խոնարհում միայն անցյալ կատարյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերում, ապա *pie* բայի դեպքում ողջ հարացույցը երգատիվ կառուցվածք ունի, հետևաբար այն բոլոր նախադասությունները, որոնցում ստորոգյալի դերում հանդես է գալիս *pie* բայը, ունեն երգատիվ կառուցվածք, այսինքն՝ ենթական դրվում է թեք հոլովով, ուղիղ խնդիրը՝ ուղղական հոլովով, իսկ որպես դիմային վերջավորություններ կիրառվում են անձնական-կցական դերանունները (*pie* բայի խոնարհման հարացույցը տե՛ս հավելված 2-ում), օրինակ՝

Çımı dili çayış piedə.	<i>Միրտս թեյ է ուզում:</i>
Məryəmi ə zoə piedəşnibe.	<i>Մարիամն այդ տղային չէր սիրում:</i>

Երբ *pie* բայը *ուզենալ, ցանկանալ* իմաստով կիրառվում է որպես եղանակավորող բայ, դրա հետ առավել հաճախ կիրառվում ստորական եղանակի ներկա-ապառնին, բայց երբեմն կարող է կիրառվել նաև անորոշ դերբայը՝

Mı piedəm imruj bə Ostoru bışum.	<i>Ուզում եմ այսօր Ասթարա գնալ:</i>
Votedən ki, əy piəşe intihor bıxə.	<i>Ասում են, որ նա ցանկացել է ինքնասպան լինել:</i>
Əvon i virədə de iyəndi jie piedəşonni.	<i>Նրանք չեն ցանկանում միասին նույն տեղում ապրել:</i>
Çəmə məmləkətədə huğuğiye dovlet bərgəror karde piedəmonne.	<i>Ցանկանում ենք մեր երկրում իրավական պետություն հաստատել:</i>

Արդի թալիշերենում նկատվում է երգատիվ համակարգի քայքայման միտում, և հաճախ առօրյա խոսքում երգատիվ ու նոմինատիվ կառույցները բաղադրված են, ուստի երգատիվ նախադասություններում, որտեղ

որպես ստորոգյալ հանդես է գալիս *pie* բայը, ենթական ակնկալվող թեք հոլովի փոխարեն կարող է կիրառվել ուղղականաձև, օրինակ՝

Pidəme az ə kinə, tolişə kinə.

Միրում եմ ես այդ աղջկան, թալիշ

աղջկան:

*Ozbəkistoni ı İroni nati hirie
pidəşə.*

Ուզբեկստանը ցանկանում է Իրանից

նավթ գնել:

Վերոբերյալ օրինակները նաև ցույց են տալիս, որ սահմանական եղանակի ներկա ժամանակաձևում *pie* բայի խոնարհման ժամանակ անորոշ դերբայի *e* վերջավորությունը ընկնում է, և ձև հետադրությունը կցվում է բայահիմքին՝ *pidəme ուզում եմ/սիրում եմ*, *pidə ուզում ես/սիրում ես*, *pidəşə ուզում է/սիրում է* և այլն:

23.2. Անցյալ անկատար II

Որևէ անցյալ ժամանակում կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն ցույց տալու համար թալիշերենում կիրառվում է սահմանական եղանակի երկու ժամանակաձև, որոնք պայմանականորեն անվանում ենք անցյալ անկատար I և անցյալ անկատար II: Դրանցից առաջինն արդեն քննարկել ենք, այժմ անդրադառնանք երկրորդ ժամանակաձևին: Այն կազմվում է բայահիմքին (երկհիմք բայերի դեպքում՝ ներկայի հիմքին) ավելացնելով *ə-* նախածանցը և հետևյալ դիմային վերջավորությունները՝

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	-im	-imon
2-րդ դեմք	-iş	-iyon
3-րդ դեմք	-i	-in

օրինակ՝ *əvotim ասում էի*, *əşiş գնում էիր*, *əhiti քնում էր*, *əşiştimon լվանում էինք*, *əlarziyon դողում էիք*, *əmandin մնում էին* և այլն: Եթե բայահիմքը վերջանում է ձայնավորով, դիմային վերջավորությունների *i* ձայնավորը հնչյունափոխվելով դառնում է *y* կիսաձայն՝ *əkəym անում էի*, *ədəys տալիս էիր*, *əkuyon խփում էին* և այլն:

Նախդրավոր բայերի անցյալ անկատար II ժամանակաձևի կազմության ժամանակ Ձ- նախածանցը դրվում է նախդիրի և բայահիմքի միջև, օրինակ՝ *dəṣim mənnum lēh*, *eḥaṣtiṣ kəhnum lēh*, *oəṣxi qēṣṣanum lēh*, *peəṣomimon hūnum lēh*, *beəḡandiyon qēnūm lēh* և այլն:

Թալիշերենում ձայնավորով սկսվող բայերի մեծ մասը *o* և *e* նախդիրներով կազմված բայերն են, որոնց մասին արդեն խոսվեց: Մյուս ձայնավորներով սկսվող բայերի թիվն անհամեմատ քիչ է, և այդ դեպքում անցյալ անկատար II ժամանակը կազմելիս Ձ- նախածանցը հիմնականում սղվում է, օրինակ՝ *aṣmardimon hawṣum lēh*, *asbardin hānānūm lēh* և այլն:

Ձայնավորով սկսվող բայերի մեջ այս ժամանակաձևի կազմությամբ առանձնանում է *ome qaw* բայը. այս բայի *o* ներկայի հիմքը Ձ- նախածանցից հետո դառնում է *vo*՝ *əvoyṣ qawṣu lēh*, *əvoys qawṣu lēh*, *əvoy qawṣu lēh*, *əvoymon qawṣu lēh*, *əvoyon qawṣu lēh*, *əvoyn qawṣu lēh*: Նույն սկզբունքով է կառուցվում այն նախդրավոր ու բարդ բայերի անցյալ անկատար II-ը, որոնք կազմվում են *ome* բայից, օրինակ՝ *eəvoyn hēnūm lēh*, *bəḡəror əvoymon nṛnūm lēh* և այլն:

Անցյալ անկատար II ժամանակաձևի ժխտական խոնարհումը կազմվում է *nə*- ժխտական նախամասնիկի օգնությամբ, որի Ձ ձայնավորը և Ձ- նախածանցը միաձուլվում են, օրինակ՝ *nəḥəym ḡlṣ nūmm*, *nəḍəys ḡlṣr tawṣu*, *nəvoti ḡlṣr wūmm* և այլն:

23.3. Անցյալ անկատար II ժամանակաձևի ստորադասական եղանակախմաստային կիրառությունները

Անցյալ ժամանակում խոսողի կողմից գործողության նկատմամբ դրսևորվող ցանկալիության, ենթադրականության, կարելիության, պայմանականության կամ անհրաժեշտության իմաստային իրողությունները թալիշերենում արտահայտվում են անցյալ անկատար II ժամանակաձևի միջոցով: Այսպիսով, այս ժամանակաձևով արտահայտվում են հայերենի ըղձական անցյալ, պայմանական անցյալ և հարկադրական անցյալ ժամանակաձևերը:

Ըղձական անցյալ և պայմանական անցյալ ժամանակաձևերը հիմնականում կիրառվում են պայմանի պարագա երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններում և ցույց են տալիս խոսողի համոզմամբ կամ ենթադրությամբ անցյալում հնարավոր, բայց անհրաժեշտ պայմանի բացակայության պատճառով չկատարված գործողություն կամ եղելություն, օրինակ՝

Ehanə əvon zinə rə əvoyn, həmməy
bə ico bə şımə kə əşimon.

Əgəm tı əy əziniş, jıgo nəvotiş.

Girəm əv oəgardı, bəy çiş əvotiş.

*Եթե նրանք երեկ շուտ գային, բոլորս
միասին ձեր տուն կայցելեինք:*

*Եթե դու նրան ճանաչեիր, այդպես
չէիր ասի:*

*Եթե նա վերադառնար, նրան ի՞նչ
կասեիր:*

Բառապաշար

pie	ուզել, ցանկանալ
intihor karde	ինքնասպան լինել
huğuş(ə)	իրավական
bərgəror karde	հաստատել
nat	նավթ
orəxe	ավարտվել
bərdəşt	հարուստ, ունևոր
xıdmət karde	ծառայել
kərvon	քարավան
taniş be	ծանոթանալ
peyğombər	մարգարե
səcdə karde	երկրպագել, պաշտել
cang	պատերազմ
de minvoli	այսպիսով
əholi	բնակչություն
hicrət	գաղթ
hodisə	իրադարձություն
daşt	տափաստան,

yətim	որբ
səbin	ի լրումն, բացի
bədəvi	բեդուին
ərəb	արաբ
umjən ginie	միանալ, խառնվել
yol be	մեծանալ
vev	այրի
ticori	առևտրական
din	կրոն
təbliğ karde	քարոզել
igləli	միակ
tabe be	ենթարկվել
tabe karde	ենթարկել
xılofət	խալիֆայություն
bəvədə	այդ ժամանակ
həmdin	կրոնակից
təğvim	օրացույց
hisob be	համարվել

	դաշտ		
kuçəkə	վաչկատուն	tərəfdor	կողմնակից
ğəbilə	ցեղ, տոհմ	tobyə	ցեղ
nozil be	ի վերուստ տրվել	cəm karde	հավաքել
mıgəddəs	սուրբ	Ğiron	Ղուրամ
nımoj	նամագ, աղոթք	libos	հագուստ
lozim	անհրաժեշտ	cəlb karde,	ներգրավել
		okırnie	
gəpon,	բանակցություն	osə ğande	այցելել
mızokirə			
bumi, bınəyn	բնիկ	nez, nezəro	մտերիմ
məcəllə	օրենսգիրք	dəgiş	փոփոխություն
bəlkəməñ	գուցե	luzum	անհրաժեշտություն
vırədə, əvəzi	փոխարեն	zang/telefon	զանգահարել
		karde	
noxəşi	հիվանդություն	məhkəmə	դատարան
şəhodət	վկայություն		

Տեքստ

Məhəmməd vey bərdəştə xıyzonış hestbe, əmma əv rə yətim mande səbin bə bədəvi kuç kardə ərəbon umjən ğinie. Yol be bəpeştə əv bə ğiləy Xədicə nomədə vev mandə bərdəştə jeni xıdmət əkəy, çəy ticoriyə kərvonon bə co-co məmləkəton əromi, əyo de mıxtəlifə dinon tanış əbi. Ruji çı rujon bəy hanədə omedə ki, əv tojə dini – İslami bəpe təbliğ bıkə, çəy Peyğombər bıbu.

Məhəmməd ərəb be. Əv əvoti ki, xıdo igləliye, odəmon bəpe əncəx bəy səcdə bıkən, bə çəy votəyon tabe bıbun, de bə igləliyə Xıdo bovə nıkardə kəson cang bıkən. Ərəbon vey cang əkəyn, Asiyə, Afrikə, hətto Avropə vey xəlğon bə ıstə tabəşon karde. De jıgo minvoli ğiləy Xılofət nomədə yolə dovlətişon soxtə.

Navko ərəbon bə vey xıdon səcdə əkəyn. Çı Məkkə əholi Məhəmmədi votə igləliyə Xıdo dini dumo şe piedəşnıbe. Bəvədə Peyğombər de ıstə kali həmdinon bə co şəhər - bə Mədinə hicrətiş karde. Im hodisə 622-minə sorədə vəğə bə. Isət im sor de hicrəti bastə Hicri nomış sə iyən çı mısılmonon təğvimi iminə sor hisob bedə.

Mədinədə islamə din siftə daşti bədəviyə kuçəkəon arədə pevilə be. Məhəmməd peyğombəri tərəfdoron vey be bəpeştə, əv bə Məkkə şəhəri ogarde. İslami co-co ərəbə ғəbilon, tobyon bə i vırə cəmiş karde, əvon bə vey zumandə xəlği pegardin.

Məhəmməd peyğombəri Xıdoku nozil bə sıxanon miğəddəsə kitobədə, Ǵironədə nıvıştə bən. Əyo bə mısılmoni aid harçi heste: kəynə iyən çı curə nımoj, divo vote, çıç harde, çı curə liboson tan karde, yəni lozim bə harçi heste.

Վարժություններ

1. Կարդալ, թարգմանել, պատմել տեքստը:

2. Թարգմանել թալիշերեն.

1. Նրանք ցանկանում են բանակցություններում ներգրավել նաև այդ երկրում ապրող մյուս բնիկ ժողովուրդներին: 2. Ամեն ամառ արձակուրդներին մենք միասին Եվրոպա էինք մեկնում, այցելում էինք տարբեր երկրներ ու քաղաքներ: 3. Շատ եմ ուզում քեզ օգնել, բայց, ցավոք, ես այդ մասին ոչինչ չգիտեմ: 4. Երեկ իմ մտերիմ ընկերը մեր տանն էր, եթե չուշանայիք, դուք էլ նրան կհանդիպեիք: 5. Եթե չխոսեիք օրենսգրքի փոփոխությունների անհրաժեշտության մասին, գուցե այսօր այդպիսի լավ արդյունքի չհասնեինք: 6. Կարծում եմ՝ դու չես ցանկանում օգտվել այդ հնարավորությունից, բայց եթե ես քո փոխարեն լինեի, կհանդիպեի նրան: 7. Տատիկս էր զանգահարել: Երեկ ցանկացել է մեր տուն գալ, բայց ուժեղ անձրևի պատճառով որոշել է տանից դուրս չգալ: 8. Նախկինում արաբները տարբեր աստվածների էին երկրպագում, նրանք միակ Աստծու մասին Մուհամեդի խոսքերին չէին հավատում: 9. Ծանր հիվանդությունից հետո Փարին շատ է փոխվել: Եթե ես նրան փողոցում տեսնեի, չէի ճանաչի: 10. Դատարանում Օվշինի վկայությունը գործի համար շատ օգտակար էր: Եթե նա չասեր ճշմարտությունը, Շիրալին գուցե հիմա բանտում լիներ:

3. Տրված բայերով կազմել պայմանի պարագա երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ. hite, elon karde, vilo be, tədgığ karde, həll karde

**4. Նախադասությունների ստորոգյալի անցյալ անկատար I ժամանակաձևը
դարձնել անցյալ անկատար II և թարգմանել հայերեն.**

1. Vaxtı ki az əğıl bım, çımı pıə ha ruj bə kə ogardiyədə bomıro ğənfet vardedəbe.
2. Çımı dədə hejo votedəbe ki, de dıvo xugi hio bekarde əbını.
3. Sərvazon bo podşoro çokə xəbə vardedəbin.
4. Tı ha ruj bə kitobxonə şedəbiş, xəyli kitobon handedəbiş iyən di bə kə omedəbiş.
5. Bo bə ə diy rəsero əvon bə avtobusi penıştedəbin.
6. Akif iyən Rabil ha tovistonədə Lankoniku bə Lik şedəbin, pozədə ogardedəbin.

Քերականություն

24.1. Ապառնի կամ հարկադրական դերբայ

Թալիշերենում ապառնի կամ հարկադրական դերբայը կազմվում է միահիմք բայերի հիմքից կամ երկհիմք բայերի անցյալի հիմքին ավելացնելով -ənin վերջավորությունը, օրինակ՝ *թənin մտադրված, հարկադրված լինել գնալ*, *omənin մտադրված, հարկադրված լինել գալ*, *vindənin մտադրված, հարկադրված լինել տեսնել*, *hitənin մտադրված, հարկադրված լինել քնել* և այլն:

Թալիշերենում այս դերբայը անկախ կիրառություն չունի, մասնակցում է միայն անհրաժեշտական կամ հարկադրական 2-րդ ապառնի ժամանակաձևի կազմությանը:

24.2. Անհրաժեշտական կամ հարկադրական 2-րդ ապառնի ժամանակաձևը

Այս ժամանակաձևը արտահայտում է գործողություն կամ վիճակ, որը հարկադրաբար կամ անհրաժեշտաբար տեղի է ունենալու ապագայում: Բացի այդ՝ այն կարող է արտահայտել նաև գործողության կատարման մտադրություն կամ մեծ ցանկություն, ուստի լայն առումով համապատասխանում է հայերենի հարկադրական ապառնիին, կարող է թարգմանվել նաև որպես *մտադիր լինել*, *շատ ցանկանալ մի բան* անել: Երկրորդ ապառնի ժամանակաձևը կազմվում է ապառնի կամ հարկադրական դերբայից, որին որպես դիմային վերջավորություններ կցվում են բայ-հանգույցի համապատասխան ձևերը՝ -im, -is, -e, -imon, -iyon, -in, օրինակ՝ *mandəninim պետք է մնալ, մտադիր եմ մնալ*, *patəninis պետք է ելիես, մտադիր ես ելիել*, *koməg kardənine պետք է օգնի, մտադիր է օգնել* և այլն:

Թմə koməg kardəninimon bə iyəndi.

Տիմə bə əholi bepul xidmət
kardəninimon.

Մենք պետք է իրար օգնենք:

Դուք բնակչությանը պետք է
անվճար ծառայեք:

Tolışon dusti-dışmeni fərği zınəninin.

*Թալիշները պետք է ընկերոջ և
թշնամու տարբերությունը իմանան:*

Ժխտական խոնարհման ժամանակ ապառնի դերբայից հետո դրվում են բայ-հանգույցի համապատասխան ժխտական ձևերը՝ -nim, -niş, -ni, -nimon, -niyon, -nin, օրինակ՝ bardəninimon *չպետք է տանենք*, vardəninniyon *չպետք է բերեք*, gəp jəninnoin *չպետք է խոսեն* և այլն:

Bə tı çimi barədə votəninnim.

Մտադիր չեմ այդ մասին քեզ ասել:

Bə məktəb şəninniş?

Մտադիր չե՞ս դպրոց գնալ:

Əli ə nomə handəninni.

Ալին չպետք է կարդա այդ նամակը:

24.3. Համադասական շաղկապներ

Ըստ արտահայտած հարաբերության բնույթի շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ համադասական և ստորադասական:

Համադասական շաղկապների դերը համադաս անդամների ու նախադասությունների կապակցումն է, դրանք արտահայտում են նախադասության անդամների և բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների համադասական հարաբերություն:

Թալիշերենի հիմնական համադասական շաղկապներն են՝

İyən, və *և*, *ու*, əmma, vəli, intasi *բայց, սակայն*, -ən (կցական) *նաև, ևս, էլ, նույնպես*, ya, yaanki *կամ*, həmə... həmən *և՛... և՛*, nə... nə, nə... nəən *ոչ... ոչ, հətto նույնիսկ, yəni այսինքն՝*

Noxəşim, əmma bə ko şəninim.

*Հիվանդ եմ, բայց պետք է
աշխատանքի գնամ:*

Rabil iyoye, tınən boy!

Ռաբիլն այստեղ է, դու է՛լ արի:

Nə Vılənoz, nəən İrodə çimi həxədə
zinedənin.

*Ո՛չ Վրլանոզը, ո՛չ էլ Իրոդան այս
մասին չգիտեն:*

Բառապաշար

bepul անվճար
fərg տարբերություն

çəş dəme սիրահարվել
kumə տնակ, խրճիթ
əno նուր
dilə մեջ
mıst բուռ
şoyşo karde ուրախանալ

səhmonin հարմարավետ
rık ome զայրանալ
sorəx karde տեղեկություններ
հավաքել

vəkil թագավորի
մերձավոր անձ

kafte աղավնի
am ուս
vijnie ընտրել
votəkəs ասող, պատմող

ğələmsəkəs զրի առնող
handəkəs կարդացող
əsos գլխավոր
oko doy օգտագործել

vilo/volo քանդել
karde
kilsə եկեղեցի
omə ruj ապագա

ğəribə օտարերկրացի
ıstəku beşe ավերից դուրս գալ,
կատաղել

bədu հետևից, հետքով
ıstobən ասում են, ըստ լուրերի
yezənə, zomo փեսա
dəvə ուղտ
var-dovlət ունեցվածք
əhvolot եղելություն,
պատմություն

xəbədo be իմանալ, տեղեկանալ
səray պալատ, ապարանք
ərbob հարուստ

pəşimon be զղջալ, մտափոխվել

hurmət հարգանք
exroc be ստորանալ
tale ճակատագիր, բախտ
əzob/əzyət/k տանջվել

orığ kəşe
təsvir karde նկարագրել
siyosi քաղաքական
siyosət քաղաքականություն
məslöhət, խորհուրդ
məşvərət

şərt պայման

ğivvə, zu ուժ
etibo, ğurb հեղինակություն

Kosibə zoə nəğil

Gıləy hestbe, gıləy nıbe, gərəyz Xıdo hiçki nıbe. Gıləy məmləkətdə gıləy kosibə zoə hestbe. Im zoə çəş dəmedə bə podşo kinə. Podşo kinəən əviş piedə. Əncəx podşo votedə: “Az ıstə kinə bə kosibi ədənım”.

Vey votedən, podşo kam məsedə. Oxoədə kinə bə zoə umjən gınıedə, vitedən, şedən bə co məhol. Im məholədə boştə gıləy kumə dutedən, jiedən iyo.

Ruji zoə şedə bə vıjor. İ kilo əno sedə, vardə bə kə. Jenı-şu nıştədən bo əno harde. Kinə gıləy əno poə kardedə, əno dıləku i mışt gızıl emedə eposə. İmon xəyli şoyşo kardedən. Zoə gızılön gırdə kardedə, bardedə bə vıjor, həvatedə.

Boştə de gızılı gıləy çokə, səhmoninə boğ soxtedən.

Kinə pıə, podşo, vey nəvedə bo əvon, pəydo karde nızine bəpeştə rıkış omedə. Bino kardedə bə sorəx karde ki, çımı kinə pəydo bıkən, az de əy dust bəbem.

Im vaxt çəvon jiə məmləkəti podşo eginiedə mardedə. Vəzir, vəkil gırdə bedən ki, çiç bıkəmon. Votedən, kaftə bıpornəmon çiki amisə nışte, əy podşo bəvijniemon. Rozi bedən. Kaftə vardedən, pornedən. Kaftə pəredə, nıştədə çı kosibə zoə amisə. Vəziri bımı rık omedə, votedə:

-Im hisob ni. Im çoknə bəbe kosib, həməən gıləy gərəibə odəm bəbe bo əmə podşo?

